


Հ ՄԱՆԱՆԴՅԱՆ

ԻՌՐԵՆԱՑՈՒ ԱՌԵՂԾՎԱԾԻ
ԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԳԵՏԱՐԱՆ

1934



ՀԱԿՈՐ ՄԱՆԱՆԴՑԱՆ.

2 2301-4408 1961 թ.

90(47.925)(092 Մոսկովսկի Խորհրդային)

ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՌԵՂԾՎԱԾԻ Լ ՈՒ Ծ ՈՒ Մ Ը

1. «Աշխարհացոյց»-ը յեկ Մովսէս Խորենացիին
2. Խորենացու առեղծվածի լուծումը
3. Հավելված. Խորենացու պատմութեամբ բառապաշարը

16.231

A I
6882



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն — 1934

Պետերասի տպարան

Գլավիտ № 285 (բ)

Պատկեր № 683

Հրատ. № 2957

Տիբած 2000



Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Ձեռնամուխ լինելով սույն ուսումնասիրության (1932 թվի մայիս ամսին)՝ մեզ զբաղեցնող խնդիրն է լեզել վո՛չ թե խորենացու պատմութիւնը, այլ «Աշխարհացույց»-ի համառոտ ու ընդարձակ խմբագրութիւնների համեմատական քննութիւնը: Աշխատանքի առաջին շրջանում իմ մտքով անգամ չեմ անցնում, վոր «Աշխարհացույց»-ի ուսումնասիրության ընթացքում ստացվելու լին հետզհետե կարեոր ու ծանրակշիւ հետեութիւններ, վորոնք ուղեցույց են լինելու խորենացու առեղծվածի լուծման: Այդ հետեութիւնները, չափազանց զորավոր և աղաղակող, իրանք ելին ալուհետե թելադրում մեր ուսումնասիրության նորակերպ ծրագիրը: Յեւ հենց այս հանգամանքն է հիմնական պատճառը ուսումնասիրված նյութի ալն հատուկ դասավորության, վոր կարող է թվալ խառնակ ու անհարդար: Ինձ համար միաճամալն պարզ եր ու անվիճելի, վոր «Աշխարհացույց»-ը խորենացու աշխատութիւնն է և գրված է իններորդ դարում: Անհրաժեշտ եր, ուրեմն, հետազոտել ու լուսաբանել խորենացու ամբողջ խնդիրն այս նոր հայեցակետով: Ինքն ըստ ինքյան հասկանալի լե, վոր աշխատանքի նոր ծրագիրը հարկադրելու լեր մեզ ուղադրությամբ կանգ առնել վո՛չ միալն խորենացու պատմության, այլ և ալն հա-

կառող փաստերի վրա, վորոնք կարող եյին հիմք ծառայել տարակուսանքների ու առարկութլունների. նման հակասող փաստ եր, որինակ, խորենացու պատմության կապն Աղեքսանդրի վեպի և «Պիտոյից գրքի» հետ, վորոնք վերագրվել են խորենացուն և համարվիլ մատենադրական հնագուլն շրջանի լերկեր:

Այս վերջին խնդիրները, ինչպես կըտեսնես ընթերցողը, չեն կարող բնավ խոչընդոտ լինել սլատուության ժամանակի մեր առաջագրած վորոշման: Ընդհակառակը՝ վերոհիշյալ լերկերի ուր ուսումնասիրութլունը համոզեց մեզ, վոր Աղեքսանդրի վարքը, ինչպես և «Պիտոյից գրքի» վերջաբանը, իրանք ես գրված են իննհորուդ դարում և կարող են, հետևաբար, վերագրվել պատմության հեղինակին: խորենացու մութ ու խրթին առեղծվածը լուծվում եր այսպիսով վոչ միայն «Աշխարհացուլց»-ի, այլ և Աղեքսանդրի վեպի ու «Պիտոյից գրքի» վերջաբանի քննութլամբ:

Իբրև առարկութլուն իմ լերակացութլան դեմ կարող եր մեջ բերվել, անշուշտ, «Ողբ»-ի բովանդակութլունը: Սակայն այդ հարցը ևս քննութլան ե առնված սույն ուսումնասիրութլան մեջ և մանրամասն կերպով ցուլց ե տրված, վոր խորենացու «Ողբ»-ի վորոշ ակնարկները հասկանալի լեն Բուդալի արշավանքից հետո և վերաբերվում են, գլխավորապես, քաղաքական ու յեկեղեցական ալն անցքերին, վոր տեղի եյին ունեցել Հայաստանում հենց նուլն իննհորուդ դարում: Հատկապես Բուդալի արշավանքից հետո բնական ու հասկանալի յե դարձյալ խորենացու հունասեր ուղղութլունը, վոր առանձնապես շեշտվիլ ե խորենացու քննադատների կողմից:

Մեր ուսումնասիրության մեջ հատուկ հավելվածում մանրամասն քննված է նույնպես խորենացու պատմության լեզուն: Պատմության բառապաշարի մեջ մենք մատնանշել ենք բազմաթիվ բառեր վե՛լ միայն հունաբան թարգմանությունների, այլ և անգամ միջին հայերենի:

Խորենացու ժամանակի վորոշման համար, ինչպես տեսնում ենք, ապացույցները բազմաթիվ են ու համոզիչ: Հաստատվում է ուրեմն, վոր խորենացու պատմությունը, ինչպես այդ ճիշտ դիտել է ու մատնանշել Մարկվարտը, հորինված է յեղել իշխանաց իշխան Աշոտի ժամանակ, «Իբրև հայերի» հավկական նոր թագավորության, վոր ստեղծվելու յեր իններորդ դարում:

Խորենացու պատմության քաղաքական այդ բնույթը մենք պարզելու յենք մի նոր հոգվածում, վորի մեջ ի նկատի յենք առնելու պատմության այն փաստական տվյալները, վորոնք պարզ ու վորոշ ապացուցանում են խորենացու հատուկ միտումները:

Հ. Մ.

Ծանոթ. — Պրոֆ. Հ. Մանանդյանն իր այս ուսումնասիրությունը ղեկուցել է Կուլտուրայի Պատմության Ինստիտուտի պատմության սեկտորում 1933 թվին: Զեկուցումից հետո տեղի ունեցավ մտքերի փոխանակութուն:

Հրատարակելով պրոֆ. Հ. Մանանդյանի այս շահեկան ուսումնասիրությունը, Ինստիտուտն առաջիկայում կանդաքառնա ԼՍՍՀ-ի խորենացու «Հայոց Պատմության» խնդրին, լույս ընծայելով առանձին դրքով նիստերին տեղի ունեցած մտքերի փոխանակությունը:

ՀՍԽՀ Կուլտուրայի Պատմության Ինստիտ

«ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ը

ՅԵՎ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ

THE UNIVERSITY OF CHICAGO
PRESS

1. «Աւխարհացոյց»-ի նրա տարակուսքյունները յետ նրանց բերությունները:—Մովսես Խորենացուն վերագրված «Աշխարհացոյց»-ը, վոր կարող է ոգտագործվել իբրև աղբյուր Հին Հայաստանի և Առաջավոր Ասիայի ներքին ու տնտեսական կյանքի ուսումնասիրության, թեև լույս է տեսել մի քանի հրատարակությամբ, սակայն այդ հրատարակությունները, ինչպես կը տեսնենք, չեն կարող բավարար համարվել. ուստի և անհրաժեշտ է ձեռնարկել կարևոր այդ յերկի քննական հրատարակության ներքև մատնանշված նոր հիմունքներով, վոր անտես են առնված լեղած հրատարակություններում:

Վորքան ինձ հայտնի յե, «Աշխարհացոյց»-ն ունեցել է մինչև այժմ տասը հրատարակություն:

Առաջին տպագրութիւնը լույս է տեսել «Գիրք աշխարհաց և առասպելաբանութեանց, որ է Աղուէսաղիրք» ժողովածուի մէջ «Յամսթէլօտամում» 1668 թվին:

Յերկրորդ տպագրութիւնը լույս է տեսել «Աղուէսագրքի» Մարսիլիայի արտատպության մէջ 1683 թվին¹:

Յերրորդ հրատարակութիւնը լեղել է դարձյալ

¹ «Աղուէսագիրք»-ը, ըստ յերևութիւն, հրատարակված է Մարսիլիայում նաև 1776 թվին. ահա Н. Марр, Сборники прятч Вардана, I, С-Петербург. 1899, 42 99:

«Աղուէսագրքի» նոր արտատպության մեջ 1698 թվին, Պատկանյանը և Կրումբախերը յերրորդ այս հրատարակության տեղը յենթադրում են Շլմիաժնում¹, վոր, անշուշտ, սխալ է: Իսկ Զարրհանալւանի ասելով՝ «Իէպէտ տպագրութեան քաղաքը շնշանակուիր, սակայն հաւանականաբար կամ ի Լիվոռնոյ եղած է՝ և կամ ի Կոստանդնուպօլիս» (տես «Հայկական մատենագրութիւն», Վենետիկ 1883, էջ 273):

Զորրորդ տպագրութիւնը լույս է տեսել Խորենացու պատմության հետ միասին 1736 թվին Վիստոն լեղբայրների ձեռով, վորոնք «Աշխարհացոյց»-ի հայերեն բնագրին կից տվել են նաև նրա լատիններեն թարգմանութիւնը: Լոնդոնի այս հրատարակության մեջ արժեքավոր են առանձնապէս Վիստոն լեղբայրների ծանոթութիւնները և բնագրի մի քանի մութ հատվածների լուսաբանումները հույն աշխարհագիրների յերկերի ոգնութիւամբ: Զորրորդ այս հրատարակութիւնն անփոփոխ արտատպված է վերոհիշյալ Մարսիլայի տպագրից:

Հինգերորդ հրատարակութիւնը տպագրված է նույնպէս Խորենացու պատմության հետ միասին 1752 թվին Վենետիկում: Առաջաբանի մեջ ասված է՝ «Կամեցաք ի միասին տպել և զհամառօտ Աշխարհացոյցն՝

¹ См К. Патканов. Из нового списка географии, приписываемой Меисею Хоренскому, ЖМНП, СПб 1883, июнь 226, էջ 21. նաև Krumbacher, Geschichte der byzantinischen Literatur, München 1897, էջ 411:

² Հրատարակված է, իրոք, Լիվոռնոյում, տես Н. Марр, Сборники притч Вардана, I, С-Пет. 1899, էջ 101:

արարեալ... Մովսիսի խորհնացոյ... եւ լաղաքս չունելոյ մեր աստ զձեռագիր գաղափար, միայն ի Յամստեյօղամ տպագրեցելոյն օրինակեցաք»:

Վեցերորդ տպագրութեան հրատարակիչը, Ֆրանսիացի հայտնի հայագետ Սեն-Մարտենը, հայանում ե նույնպէս, վոր Մարսիլիայի և Լոնդոնի տպագրութուններից հետո ուրիշ ձեռագիր չե ունեցել, ուստի հարկադրված ե լիզել արտատպել նույն ալդ բնագիրը, ուղղելով ակներե վրիպակները: Սեն-Մարտենի այս հրատարակութունը հայերեն բնագրի հետ զույգ ունի Ֆրանսերեն թարգմանութուն, բազմաթիվ կարևոր ծանոթութուններով (տես Mémoires historiques et géographiques sur l'Arménie, II, Paris 1819, էջ 301—394):

Վերոհիշյալ վեց տպագրութւոյնները, ինչպէս տեսնում ենք, արտատպված են մեկը մյուսից և ծագում են, անտարակույս, սխալաշատ մի ձեռագրից, վորն ունեցել ե արտագրողների կողմից ներմուծված հավելումներ և ընդմիջարկութւոյններ:

Ի նկատի ունենալով հնագույն այս հրատարակութւոյնների թերութւոյնները Վենետիկի Միթարյանները անհրաժեշտ ելին համարել տալ «Աշխարհացոյց»-ի ուղղված բնագիրը մի քանի ձեռագրերի համեմատութւամբ:

«Ի համեմատութենէ վեցից գրչագիր օրինակացս—ասված ե այս չոթերորդ հրատարակութեան առաջաբանում—ընտրեալ զհարազատ ընթերցուածսն ուր բազումք միաբանէին և կամ ընտիրքն և հինք, զայլս ի կարևորաց խնամով ի սաորևս ամփոփեցանք» (էջ 8): Սակայն ալդ վեց անթվական ձեռագիրների համարները, դժբախտաբար, չեն նշանակված և տարբեր ըն-

թերցվածները դրված են ծանոթություններում անորոշ ձևով՝ «մի օրինակ, երկու օրինակ» և այլն: «Աշխարհացոյց»-ի ճշտված բնագրի այս կարևոր հրատարակությունը լույս է տեսել Վենետիկում 1843 թվին «Մովսես Խորենացու մատենագրությունք» ընդհանուր վերնագրի տակ, վորի մեջ բացի Խորենացու պատմությունից մտնում են նաև նրան վերագրված մյուս լեռկերը:

Ութերորդ տպագրությունը յեղել է դարձյալ Վենետիկում 1865 թվին: Այս հրատարակությունն անփոփոխ արտատպված է «Մատենագրությունք» նախորդ տպագրից:

Վենետիկի 1843 թվի տպագրությունը հիմք է ծառայել Պատկանյանի իններորդ հրատարակության (տե՛ս Армянская география VII века, СПб. 1877): Պատկանյանը մի քանի տեղ հաջող կերպով ուղղագրել է բնագիրը և դրել ներքևում կարևոր ծանոթություններ: Ուշագրավ են և առանձնապես արժեքավոր Պատկանյանի բացատրական այն ծանոթությունները, վոր զետեղված են «Աշխարհացոյց»-ի ուսերեն նրա թարգմանության ներքևում:

«Աշխարհացոյց»-ի առաջին հինգ հրատարակությունները, նաև յոթերորդն ու ութերորդը, ունեն ձեռագիրների համաձայն հետևյալ վերնագիրը՝ «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացու»: Սակայն Սեն-Մարտենը և Պատկանյանը, լինթադրելով Խորենացուն հինգերորդ դարի մատենագիր և համարելով «Աշխարհացոյց»-ը հետագա դարերի աշխատություն, իրանց հրատարակությունների մեջ փոխել են այդ վերնագիրը և դրել նոր վերնագիր: Սեն-Մարտենի հրատարակու-

թիւն մեջ «Աշխարհացոյց»-ի վերնագիրն ե՛ «Աշխարհացոյց ստոյ Մովսիսի Խորենացւոյ», իսկ Պատկանյանի հրատարակութիւն մեջ «Աշխարհացոյց Է. դարու»։ Շատ պարզ է, վոր նրանք «Աշխարհացոյց»-ի ավանդական վերնագիրը յենթարկել են կամայական փոփոխութիւն իրանց յենթադրական կոահուկներէ համեմատ։ Նախնական բնագրի քմահաճ ու լռելլայն այս փոփոխութիւնը, վոր կարող է մոլորեցնել ընթերցողին և առիթ ծառայել թլուրիմացութիւններէ, անտեղի յի, անշուշտ, և միանգամայն անթույլատրելի։ Ներքև մենք կը տեսնենք, վոր հավանական են և ընդունելի վո՛ր թի փոփոխված այս վերնագիրները, այլ ձեռագիրներէ մերժված հենց հին վերնագիրը, վորը հաստատվում է ըստ իս նոր ավլալներով, վոր մանրամասն քննութիւն ենք առնելու սույն ուսումնասիրութիւն մեջ։

«Աշխարհացոյց»-ի տասերորդ տպագրութիւնը լույս է տեսել Վենետիկում 1881 թվին Սուքրյանի ձեռով։ Հայերեն բնագրի հետ միասին Սուքրյանը տպել է նաև նրա ֆրանսերեն թարգմանութիւնը։ Հրատարակութիւնը կատարված է բոլորովին նոր ձեռագրից, վոր մեծ տարբերութիւններ ունի նախկին տպագրութիւններից։ Նոր այս ձեռագրում «Աշխարհացոյց»-ի բնագիրը շատ ավելի ընդարձակ է, քան առաջին իննը հրատարակութիւններում, վոր կազմում են նախնական բնագրի համառոտ խմբագրութիւնը։ Ընդարձակ այս խմբագրութիւնն անհրաժեշտ էր, անշուշտ, համեմատել համառոտի հետ, ուղղել յերկուսի վրիպակները և ազճատված ընթերցվածները, նաև քննել «Աշխարհացոյց»-ի այն սկզբնական բնագրի կամ բնագրերի

հարցը, վորոնցից ծագել են այժմյան խմբագրութիւնները: Այդ աշխատութիւնը, վոր կարևոր նշանակութիւն ունի «Աշխարհացոյց» ի բնագրի վերականգնման համար, մինչև այժմ դեռ չեն կատարված: Իսկ առանց այդ աշխատութեան՝ «Աշխարհացոյց»-ի այժմյան հրատարակութիւնները, վոր փոխադարձաբար իրար ուղղում և լրացնում են, չեն կարող, բնականաբար, համարվել բավարար և գոհացուցիչ:

2. «Աբխազացոյց»-ի նախնական բնագիրը, վորից ծագել են վերոհիշելի խմբագրութիւնները:— Պրոֆ. Մարկվարտն իր Eranschahr աշխատութեան մեջ (Berlin 1901, էջ 4) յենթադրում է, վոր Սուքրյանի հրատարակութիւնն «Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագիրն է, իսկ նախկին տպագրութիւնները, վոր ծանոթ ելին առաջ, նույն այդ բնագրի աղքատիկ ու վատ համառոտութիւնն են: Այս յեզրակացութեան նա հանգել է, բազդատելով իրար հետ ընդարձակ ու համառոտ խմբագրութիւնների իրանի վերաբերյալ հատվածները: „Der Abschnitt über Iran würde allein zu dem Beweise genügen — *ասում է նա* — dass die vollständigere Rezension (A) den ursprünglichen Text des Werkchens enthält,.... wogegen die abgekürzte Rezension (B) ein dürftiger und schlechter Auszug daraus ist (էջ 4). Մարկվարտի այս կարծիքն ըստ իս ճիշտ չէ¹: Նա բո-

1 Հետագայ իր աշխատութիւններում Մարկվարտը հրաժարվել և վերոհիշյալ իր յենթադրութիւնից և հանգել է ճիշտ յեզրակացութեան, վոր «Աշխարհացոյց»-ի այժմյան խմբագրութիւնները համառոտված են իրարից անկտի նախնական ընդարձակ բնագրից: Կ. Մլաք, Zur Geschichte des Ps. Moses Chorenatsi, Armeniaca, II, 1927, էջ 128. Հմմտե Markwart, Изв. Рус. Арх. Инст в Конст. 15 (1911) էջ 15, ծան. 2):

լորովին այլ լեզրակացության կրհանգեր, յեթե համեմատեիր իրար հետ վոյթե Իրանի վերաբերյալ համապատասխան հատվածները, վորոնց մեջ նկատելի լեն հետագայում կատարված փոփոխություններ, այլ «Աշխարհացոյց»-ի այն մասերը, վորոնք չեն լենթարկվել նման փոփոխության:

Սուքրլանի հրատարակած բնագրի համեմատությունը համառոտի հետ պարզ ցույց ե տալիս, վոր տպագրված լերկու հրատարակությունն ել համառոտված են «Աշխարհացոյց»-ի նախնական շնդարձակ բնագրերից, վորոնք ծագում են հնագույն մալր բնագրից: Ավելի քան հավանական ե, ուրեմն, վոր «Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագիրը, վոր մեր ձեռքը չե հասել, շատ ավելի ընդարձակ յեղած պիտի լիներ, քան այժմյան տպագրությունները: Այդ լեզրակացության հանգելու հիմք են ծառայել ինձ հետևյալ նկատառումները, վոր թվում են ինձ ուշագրավ ե կարևոր.

ա. Վենետիկում տպագրված «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրությունը (համաձայն Մարկվարտի համառոտագրության անվանելու յենք V) ունի հատվածներ ե լրացումներ, վորոնք չեն կարող ընդմիջարկություններ լինել, քաղված են, անտարակույս, նախնական բնագրից ե պակասում են Սուքրլանի հրատարակած բնագրում (համաձայն Մարկվարտի համառոտագրության անվանելու յենք S): Այդպիսի հավելումներ ու լրացումներ են, որինակ, V-ի մեջ հետևյալ հատվածները.

1. V 587,16 — 588,3. «Որպէս Պտղոմէոս Կղաղէոս Հափեալ ասպարիզօք... ալլ ըստ յարաբարձր լերանց տեսությանց».

2 V 594,3—8. Յորում [Իրեռնիայում] գետք հզօրք վեշտասան և ազգք բազումք, Իսկ անուն արևելեան կղզւոյն [Բրիտանացւոցն] Ալուիոն, որ է մեծ քան զնա. և է ազրակաճ և բազմաճիւղ. յորում գետք հզօրք քսան և մի, և յոյժ մեծածառան տառս. և շուրջ զկղզեաւն մանունք կղզիք քառասուն և երկու, և Թուլիս մեծ կղզի¹.

S 14 20—22. Շետք հզօրք վեշտասան և ազգք յորով: Անուն մի[ւս]ոյ կղզւոյն Ալուիոն, եւ ի մէջ հրկուց կղզեացն փոքունք կղզիք չորս:

3. V 594,11—16. Շւ բաժանի Գաղղիա յաշխարհս երիս. յորում լերինք մեծամեծք երկու և գետք հզօրք քսաներէն, և կղզիք շուրջ զիւրեւ—երեք տասան: Ունի քաղաքս և ազգս բազումս և հզօրս¹, և զազգն Փռանգաց, լինի ի նմա դոմէշ սպիտակ և սպանոյ:

S 14,35 — 15,2. Շւ են ի Գալիուս լերինք մեծամեծք և գետք քսաներէն. զութ ի Յունաց ծովն արձակէ և զքսանեմի յովկիանոս. լինի ի նմա սպիտակ և սպանոզ գոմէշ: Եւ ունի զհզօր ազգն Փռանկաց. որոց հասարակն ի Գալիուս և հասարակն ի Գերմանիա բնակեն:

4. V 594,19—22. Շւն ի [Գերմանիա] ազգւս և թն, յորոց մին Գուդք¹, Ունի լերինս անուանիս երիս և գետս հզօրս մետասան,

¹ Ընդարձակ S խմբադրությունը չունի V-ի ըրել տպւած կարեւոր հատվածները: Կարծիքս, որ քաղված են նախնական բնագրից:

և կղզիս ինն, և անտառս մեծածառս լոյժ, և լերկաթակտրութիւնս».

S 15,5—8. Երալց ունի լերինս անուանիս երիս
և գետս հզօրս մետասան. զերկուսն ի Դանոր
արձակէ. ունի և անտառս չորս, լոյժ մեծածառք.
ունի և զՍատրաբէն դաշտն եւ զԻլիմացւոց անա-
պաան. ունի եւ ձի վարի».

V-ի մեջ նման հավելումները, վոր քաղված են,
մեծ մասամբ, նախնական բնագրից, խիստ շատ են:
Սակայն մեջ բերված ալս բաղդատություններն իսկ
ցույց են տալիս, վոր V խմբագրությունը, ինչպես և
S ընդարձակ խմբագրությունը, համառոտություններ
են նախնական մեզ անհայտ բնագրի. Հավելվածների
մի մասը կարող են, իհարկե, ներմուծված լինել V և
S համառոտությունների մեջ խմբագրողների կամ ըն-
դորինակողների կողմից, սակայն այդպիսի ընդմիջար-
կությունները, ինձ թվում ե, համեմատաբար շատ
չեն, ե հավելվածների մեծագույն մասը ծագում են,
հավանորեն, «Աշխարհացոյց» ի սկզբնական ընդար-
ձակ բնագրից:

Բ. «Աշխարհացոյց»-ի Ասիայի վերաբերյալ մասում
S ընդարձակ խմբագրության մեջ պակասում են մի
շարք լերկիրների մասին ամբողջ հատվածներ, մինչ-
դեռ այդ հատվածները պահպանվել են V համառոտ
խմբագրության մեջ. Հավանական ե, վոր V-ի խմ-
բագրողն այդ հատվածներն ես քաղել ե սկզբնական
ընդարձակ բնագրից:

S ընդարձակ խմբագրության մեջ չըկան, ինչպես
հայտնի լե, V համառոտ խմբագրության հետևյալ
գլուխները.

1) Զ. Ուորիա — եջ 601,8—13. 2) Ժ. Պամ-
փիդիա — եջ 601,27 — 602,3. 3) ԺԳ. Կապագովկիա
երկրորդ — եջ 602,14—17. 4) Ի. Առաջին Հայք—
եջ 603,19—23. 5) ԻԱ. Երրորդ Հայք—եջ 603,23—26.
6) ԻԲ. Պոնտոս Կապագովկիոյ — եջ 603,27—604,2.
7) ԻԷ. Փայտակարան և Ուտի — եջ 609,20—610,9.
8) ԼԳ. Անապատ Արաբիա — եջ 612,9—13. 9) ԼԶ.
Արուստտան — եջ 613,7—9.

գ. Վոր «Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագիրը
չառ ավելի ընդարձակ և յեղել, քան այժմյան նրա
V և S համառոտությունները, այդ յերևում և բացի
վերոհիշյալ նկատառումներից նաև V և S խմբագրու-
թյունների հետևյալ ուշագրավ ակնարկներից: Սպա-
նիալի վերաբերյալ գլխում V և S խմբագրությունների
մեջ կան հետևյալ հատվածները, վորոնք քաղված են
վորոշ փոփոխությունով նախնական ընդարձակ բնագրից.

V 593,27—31. «Եւ ոչ միայն զգաւառս և զքա-
ղաքս, ալ և խորհեցաք միայն գրել զլերինս
անուանիս և զգետս հզօրս և զքաղաքս հոյակապս,
և եթէ ալ ինչ նշանաւոր իցէ, թողլով ի բաց
զթիւս և զչափս և զմանրամասնաբար պատմու-
թիւնս».

S. 14,13—15. «Բայց գրեմք զգետս միայն ան-
ուանիս և զքաղաքս հոյակապս, զանց արարեալ
զաննշանօքն»:

Ուշագրավ և սակայն, վոր հակառակ այս վկայու-
թյունների V խմբագրության մեջ Սպանիալի քա-
ղաքներից և գետերից և վոչ մեկը չեն հիշատակված,
իսկ S խմբագրության մեջ հիշատակված չեն Սպա-
նիալի քաղաքները: Հավանական և թվում ինձ, վոր

Սպանիայի քաղաքների և գետերի մասին նախնական ընգարձակ բնագրում կալող ելին հաղորդված վրենլ վորոշ տեղեկութուններ, վոր բաց են թողնված V և S համառոտ խմբագրութուններում:

դ. Ներքև մենք կըտեսնենք, վոր խորենացու պատմության կարևոր աղբյուրներից մեկը յեղել է «Աջխարհացոյց»-ը և վոր հենց ինքը խորենացին համարվելու յե, հավանորեն, «Աջխարհացոյց»-ի հեղինակը: Արդ՝ ինչպես հայտնի յե, խորենացին իր պատմութւան մեջ ունի հետևյալ հատվածը, վորի աղբյուրը, անուարակուլս, «Աջխարհացոյց»-ն է՝

I, 30, Տփղիս 1913, էջ 83 — 84. «զոր պատմեն՝ որք բազմաշրջութեամբ հրամանաւ Պըտղոմեայ ասպարիսօք զբնակութիւնս մարգկան չափեցին, այլ և մասն ինչ զծով և զանբնակս յԱյրեցածէն մինչև ցՔիմիւռոն».

Հիմտե V 589,10—20¹. «Բայց Պտղոմէոս, որոյ արք բազմաշրջութեամբ զամենայն չափեցին» (տես նաև S 7,28—29).

V 587,15—22¹. «Որպէս Պտղոմէոս Կղաղէոս չափեալ ասպարիզօք զամենայն բնակութիւն մարգկան երկայնութեամբ՝ յարեմտից սկիզբն արարեալ, որ է ծով անծանօթ Ովկիանոս... և լայնութեան սկիզբն արարեալ յԱյրեալ զօտուին».

տես նաև «Այրեցած» V 585,20 և S 5,14:

խորենացու վկայության մեջ ասված է, վոր Պտո-

¹ V խմբագրության սույն հատվածները մատնանշել է իբրև խորենացու պատմության աղբյուր Գ. Խալաթյանցը, տես Армянский эпос, Москва 1896, I, էջ 191—192 և II, էջ 49:

լեմեոսի հրամանով չափել են «զբնակութիւն մարդկան» «Այրեցածէն մինչև ցՔիմիւռոն», մինչդեռ V և S խմբազրութիւնները մեջ «Քիմիւռոն»-ի մասին չկոչվում էին մի հիշատակութիւն։ Խորենացու հատվածում կարևոր այս շեղումն «Աշխարհացոյց»-ի այժմյան բնագրերից բացատրվում է, իմ կարծիքով, նրանով, վոր Խորենացին ոգտվել է «Աշխարհացոյց»-ի վոչ թե այժմյան, ալլ նախնական ընդարձակ բնագրից, վորի մեջ յեղել է, հավանորեն, նաև «Քիմիւռոն»-ի վերաբերյալ համապատասխան մի վկայութիւն։

Մեր ալս դիտողութիւններից յերևում է, վոր «Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագիրն իր բովանդակությամբ յեղել է ավելի ընդարձակ, քան անգամ այժմյան S ընդարձակ բնագիրը, վորը՝ համառոտված լինելով նախնական ընդարձակից՝ ունի կարևոր կրճատումներ, վորոնք հայտնի լեն մեզ այժմյան V խմբազրութիւնից։ Հարկանցի իսկ քննութիւնը ցուլց է տալիս, վոր V համառոտ բնագրի ալդ հավելվածները քաղված են, մեծ մասամբ, նախնական բնագրից և չեն կարող լինել հետագա ընդմիջարկութիւններ։

Նոր ալս յեզրակացութիւնից ինքնին արդեն հետևում է, վոր միանգամայն անհնարին է վերականգնել «Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագիրը նախկին իր լրիվ ծավալով։ Սակայն V և S խմբազրութիւնների մանրամասն բաղգատությամբ կարելի լէ, անշուշտ, տալ «Աշխարհացոյց»-ի համեմատական մի նոր ընդարձակ բնագիր, վորն ավելի մոտ կըլինի նախնական բնագրին, քան նրա այժմյան V և S համառոտութիւնները։

3. «Աւխարհացոյց»-ի նախնական բնագիրը կազմված է յեղել Բաղվածօրեմ գանազան ասորիւնքից: — «Աշխարհացոյց»-ի նախնական բնագիրը, ինչպէս յերևում է այժմյան V և S խմբագրութիւնների բովանդակութեան քննութիւնից, կազմված է յեղել վանազան աղբուրներից, վորոնք, մեծ մասամբ, հիշատակված են V և S համառոտութիւններում: Հայերեն «Աշխարհացոյց»-ի հենց սկզբում հեղինակը պարզ ասում է, վոր «յաստուածաշունչ գիրս ո՛ր գտանի կատարեալ գիտութիւն աշխարհաց», ուստի հարկադրված է ինքը «ձեռնարկել յարտաքինսն» (տես S 5 2—4, հմտե նաև V 585, 3—7): V և S խմբագրութիւններում մի քանի անգամ վորոշակի հիշատակված է նաև «Աշխարհացոյց»-ի հիմք ծառայած գլխավոր «արտաքին» աղբուրը հետևյալ հատվածներում.

ա. V 587, 29 — 588, 3. «Յորոյ [Պտղոմէոսի] ինքնադիր բոլորակին տիեզերագրութեանցն առեալ Պապայ Աղեքսանդրացոյ համառօտաբար երկրագրութեամբ, յորմէ մեր ծայրաքաղ արաբեալ գրեցաք զմեծամեծսն և զնշանաւորսն միայն».

S ընդարձակ խմբագրութեան մեջ այս հատվածը պակասում է:

բ. V 590, 26—28. «Արդ սկսցուք ըստ Պապայ Աղեքսանդրացոյ երկրագրութեանն որ ըստ ինքնադիր բոլորակին Կղաղեայ Պտղոմէի տիեզերագրութեանցն չափուց».

Նույնն ունի նաև S եջ 9, 19—21:

գ. V 593, 14—19. «Եւ արդ որովհետեւ բովանդակեցաք զհասարակախօսութիւնն, այսուհետեւ սկըս-

ցուք պատմել աշխարհ աշխարհ առանձինն ըստ
դրիցն տեղագրութեանց Պապայ Աղեքսանդրաց-
ւոյ, սկիզբն արարեալ յարեմտեայ Ովկիանոսէ ի
ծալիլէն Սպանիոյ աշխարհին».

Հմմտե նաև S 13,30 — 14,4:

Պապպոս Աղեքսանդրացին, վոր վերոյ/շլալ վկայու-
թյուններում մատնանշված ե իրրև «Աշխարհացոյց»-ի
հիմնական աղբյուր, ապրել ե, ինչպես վկայում ե
Suidas-ը, չորրորդ դարի վերջում՝ Թեոդոս Մեծի
(379 — 395 թ.) ժամանակ և զրել ե ընդհանուր աշ-
խարհագրություն՝ *Χωρογραφία οἰκουμένης*, Հիմնվելով
սակայն մի քանի նոր ցուցումների և վկայությունների
վրա՝ չավանական են համարում այժմ, վոր Պապպոսի
ժամանակը պետք ե լենթադրել վոչ թե Թեոդոս Մե-
ծի, ալլ Դիոկղետիանոսի կայսրության ժամանակ՝
(284 — 305 թ.):

Սեն-Մարտենի կարծիքով (*Mémoires* II, եջ 304 —
305)՝ «Աշխարհացոյց»-ի հայ հեղինակը, թեև հիշա-
տուկում ե հաճախ Պտղմեմեոսին, սակայն Պտղմեմեոսի
աշխարհագրության հատվածները նա քաղել ե վոչ թե
անմիջապես սրա լերկից, ալլ Պապպոսի *Χωρογραφία*-ից,
վորն «Աշխարհացոյց»-ի մեջ ևս անվանված ե «Երկ-
րագրութիւն»։ Նույնպես և Պատկանյունը, վոր ման-
րամասն համեմատել ե «Աշխարհացոյց»-ի համապա-
տասխան հատվածները Պտղմեմեոսի վկայությունների
հետ, ընդունում ե Սեն-Մարտենի այս կարծիքը և
լենթադրում, վոր հայ հեղինակը թե իր ներածության

¹ S^h Chris., Geschichte der griechischen Litteratur II, եջ
906 (München 19):

մեջ և թե մի քանի այլ մասերում (աշխարհ Եւրոպայ, աշխարհ Լիբիայ, մասամբ և աշխարհ ընդհանուր Ասիոյ) համառոտել և Պապպոսի յերկրագրութիւնը, վորն իր հերթին համառոտութիւն և Պտղեմեոսի աշխարհագրութիւն (տես Армянская география, եջ IV — V), Իսկ վոր Պապպոսի յերկրագրութիւնը համառոտված և լեղել Պտղոմեոսի յերկից՝ այդ պարզ յերևում և հայ հեղինակի վերոհիշյալ վկայութիւնից, վորի մեջ ասված է՝ «յորոյ [Պտղոմեոսի] ինքնադիր բոլորակին տիեզերագրութեանցն առեալ Պապայ Աղեքսանդրացոյ համառոտաբար երկրագրութեամբ» (V 587,29 — 588,2) :

Սեն-Մարտենի և Պատկանլանի յեզրակացութիւնները հիմնավոր լինելով՝ սխալ և, անշուշտ, Աուքրլանի հակառակ լենթագրութիւնը, վոր իբրև թե «Աշխարհացոյց»-ը համառոտված և վե՛հ միայն Պապպոսի, ալ և Պտղոմեոսի աշխարհագրական յերկերից (տես Սուքրլանի ֆրանսերեն թարգմանութիւն առաջաբանը՝ եջ III — V), Այս թարգմանութիւն մեջ անընդունելի յեն նույնպես փակագծերի մեջ դրված „d'après Ptolémée“ վերնագրերը („Géographie de Moïse Corène d'après Ptolémée“, Venise 1881, եջ 1, 16, 18, 23, 29 և 57), վորոնք կարող են առիթ դառնալ վորոշ թուրիմացութիւններին :

«Աշխարհացոյց»-ի յերկրորդ հիմնական աղբյուրն և հոնստանդին Անտիոքացոյ «Քրիստոնէական Տեղագրութիւն»-ը, վորը հիշատակված և V և S խմբագրութիւնների հետևյալ հատվածներում՝

1. V 589,16—18. «զոր և հոստանդինոս Ան-

տիոքացի ի Բրիստոնէական տեղագրութեան
ասէ՝ և ն.

Տես նույնը նաև S 7,26—27.

2. S 8,9—10. «Որում և Կոստանդին Անտիո-
քացի հունդիպի վիճել ընդ ընկերս իւր...»

V խմբագրութիւն մեջ այս հատվածը ու-
կասում է:

Կոնստանդին Անտիոքացին, ինչպես պարզել է
Պատկանյանը (Армянская география, бѣ X—XII).
Կոսմաս Հնդկաչու հայտնի աշխարհագրագետն է, վորն
ապրել է վեցերորդ դարում: Ըստ Կրումբախերի՝ նրա
«Բրիստոնէական տեղագրութիւն» աշխարհագրական
յերկը գրված է Յուստինիանոս կայսեր ժամանակ՝
մոտավորապես 547—549 թվականներին (տես Ge-
schichte der byzant Lit., յերկրորդ հրտր., էջ 412):

Բացի աշխարհագրական այս յերկերից «Աշխար-
հացոյց»-ի հեղինակն ոգտվել է, ինչպես այդ նկատել
են Սեն-Մարտենը, Պատկանյանը և Մարկվարտը, նաև
ինչ վոր անհայտ աղբյուրներից Ասիայի վերաբերյալ
մասում, գլխավորապես, այն հատվածներում, վորոնք
վերաբերվում են Սարմատիային. Վրաստանին, Ալ-
բանիային և Պարսկաստանին: Այս հատվածներում
հանդիպում են հաճախ ուշագրավ տեղեկութիւններ,
վոր արժեքավոր են ու խիստ կարևոր պատմական-աշ-
խարհագրական տեսակետից: «Աշխարհացոյց»-ի Պարս-
կաստանի մասը հիմք է ծառայել, ինչպես հայտնի է,
Մարկվարտի մեծահատոր Eranschahr աշխատութիւն:

Բացի այդ՝ «Աշխարհացոյց»-ի հեղինակին միջան-
կալ կերպով իբրև աղբյուր են ծառայել «Աբիւթինայ»
վկայութիւնը, «Աղեքսանդրի գիրք»-ը (տես Սուքր.

հրատը., հջ 45), Հովհաննես Մաղաղասի ժամանակագրութիւնը (տե՛ս Պատկանյանի „Арм. геогр.“, հջ 29, ծան. 105, հջ 30, ծան. 113 և հջ 32, ծան. 124), Karnamak-ը (տե՛ս Eranschahr, հջ 5) և, հավանորեն, նաև Նոննոսին վերագրված առասպելաբանական մեկնութիւնները (տե՛ս S. 17,34 և 36,18 և Nonnos, Marburg 1903, հջ 39 — «յաղագս Արիստոտելի և Եւրիպոսի» և հջ 10 — «յաղագս Կասսաղեան ըմպելոյն»).

«Արիւթենայ» վկայութիւնը (տե՛ս S. հջ 38,16—21) քաղված է ըստ իս Եւսեբիոս Կեսարացու ժամանակագրութեան հայերեն թարգմտնութիւնից, իսկ «Աղեքսանդրի գիրք»-ը Կեղծ-Կալիսթենեսի հայտնի վեպի հայերեն թարգմանութիւնն է, վորի սովորական վերնագիրն է՝ «Պատմութիւն մեծի աշխարհակալին Աղեքսանդրի Մակեդոնացւոյ»:

«Աշխարհացոյց»-ի կարեորագույն մասերից մեկն է Հայաստանի աշխարհագրական նկարագրութիւնը: Պատկանյանի կարծիքով, Հայաստանի բաժանումը 15 աշխարհների և 189 գավառների հայ հեղինակը քաղել է, հավանորեն, պաշտոնական հին աղբւրրից (Арм. география, հջ 42 ծան. 150): «Թեև այդ 204 անունների մեծագույն մասը — ասում է Պատկանյանը — չանդիպում են զանազան հայ հեղինակների մոտ, սակայն վա՛ղ բոլորը, ուստի և հեղինակը չէր կարող քաղել հայկական գրական աղբւրրներից Հայաստանի վարչական լիակատար այդ բաժանումն այն սահմաններում, վոր նա ունեցել է Արշակունիների հարստութեան ծաղկման շրջանում» Պատկանյանի այս լինութեան վերաբերյալ հարկ չկալի, և ընդունել, վորովհետև հայ հեղինակը սլարոգ վկայում է, վոր Հայաստանի վերա-

բերյալ մասը կազմել է ինքը, աշխատելով «ի գիր և ի քարտէս», «Արդ կամիմ — ասում է նա — զոռսա [«զփոքը աշխարհս հնգետասան»] մանրամասնաբար պատմել, թէ և սակաւ ինչ աշխատիցիմ ի գիր և ի քարտէս» (տե՛ս V 607, 8—10): Շատ պարզ է, ուրեմն, վոր Հայաստանի աշխարհագրական նկարագրութլունը պատկանում է, անտարակույս, «Աշխարհացոյց»-ի հայ հեղինակին:

«Աշխարհացոյց»-ի այս մասի գիտական մեծ արժեքը շեշտել է Մարկվարտն իր Südarmenien und die Tigrisquellen (Wien 1930, էջ 56* — 57*) աշխատության մեջ, Յենթադրելով վոր «Աշխարհացոյց»-ի հեղինակն է Անանիա Շիրակացին՝ Մարկվարտն այս վերջինին համարում է իսկական գիտնական, վորը Հայաստանի բաժանումից 300 տարի հետո ապշեցուցիչ ճշտութլամբ տվել է Հայաստանի աշխարհագրութլունը բաժանումից առաջ, վորքան մեծ կըլիներ հանգուցյալ Մարկվարտի զարմանքը, լեթե նա ծանոթ լիներ մեր այս ուսումնասիրության նոր տվյալների հետ, վորոնցից հետեւում է ըստ իս, վոր «Աշխարհացոյց»-ի հայ հեղինակը կամ խմբագրողը, իրապես, վոչ թե Անանիա Շիրակացին է, այլ Մովսես Խորենացին, վորին նա այնքան արհամարում էր:

«Աշխարհացոյց»-ի հայ հեղինակը, ինչպես տեսնում ենք, քաղվածորեն ոգտվել է բազմաթիվ աղբւրներէից, իսկ Հայաստանի մասը կազմել է ինքը լուրջ ու հմտալից քննութլամբ:

4. Սեմե-Կրուայի յեվ Սեմ-Մաթեմի կառծիփով՝ «Աստառացոյց»-ի հեղինակը Մովսես Խորենացիին չէ:— «Աշխարհացոյց»-ի առաջին հինգ հրատարակութլունները

լույս ելին տեսել, ինչպես վերև ասացինք, 17-րդ և 18-րդ դարերում և համաձայն ավանդական վերնագրի համարվում ելին, ընականաբար, Մովսես Պորենացու աշխատություն:

Այս կարծիքը լերկար ժամանակ միակ տիրապետողն էր: Սակայն 18-րդ դարի վերջերից սկսած գրականության մեջ կասկած ծագեց և հետզհետե մտավ մի նոր հայացք, վոր այս աշխատությունն անկարելի չի վերագրել հինգերորդ դարի մատենագիր Մովսես Պորենացուն:

1789 թվին ֆրանսիացի գիտնական Baron de Sainte-Croix համառոտ մի նկատողություն եր տպել Journal des Savants հանդիսի ապրիլի համարում (Sur la Géographie de Moyse de Chorène, Paris 1789, էջ 217), վորի մեջ նա մատնանշել էր, վոր «Աշխարհացոյց»-ի մեջ հիշատակված Բասրա քաղաքը հիմնված է Ոմար Նալիֆի հրամանով Հեջիրի 14-րդ թվին, այսինքն՝ 635 թվականին Բրիստոսից հետո: «Աշխարհացոյց»-ի մեջ ասված է, վոր «է Պասրա ամենալից վաճառօք, և եկք նաւաց ի Հնդկաց և յամենայն կողմանց արեւելից» (տես V 612, 6 8)¹, «Հետևաբար — ասում է Սենտ-Կրուան — աշխարհագրական այս համառոտության հեղինակը վե՛հ մի դեպքում չի կարող լինել, ինչպես մինչև այժմ ընդունել են, Մովսես Պորենացին, վորն ապրել է հինգերորդ դարում: Այս

¹ Բասրան աշխարհամասի լմաստով հիշատակված է նաև ընդարձակ իմբացրության մեջ՝ S 41, 6 — 7 «Աշխարհ Ասիո նկմաքւոցն է, որ է Պուսաստան, որում Յոյնք Շաւշանիկ կոչեն, յաղաղս Շօշան քաղաքի, և Տաճիկք՝ Բժրաւ:

գրութիւնը կարող ե կազմված լինել միայն 7-րդ դարի սկզբում, յերբ Բասրան գտնվում էր ծաղկած վիճակում:

Նույն այս խնդիրն ավելի մանրամասն քննել ե Սեն Մարտենը, վորն «Աշխարհացոյց»-ի իր հրատարակութան և Ֆրանսերէն թարգմանութան սկզբում գետնից եր ընդարձակ մի առաջաբան՝ *Mémoire sur l'époque de la composition de la Géographie*, attribuée à Moïse de Khoren (տես *Mémoires II*, հջ 301 – 317), վորի մեջ «Աշխարհացոյց»-ի հորինման ժամանակը նա լինթադրում ե իններորդ դարի վերջերում կամ տասներորդ դարի կիսում (մոտավորապես 950 թվին):

Ցույց տալու համար, վոր ալս լերկը խորենացունը չե՝ Սեն-Մարտենը մատնացուց ե արել հալ հեղինակի ալն հավելումները, վոր չեյին կարող զրված լինել հինգերորդ դարում: Զանց առնելով ալն պարզ լինդի ջարկութիւնները՝ ինչպես «Յօղու Ռուսսց», «Խրիմ», «Շադախ», վոր Սեն-Մարտենի սխալաշատ բնագրում ներմուծված են արտագրողների կողմից՝ մենք մեջ ենք բերում միայն ալն հավելումները, վոր հանդիպում են նաև V և S հրատարակութիւններում:

1. Իբրև Գալիլիի բնակիչներ հիշատակված են «Աշխարհացոյց»-ի մեջ Ֆրանկները, վորոնք անվանված են «հզօր ազգ» (տես *Mém. II*, հջ 336, V հջ 594 և S հջ 14 – 15): Սեն-Մարտենի կարծիքով՝ հինգերորդ դարում Ֆրանկները ղեռն հզօր ազգ չեյին և նրանց անունը ղծվար թե հայտնի լիներ խորենացուն: Բացի ալդ՝ Ֆրանկների բնակութիւն տեղն ալդ

ժամանակ, գլխավորապես, Գերմանիայումն եր և վոչ Գալլիայում:

2. «Աշխարհացոյց»-ի բոլոր հրատարակութիւններն եւ վկայում են, վոր «Բեռլին ցամաք կղզին» պատկանել ե քրիստոնեաներին (տես Mém. II, եջ 338, V եջ 596 և S եջ 16): Հիմնվելով այս վկայութեան վրա՝ Սեն-Մարտենը հնարավոր ե համարում լեղրականցնել, վոր «Աշխարհացոյց»-ի հալ հեղինակն ապրել ե տասերորդ դարում, լերը ուսաներն ընդունել եյին քրիստոնեութիւն:

Սեն-Մարտենի այս յենթադրութիւնը, անշուշտ, ճիշտ չե: Բեռլինը, ինչպես հայտնի յե, քրիստոնեական խոշոր կենտրոն եր արդեն չորրորդ և հինգերորդ դարերում, և հատկապես Բեռլին քաղաքում գտնված են լեկեղեցիների ավերակներ, վորոնցից հնագույնը կառուցված ե լեղել գեռես չորրորդ դարում:

3. Նոսելով Սարմատիայի բնակչութեան մասին՝ «Աշխարհացոյց»-ի հալ հեղինակը կովկասյան լեռներում հիշում ե, ի միջի այլոց, «Շրուանք» անունով մի ազգ (Mém. II, եջ 356 «Շրուանք», V եջ 604 «Շրուանք», S եջ 27 «Շրուան ազգ»): Արդ՝ Սեն-Մարտենի ասելով, արեւելյան բոլոր մատենագիրները և, մասնավորապես, Մասուդին՝ վկայում են, վոր Schirwan անունն առաջին անգամ գործ ե ածվել Նոսրով Նուշիրվանի թագավորութեան ժամանակ՝ վեցերորդ դարի կիսում: «Շրուանք» բառը չեր կարող, ուրեմն, հայտնի լինել Մովսես Նորենացուն, վոր հինգերորդ դարի մատենագիր ե:

4. «Աշխարհացոյց»-ի հալ հեղինակը վկայում ե, վոր Ապառաժ Արաբիան «ունի փոքր աշխարհս երկու՝

զՏաճկաստան և զՓառնիտիս ուր զտուռնն Արրահամու
բաշադեն լինել» (տես V եջ 611, հմմտե Mém. II,
եջ 368): Սեն-Մարտենը կարծում է, վոր այս վկայու-
թյան մեջ «տուռնն Արրահամու» պետք է լինի Մեք-
քան և վոր այս ավանդությունը կարող եր հայտնի
լինել Հայաստանում մահմեդականությունը տարած-
վելուց հետո՝ արաբական աշխարհակալության ժամա-
նակ: Վոր Սեն-Մարտենի այս յենթադրությունը հա-
վանական է, այդ յերևում է S հրատարակության
ընդարձակ բնագրից, վորի մեջ վերոհիշյալ վկայու-
թյունը մեջ է բերված հետևյալ խմբագրությամբ՝ «Եւ
զՓառնիտէ՝ յորում Փառան աւան, զոր կարծեմ ի
Տաճկաց Մաքա կոչել» (S եջ 37):

5. Սեն-Մարտենի կարծիքով՝ «Աշխարհացոյց»-ի
մեջ հիշատակված Կողա աշխարհը (տես Mém II, Էջ
368 և V եջ 612 «Ակոզա») արաբական Koufah-ն է,
վորն ասորիներն անվանում էին Akoula: Արդ՝ հայա-
նի լե, վոր Koufah քաղաքը հիմնված եր Հեջիրի 17
թվին, այսինքն՝ 638 թվականին Քրիստոսից հետո:
Պարզ է, ուրեմն, վոր այդ քաղաքի անունը չեր կարող
հայտնի լինել հինգերորդ դարի մատենագիր Մովսես
Խորենացուն: Սեն-Մարտենի այս դիտողությունը ևս
հաստատվում է «Աշխարհացոյց»-ի S խմբագրության
հետևյալ վկայությամբ՝ «Եւ միւսն ասի Քուլթալիւ.
որք իրեարս եկեալ անցանեն լելից Ակաղաղի բնակ-
եալ բանակի Տաճկաց» (S եջ 38): Հմմտե նաև «Պատ-
մություն Ղ-ոնդեալ» (Ս. Պետ. 1887), Իէ, Էջ 126՝
«Ե զամենայն զօրս զոր միանգամ առաքէր Մրուան
ընդդէմ նոցա՝ խորտակեալ ջախջախէին, և ցմեծ բա-
նակետոյն Տաճկաց Ակոզա զամենեսեան հնազանդէին»:

Սեն-Մարտենի թե առանձին դիաոգությունները և թե ընդհանուր լեզրակացությունն ամենախիստ քըն-նադատության լենթարկվեցին Վենետիկի Մխիթարյան-ների կողմից, վորոնք շարունակում ելին պնդել, վոր «Աշխարհացոյց»-ը Խորենացու աշխատությունն ե և դրված ե հինգհորոգ դարում. Հակաճառելով Սեն-Մարտենին՝ Ինճիճյանը փորձեց իր «Հնախօսութեան» մեջ (Վենետիկ 1836, III, եջ 304 — 314) ապացուցանել, վոր Սեն-Մարտենի մատնանշած ոտարոտի խորթությունները, մեծ մասամբ, Խորենացու գրածը չեն և չըկան «Աշխարհացոյց»-ի ընտիր ձեռագիրներում, իսկ մի քանիսը սխալ են մեկնված Սեն-Մարտենի առաջաբանում. Այս վեճն ունեցավ այն գրական արդյունքը, վոր Վենետիկի Մխիթարյանները, ի նկատի ունենալով Սեն-Մարտենի հրատարակած բնագրի ընդմիջարկություններն ու աղճատումները, վեց ձեռագրի բաղդատությամբ տվին «Աշխարհացոյց»-ի քննական մի նոր հրատարակություն, վորը Խորենացուն վերագրված մյուս յեքկերի հետ միասին տպագրված ե Վենետիկում 1843 թվին. Գննական այս հրատարակությունից լերկաց սակայն, վոր Սեն-Մարտենի մատնանշած աշխարհագրական մի քանի անունները հանդիպում են համառոտ այս խմբագրության բոլոր ձեռագիրներում. Նրանք գտնվում են, ինչպես վերև տեսանք, նաև Սուքրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ. Շատ պարզ ե, ուրեմն, վոր Սեն-Մարտենի հիմնական լեզրակացությունը՝ թե «Աշխարհացոյց»-ը գրված պետք ե լինի վե՛ թե հինգերորդ դարում, այլ շատ ավելի ուշ՝ միանգամայն հավանական ե ու իրավացի:

Չնայած Սենտ-Կրուայի և Սեն-Մարտենի վերոհիշյալ ցուցմունքներին, Գուտշմյալը Խորենացու մասին գրած առաջին իր հոդվածում („Kleine Schriften“, III, եջ 278, ծան. 1), նաև աշխարհագիր Կիպերտը հատուկ իր զեկուցման մեջ („Ueber die Zeit der Abfassung des dem Moses von Chorni zugeschriebenen geogr. Kompendiums“, տես „Monatsberichte der Königl. Preuss. Akademie der Wissenschaften zu Berlin“, 1873, եջ 593 և հետ.), յենթադրում էին «Աշխարհացույց»-ը դարձյալ Խորենացու աշխատութիւնն զրկած հինգերորդ դարում։ Կիպերտի կարծիքով, «Աշխարհացույց»-ը կարելի չե վերագրել Խորենացուն, քանզի թլամբ վորոշ հատվածների և մի քանի լեկամուտ աննշան հավելվածների։

Ե. Բ. Պասկանյանը Խորենացուն վերագրված «Աշխարհացույց»-ը համարում է Անսեիա Շիրակացու աշխատությունը։ — Ինչպես վերև տեսանք, 1877 թվին «Աշխարհացույց»-ը նորից հրատարակել իր Բ. Պատկանյանը ռուսերեն թարգմանության հետ միասին և մանրամասն ծանոթութուններով ու ընդարձակ առաջաբանով։

Բ. Պատկանյանը, ընդունելով Սեն-Մարտենի հիմնական լեզրակացութիւնը, վոր «Աշխարհացույց»-ը չի կարող լինել Խորենացու աշխատութիւն, համաձայն չե սակայն նրա այն կարծիքին, վոր իբր թե «Աշխարհացույց»-ը զրկած է իններորդ դարի վերջում կամ տասերորդ դարի կիսում։ Իբրև նոր ապացույց, վոր «Աշխարհացույց»-ը Խորենացու հեղինակութիւն չե՝ Պատկանյանը բերում է նաև իր նոր դիտողութիւնները վեցերորդ դարի մատենագիր Կոնստանդին-Կոս-

մաս Հնդկաչուրի մասին, վորից քաղվածքներ հ արել
«Աշխարհացոյց»-ի հա, հեղինակը Պատկանլանի կար-
ծիքով, «Աշխարհացոյց»-ը լեզվի կողմից ես չունի և
վոչ մի նմանութլուն խորենացուն:

Համարելով «Աշխարհացոյց»-ը ավելի նոր ժամա-
նակի գործ, Պատկանլանը գալիս ե ինքն այն յեղրա-
կացութլան, վոր «Աշխարհացոյց»-ի գրութլան ժա-
մանակը գրվելու յե լոթերորդ դարի առաջին կիսում,
և կարծում ե, վոր հենց այս դարաշրջանում բնական-
են ու հասկանալի այն կասկած հարուցանող փաստե-
րը, վորոնք հիշված են Սեն-Մարտենի մոտ և մի առ-
մի քննութլան են լենթարկված նաև ռուսերեն իր
առաջարանում:

Միաժամանակ նա լենթադրում ե, վոր լոթերորդ
դարում գրված այս «Աշխարհացոյց»-ը, վորի թարգ-
մանման ու հորինման համար անհրաժեշտ եր վոչ
միայն իմանալ հունարեն, այլ և ունենալ վորոշ պատ-
րաստութլուն, հատկապես, մաթեմատիկական գիտու-
թլուններում, հավանական ե վերագրել Անանիա Շիրա-
կացուն, վորն ապրել ե հենց լոթերորդ դարում, և վորը
հունարան մատենագիր ե ու հայտնի մաթեմատիկոս:

«Աշխարհացոյց»-ի ժամանակի ու հեղինակի մասին
այս յենթադրութլունը, ինչպես տեսնում ենք, սոսկ
մի կռահում ե, վորը վոչ միայն հիմնավորված չե
բավարար ու գոհացուցիչ ապացուլցներով, այլև հա-
կասում ե Սենտ-Կրուսյի և Սեն-Մարտենի վերոհիշյալ
գիտողութլուններին, մասնավորապես, «Պասրա» և
«Ակոդա» քաղաքների մասին, վորոնք հիշատակված
են «Աշխարհացոյց»-ի և համառոտ և ընդարձակ խմբա-
դրութլուններում: Պատկանլանի առարկութլունը, վոր

Բասրան և Կուֆան կարող ելին իբրև խոշոր առևտրական կենտրոններ գոյութիւն ունեցած լինել արաբներից առաջ և կարող ելին, հետևապէս, հիշատակված լինել «Աշխարհացոյց»-ում լոթերորդ դարի կեսերին, բռնազբոսիկ ե, անշուշտ, և ավելի քան անհավանական, ինչ թվում ե, շատ ճիշտ ե նկատել Սենտ-Կրուան, վոր «Աշխարհացոյց»-ի վերոհիշյալ տեղեկութիւնը Բասրայի մասին չեւ կարող դրված լինել ութերորդ դարից կամ լոթերորդ դարի վերջերից առաջ:

«Աշխարհացոյց»-ի գրվելու ժամանակը լենթադրում ե յոթերորդ դարում նաև Գուտշմիտը: Խորենացու մասին «Բրիտանական Հանրագիտական բառարանում» գետեղված իր յերկրորդ հոդվածում նա փորձել ե ցուլց տալ, վոր Խորենացու պատմութիւնը գրված ե 634 — 642 թվականների մեջ («Kleine Schriften», III, եջ 332 — 338): Յենթադրելով Խորենացուն լոթերորդ դարի հեղինակ, նա հիմնվում ե, ի միջի ալլոց, նաև «Աշխարհացոյց»-ի վրա, վորը համարում ե միևնույն հեղինակի աշխատութիւն, գրված նույն լոթերորդ դարում:

Պատկանյանից և Գուտշմիտից հետո «Աշխարհացոյց»-ի մասին, ինչպես հայտնի լե, կարծիք են հայտնել անցողակի կամ մանրամասն ուսումնասիրութիւնների մեջ նաև ուրիշ գիտնականներ: Բոլոր ալս կարծիքների մեջ միակ տիրապետողն ե սակայն Պատկանյանի լենթադրութիւնը, ուստի և «Աշխարհացոյց»-ի հեղինակ համարվել ե սովորաբար Անանիա Շիրակացին (տես Տաշլան «Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», Վիեննա 1895, Халатьянц, „Армянский эпос в исто-

рии Армении Моисея Хоренского“, Москва 1896, 42
18, Markwart, Südarmenien und die Tigrisquellen,
Wien 1930, 42 56*, 14, 39, 58, 4 ակն),

Ներքի մենք կրթեսնենք, վոր ալս կարծիքը, վորը
հետզհետե ընդհանրացել և ու համարվել ընդունելի,
վոչ միայն անհիմն և, ալ և բացարձակապես սխալ:

6. «Աւելաբնացոյց»-ի յել խորեմացու պատմութեան
կտրելով նմանութիւններ, վոր ցոյց են տված խալա-
թիանցի յել Մարկիպոսի աւելաբնացոյցներում: — «Աշ-
խարհացոյց»-ի և խորեմացու պատմութեան մեջ վորոշ
ակնբախ նմանութիւններ նկատած են յեղել, ինչպես
հալանի յե, «Աշխարհացոյց»-ի հրատարակիչները: Մա-
կայն ալս խնդիրը հանգամանորեն քննութեան են
առել խալաթիանցը և Մարկիպոսը: Սրանք մատնա-
ցոյց են արել նաև նոր կարևոր հատվածներ, վորոնք
նույն յերկու գրվածքում կամ կատարելապես նման
են և կամ համեմատաբար են ու համապատասխան իրենց
բովանդակութեամբ:

Կարևոր ալս հատվածները մեջ ենք բերում, զեն-
լով միմյանց հետևից խորեմացու պատմութեան և «Աշ-
խարհացոյց»-ի բնագիրները:

ա. խորեմացի I, 14, 46—47 (Տիգրիս 1913)՝

«Բայց հրաման տալ [Արամ] բնակչաց աշ-
խարհին՝ ուսանել զխօսս և զլեզուս հայկական.
վասն որոյ մինչև ցայսօր ժամանակի անուանեն
Յոյնք զկղիմայն զայն Պոռաին Արմենիան, որ
թարգմանի Առաջին Հայք: Եւ զգաստակերտն,
զոր շինեաց յանուն իւր Մշակ կողմնապետն
Արամայ, փոքրագունիւք պարսպեալ որմովք, ան-
ուանէին հինք աշխարհին՝ Մաթաք, որպես ոչ

կարելով ուղղախօսել. մինչև յետոյ յոմանց ընդարձակագոյն շինեալ՝ անուանեցաւ Կեսարիա. Ըստ նմին օրինակի ի տեղեացն այնոցիկ մինչև ցրուն իւր սահմանսն, զբազում անքնակ երկիր ելից բնակչօք, որք երկրորդ և երրորդ անուանեցան Հալք, այլ և Չորրորդ. Այս է առաջին և ճշմարիտ պատճառն վասն անուանելոյ զայլ երրորդ և Չորրորդ Առաջին և երկրորդ, ալլ և երրորդ և Չորրորդ Հալք»:

V, եջ 603, 19—22.

«Առաջին Հալք լելից կալով առաջին Կապադովկիոյ առ երի երկրորդ Հալոց, և սահմանի լելից Եփրատալ. և լեառն ունի զԱռգէոս, և գետ երեսուն՝ զԱլիս և ալլ մանուկս»:

Դեռևս Պատկանյանը ռուսերեն թարգմանության իր ծանոթութիւններում ուշադրութիւն հր դարձրել (տես եջ 33 — 35, ծանոթ. 132 և եջ 43 — 44, ծան. 152), վոր «Առաջին, երկրորդ, երրորդ և Չորրորդ Հալք» կոչումները հանդիպում են թե Խորենացու պատմութեան և թե «Աշխարհացոյց» ի մեջ և վոր «Առաջին Հալք» կոչվում է նրանց մեջ Կապադովկիայի այն մասը, վորի մեջ գտնվում էին Առգեոս լեռը և Կեսարիա քաղաքը: Այս նմանութիւնը Պատկանյանն ուշադրութեան արժանի լեր համարել, վորովհետև համեմական և հունական աղբյուրները Կապադովկիայի այդ շրջանը չեն անվանել Առաջին Հալք կամ Հալք:

Պատկանյանի մատնանշած այս փաստից կարևոր հետևութիւններ արել են Գուտշմիտը և խալաթյանցը: Գուտշմիտը, վորը Խորենացու պատմութիւնը և «Աշխարհացոյց»-ը համարում եր միևնույն հեղինակի և լո-

թերորդ դարի գործ, հիմնվել է ի միջի ավոց նաև այս
նմանության վրա (տես „Kleine Schriften“ III, հջ
335 336)։ Իսկ խալաթյանցը, վորը համաձայն չեր
Գուտշմիտի այս կարծիքին, լենթադրում է, վոր Անա-
նիա Շիրակացու «Աշխարհացույց»-ը աղբյուր է ծառա-
յե, Խորենացու պատմության (տես „Армянский эпос“,
հջ 18 և 133)։

բ. Խորենացի I, 30, հջ 83 — 84 (Տփղիս 1913)՝

«Բայց զնախասացեալ կինն Անուշ բնակե-
ցուցանէ [Տիգրան] որդւովք իւրովք լանդորրու-
թեան սպառուածի փլածին մեծի լերինն։ Զորմէ
լեալ ասեն յահագին իմն շարժմանէ. զոր պատ-
մեն՝ որք բազմաշրջութեամբ հրամանաւ Պտղո-
մեայ ասպարիսօք զբնակութիւնս մարդկան չա-
փիցին, ալլ և մասն ինչ զծով և զանբնակս
յայրեցածէն մինչև ցՔիմիւռոն»։

V, հջ 587, 15—16.

«Որպէս Պտղոմէոս Կղաւղէոս չափեալ ասպա-
րիդօք զամենայն բնակութիւն մարդկան ևն»։

V, հջ 589, 19—20.

«Բայց Պտղոմէոս, որոյ արք բազմաշրջու-
թեամբ զամենայն չափեցին»։

Հմմտե նաև S, հջ 7, 28—29. «Ալրեցած», տես

V, հջ 585, 20 և S, հջ 5, 14։

«Աշխարհացույց»-ի այս հատվածները, վոր գրեթե
բառացի կերպով պատահում են և Խորենացու մոտ,
մատնացույց է արել խալաթյանցն իր „Армянский
эпос“ ուսումնասիրության մեջ (տես I, հջ 191 — 192
և II, հջ 49 — 50)։

գ. Խորենացի II, 12, հջ 123 (Տփղիս 1913)՝

«Բալց Արտաշիսի նուաճեալ զցամաքս միջոցաց ծովուցն երկոցունց՝ լնու զՈվկիանոս ըազմութեամբ նաւաց, ծառայեցուցանել կամելով զբոլոր արեւմուտս: Քանզի մեծ յոյզք խռովութեանց եղեալ ի Հռովմ՝ ոչ ոք ընդդիմանայ նմա հօրապէս: Այլ ոչ գիտեմ ասել լորպիսի ազդմանէ, ահագին իմն աղմուկ լեալ շփոթից և բազմութեան զօրացն զմիմեանս կոտորեալ. իսկ Արտաշէս փախուցեալ մեռանի, որպէս ասեն՝ յիւրոց զօրացն, թագաւորեալ ամս քսան և հինգ»:

Խորենացի II, 13, եջ 124.

«Եւ յառաջ քան յԱսիալ հասանելն՝ յԱտտիկէ դղեկին քարոզեցաւ»:

S, եջ 17, 29—34.

«Եւրիու մեծ կղզի, եւ Ատալանդ փոքրիկ կղզեակ ի մէջն. զոր ասեն գտեալ զօրացն Արտաշեսի Հայոց արքայի, զի մի նաւք ոռակացն յամիցեն, մինչև պաշարեալն էր զդղեակն Ջարմանալի. զի ջուրք լանպաճառոս այսր անդր հոսէին. եւ ասեն անդ մեռեալ Արտաշեսի. և Արիստոաէլ անդ եղև խորասույզ. Եւռոպոս է անուն նորա»:

Այս հատվածները, ըստ լերևույթին, արձագանգ են ժողովրդական խառնաշփոթ ու ազոտ հիշողությունների և վերաբերվում են, հավանորեն, պատմական այն մեծ անցքերին, վոր տեղի եյին ունեցել 88—86 թվականներին (Քր. առաջ) Միհրդատ Պոնտացու և Սուլլայի ժամանակ (հմտե Th. Reinach, Mithridate Eupator, եջ 154 և հետ.): Ուշագրավ է սակայն, վոր Խորենացու պատմության, ինչպես և «Աշխարհացոյց»-ի

ընդարձակ խմբագրութիւն մեջ, Միհրդատ Պոնտացու արեւմտեան մեծ արշավանքը վերագրված է Հալոց Արտաշես թագավորին:

Այս նմանութիւնն առաջին անգամ մատնացուց եւ արեւ Սուքրիանը (տե՛ս „Géographie de Moïse de Corène“, էջ VI և 22): Մարկվարտն իր Eranschahr աշխատութիւն մեջ (Berlin 1901, էջ 4—6) թե՛ այս և թե՛ իր նկատած մյուս նմանութիւնները բացատրում է, ինչպես և Սուքրիանը, Խորենացու պատմութիւն և «Աշխարհացոյց»-ի հեղինակների նույնութիւնը: Նա լենթագրում է սակայն, վոր այդ հեղինակն ապրել է վո՛չ թե հինգերորդ դարում, այլ ամենականուիւր լոթերորդ դարի վերջում, Հետագա իր ուսումնասիրութիւններում Մարկվարտը հարել եր, ինչպես վերե տեսանք, Պատկանյանի տեսակետին և «Աշխարհացոյց»-ը վերագրել հայտնապես Անանիա Շիրակացուն:

Վերոհիշյալ հատվածները քննութիւն են տալիս նաև Նալաթյանցի «Армянские Аршакиды» աշխատութիւն մեջ (Москва 1903, էջ 46, 48, 50), վորն «Աշխարհացոյց»-ի նման վկայութիւնները համարում է աղբյուր Խորենացու պատմութիւն:

դ. Խորենացի II, 6, էջ 109 (Տփղիս 1913):

«Եւ ինքն [Վաղարշակ] արձակեալ զարեւմտեալ բազմութիւնն՝ իջանէ ի տեղիս խոտաւէտս մերձ ի սահմանն Շարալի. զոր հինքն Անփայտ և յերին Բասեան կոչէին. իսկ յետոյ վասն հատուածի Վղընդուր Բուլղարայ Վնդալ, բնակելոյ ի տեղիսն՝ լանուն նորա անուանեցաւ Վանանդ. և անուանք շինիցն յանուն եղբարց և զարմից նորա անուանեալ կոչին մինչև ցայժմ»:

S, Եջ 25,21—25.

«Որ ըստ հիւսիսոյ են ազգ Թուրքաց եւ Բուլ-
ղարաց, ըստ անուանց գետոցդ կոչեցեալ՝ Կուփի
Բուլղար, Դուշի Բուլկար, Ողխոնտոր Բլկար եկն,
Չղար Բոլկար. օտար ալժմ ի Պտղոմէականէն են
այս անուանք: Եւ ի Չիական լեառնէն փախեալ
որդին Խուղբադրայ...»

Հմմտե նաև S, Եջ 17,4—7 և Խորենացի II,
9, Եջ 119:

Վոր Խորենացու հատվածի «Վղընդուր Բուլղար»-ը
համապատասխանում է «Աշխարհացոյց»-ի ընդարձակ
խմբագրության «Ողխոնտոր Բլկար»-ին՝ այդ նկատել
է առաջին անգամ դարձյալ Սուքրյանը (տես „Géo-
graphie de Moïse de Corène“, Եջ VI): Պատկանյանն
ուշագրութունն է դարձրել, վոր «Աշխարհացոյց»-ի մեջ
ասված է՝ «Ողխոնտոր Բլկար եկն», ուստի և կարծում
է, վոր Բուլղարների գաղթի մասին Խորենացու վկա-
յութունը հայտնի չէ յեղել «Աշխարհացոյց»-ի հեղի-
նակին (տես «Из нового списка Географии, припи-
сываемой Моисею Хоренскому», ЖМНПр. 1883, 226,
Եջ 24): Նույն այս խնդիրն ավելի մանրամասն քնն-
ված է Խալաթյանցի և Մարկվարտի աշխատութուն-
ներում (տես «Армянские Аршакиды», Եջ 29—33
և Streifzüge, Եջ 57 էն.):

Ե. Խորենացի II, 52, Եջ 182 (Տիդիս 1913)՝

«Զի յետ այնչափ արութեանց՝ օգնական եղ-
բորն Սաթինկան յաշխարհն Ալանաց հանդերձ ղո-
բու երթալ [Սմբատ] հրամանաւ Արտաշիսի Գան-
զի մեռաւ հայր Սաթինկան, և ալլ ոմն բռնացեալ
Թագաւորեաց աշխարհին Ալանաց, և հալածէր

գեղբայրն Սաթինկան. զոր վանեալ հերքէ Սըմ-
բաա, և տիրացոյցանէ ի վերայ ազգին գեղբայրն
Սաթինկան, և գերկիր հակառակորդացն աւերէ.
զամենայն միահամուռ ածէ գերի սաստիկ յԱր-
տաշատ: Եւ հրամայեալ Արտաշիսի բնակեցու-
ցանէլ զնոսա ի հարաւոյ լարեելից կուսէ Մասեաց,
որ կոչէր Շաւարշական գաւառ, ի վերայ պահելով
զբնիկ անունն Արտազ. քանզի և աշխարհն ուսաի
գերեցանն՝ Արաազ կոչի մինչև ցայսօր ժամա-
նակի».

Յորենացի II, 58, եջ 187 (Տփղիս 1913)՝

«Ի սորա [Արտաշիսի] աւուրս և Առաւելեանքդ,
յազգէ Ալանաց, մերձաւորք Սաթինկան, զհետ
նորա եկեալք՝ կարգեցան յազգ և ի նախարա-
րութիւն աշխարհիս Հալոց, որպէս հարազատք
Թագուհւոյն մեծի. և ի ժամանակա խոսրովու
հօրն Տրգատայ խնամեցեալ ընդ ումեմն քաջի
Քասղացն եկեալ հատուածի».

Հմմտե նաև Յորենացի II, 53, եջ 183.

Տ. եջ 26, 24—31.

«Եւ են ի Սարմատիոյ համարեալ, այսպէս,
սկսեալ ի մտից լելս կոյս. նախ ազգ Աղուանաց,
Աշտիգոր որ ըստ հարաւոյ. համարեակ նոցա
Քերուրք եւ Քութետք եւ Արգուել եւ Մարգուլ,
եւ Թակոյր. եւ Ալանք են յետ Դիքորին, յԱր-
դոզ աշխարհի Կաւկասին լերանցն. ուստի հոսի
գետն Արմնայ, եւ գնալով ընդ հիւսիսի՝ ընդ
դաշտ անբաւս, խառնի յԱթլ. եւ ի նոյն լերինն՝
յետ Արդոզեան ազգին բնակեն ևն».

Պատկանլանն առաջինն ե նկատել, վոր «Աշխար-

հացոյց»-ի «Արդող աշխարհ»-ը, վորը գտնվում եր Կովկասյան լեռներում, հիշեցնում ե խորենացու վերոհիշյալ վկայութիւնն Արտազ գավառի մասին (տես «Из нового списка Географии» եջ 30, ծանոթ. 1), Մարկվարտի կարծիքով, Վասպուրականի Արտազ գավառի անունը շատ հին ե և հիշատակված ե, հավանորեն, Ստրաբոնի մոտ («Αρχαία կամ Αρχαία», Իսկ խորենացու բացատրութիւնը նրա սովորական ստուգաբանական մեկնութիւններէց մեկն ե, վոր հիմնված ե պարզապես «Աշխարհացոյց»-ի Արդող և հալկական Արտազ անունների նմանութիւն վրա (տես «Eranschahr», եջ 4, «Streifzüge», եջ 171 և «Genealogie der Bagratiden», Caucasica 1930, Fasc. 6, 2 Teil, եջ 24 — 30), Մարկվարտը լենթադրում ե նույնպես, վոր խորենացին՝ հիմնվելով դարձիւլ «Աշխարհացոյց»-ի «Արգուեւը» անվան վրա, «Առուեղեան»-ներին կամ «Առաւեղեան»-ներին համարել ե «յաղգէ ալանաց» և «մերձաւորք Սաթինկան» (տես «Eranschahr», եջ 5 և «Streifzüge», եջ 171)։

դ. խորենացի II, 65, եջ 200 (Տփղիս 1913)՝
«Վասն զի ի սորա [Վաղարշա] աւուրս միաբանեալ ամբոխութիւն հիւսիսականաց, զԽազրաց ասեմ և զԲասլաց, արտաքս քան զդուռն Ճորայ ելանեն, առաջնորդ և թագաւոր ունելով ինքեանց զՎնասեպ ոմն Սուրհայ. որք անցեալ վտարին ալսր զԿուր գետով»։

Հմմտե նաև խորենացի II, 58, եջ 187 և II, 85, եջ 230.

Տ. 26, 14—19.

«որոյ [Աթլ գետոյ] մէջն է կղզի, յոր մտեալ

ամբողջ Բասւլաց ազգն, ի հզօր ազգէն խաղրաց և
Բւշխաց, ճարակելոց լելից և ի մտից, եկելոց անդ
ի ձմերոց. եւ կոչեն Սեւ կղզի. զի յաղագս բազմու-
թեանն ազգին Բասւլաց՝ մարդոյ և անասնոյ անդ
մտելոցն՝ սեւ երևի. զօր Պտլոմէոս Կոաւ կղզի
կոչէ».

Վ. 605, 6—8.

«Եւ թագաւորն հիւսիսոյ է խաքանն՝ որ է
տէր խաղրաց, և ղշխոյն թագուհի կին խաքանայ
ի Բասւլաց ազգէն»:

խաղարների և բասիլների հիշատակությունը Վա-
ղարշի ու Տրդատ Մեծի ժամանակ խալաթլանցն իրա-
վացի կերպով համարում եւ ակներև մի ժամանակա-
վրիպում (анакронизм), վորը ցույց եւ տալիս՝ վոր
խորենացու պատմությունը գրված պիտի լինի ավելի
ուշ ժամանակում (տես «Армянские Аршакиды», հջ
33 — 34, 110 և 149). Մարկվարտը, վոր իր «Streifzü-
ge» աշխատութիւն մեջ մանրամասն ուսումնասիրել եւ
խաղարներին ու բասիլներին վերաբերվող մատենա-
գրական հին տեղեկութիւնները, լենթադրում եւ, վոր
«Կեղծ Մովսեսին», վորը պատմութիւն և «Աշխարհա-
ցոյց»-ի հեղինակն եւ, բասիլները, ինչպես և մյուս
հյուսիսային ցեղերը, կարող եյին հայտնի լինել. գըլ-
խավորապես, վեցերորդ դարի աղբյուրներից (տես
«Streifzüge» հջ 57, 58 եւ, նաև «Eranschahr», հջ 4).
է. խորենացի II, 81, հջ 223 (Տփղիս 1913)՝

«Սքանչելի է և աշխարհն [Ճննաց] առատու-
թեամբ ամենալն պտղոց, և գեղեցիկ բուսովք
զարդարեալ, քրքմաւէտ և սիրամարգաշատ և
բազմամետաքս, անբաւութիւն յամուրաց և հրե-

շից, և որ էշալծեմունսդ անուանեն. ուր հասարակաց կերակուր ասեն զառ մեզ պատուական և սակաւուց ճաշակելիս՝ զփասեան և զպոր, և ակք ակսպիսիք».

S. 46.6 — 11՝

«Եւ լինի անդ [ի շենաց աշխարհին] դարի՝ ճենիկ և կասիմոն, ի Կասիա լեռնէ, եւ սկիւթիկոն՝ որ է ատրազոյն ինքնեղ. և ունի հրէշ, եւ մուշկ, եւ շիրամարգ շատ, եւ ակ հաւս պիտանիս, եւ քրքումս անբաւ. մինչ զի հեծեալ ոք ի սպիտակ զերդակ ձիով, սպիտակ բազէիւ երթեալ լորս՝ դառնալ դեղնացեալ ամենեւին. Լինի ապրիշում շատ եւ ազնիւ քան զամենայն երկիր».

Հմմտե նաև V. 616, 12—18:

Նմանությունն այս հատվածների մատնացույց ետրել Պատկանյանն «Աշխարհացոյց»-ի հայերեն իր հրատարակութեան ծանոթութիւններէց մեկում (եջ 25, ծանոթ. 2): Խալաթլանցը, քննութեան առնելով այս նմանութիւնը, լինթադրում ե դարձյալ, վոր Խորենացին շենաստանի մասին իր տեղեկութիւնները քաղել ե, գլխավորապես, «Աշխարհացոյց»-ից (տե՛ս «Армянские Аршакиды» I, եջ 152 և II, եջ 54):

Վերև մեջ բերված նմանութիւնները, յետե անգամ նրանցից վորեւ մեկը հավանութիւն չգտնի, ակնուամենակիվ իրանց ամբողջութեամբ ցույց են տալիս, վոր Խորենացու պատմութեան աշխարհագրական վերոհիշյալ վկայութիւններն անհրաժեշտ կապ ունեն «Աշխարհացոյց»-ի հետ. Այս կապը, ինչպես տեսնւմ ենք, ընդունում են բոլոր բանասերները: Սակայն

ներանք տալիս են այդ կապի մասին տարբեր բացատրություններ:

ա. Վենետիկի Միսիթարյանները՝ Ինճիճյան, Սուքրյան և ուրիշները՝ այդ համերաշխությունը բնական ու հասկանալի լին գտնում, վորովհետև պատմությունը և «Աշխարհացոյց»-ը նրանք վերագրում են հինգերորդ դարի մատենագիր Մովսես Խորենացուն:

բ. Պատկանյանը, թեև մատնանշում է այդ կապը, սակայն խուսափում է բացատրություններ տալուց, Վորովհետև Խորենացու հինգերորդ դարի հեղինակ լինելը համարվում էր նրա ժամանակ անկասկածելի մի փաստ, ուստի է նա չեր կարող պնդել, վոր Խորենացու պատմության համապատասխան վկայությունները քաղված են «Աշխարհացոյց»-ից, վորը նա վերագրում էր Անանիա Շիրակացուն:

գ. Գուտշմիտը բացատրում է Խորենացու նմանությունները նրանով, վոր պատմությունը է «Աշխարհացոյց»-ը միևնույն հեղինակի՝ Կեղծ-Մովսեսի աշխատություններն են՝ գրված յոթերորդ դարի կեսերին:

դ. Նույն կարծիքին էր Մարկվարտն իր հնագույն Eranschahr ուսումնասիրության մեջ՝ այն տարբերությամբ միայն, վոր «Աշխարհացոյց»-ի գրության ժամանակը նա լենթադրում է ամենականուի յոթերորդ դարի վերջերում:

ե. Հիշյալ կարծիքներից տարբեր է Խալաթյանի տեսակետը: Այս բանասերը, վոր մանրամասն քննել ու մատնացույց է արել Խորե-

նացու պատմութիւնն աղբյուրները, լինթագրում
ե, վոր պատմութիւնն հեղինակն ոգտվել ե Անա-
նիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ից, վորը գըր-
ված ե յեղել պատմութիւննից առաջ:

Ինչպես հայտնի յե, այս կարծիքներից և վնչ մեկը
վերջնական կերպով ընդունված չե և «Աշխարհացոյց»-ի
խնդիրը վնչ միայն մնացել ե մինչև այժմ առկախ, այլ
ե միանգամայն անհիմն կերպով ընդհանրացել ե Պատ-
կանյանի վերոհիշյալ սխալ կարծիքը, վոր իբր թե
այդ լերկը պատկանում ե Անանիա Շիրակացուն: Ներքե
մենք նոր ու ուշագրավ փաստերով ցույց կըտանք,
վոր խորենացու պատմութիւնը, ինչպես և «Աշխար-
հացոյց»-ը, միեւնույն հեղինակի՝ «Մովսես քերթող»-ի
աշխատութիւններն են, վորն ապրել ե իններորդ դա-
րում: «Աշխարհացոյց»-ի խնդրի լուծումը, ինչպես
կըտեսնենք, հնարավորութիւն ե տալիս վերջնակա-
նապես պարզելու նաև խորենացու չարաբաստիկ առեզծ-
վածը, վորի մասին անթիվ քննադատութիւններ են
չույս տեսել ու թեր և դեմ կարծիքներ արծարծվել
զանազան լեզուներով:

7. «Աւետարնացոյց»-ի յել խորեմացու պատմութեան
անցմանը, վոր ցույց եմ տրված Հյուբուստի
մոտ, խիստ բռնածիգ եմ ու միանգամայն անհավանա-
կալի: — «Աշխարհացոյց»-ի և խորենացու պատմութիւն
համեմատելի խնդիրը քննութեան ե առել նաև
Հյուբուստի «Հին Հայոց տեղւոյ անունները» իր աշ-
խատութեան մեջ (տես թարգմանութիւնը Ն. Բ. Պիլի-
զիկեանի, հջ 262 — 267, «Եւրոպական Բ. Մ. խորենացի
և Հայկական աշխարհագրութիւնը»): Այս խնդիրը
քննելիս՝ Հյուբուստին ի նկատի լե ունեցել «Աշխար-

հացոյցս-ի ալն մասը, վոր վերաբերվում ե Հայաս-
տանի աշխարհագրության:

«Եթէ ապացուցուի — ասում ե Հյուբշմանը —
որ այս մասը Պատմութեան հեղինակէն է, ալն
ատեն ֆնացեալ մասն ալ՝ որ իւր մէջը կը բովան-
գակէ Սուքրեանի ե Մարքարտի (Երանշ. էջ 4)
դիտած աղերսներն Պատմութեան հետ, նոյն
հեղինակէն պիտի ըլլայ, եւ այս պարագային
երկուքն ալ՝ Պատմութիւնն ու Աշխարհագրու-
թիւնն՝ ընծայուելու են կամ Սուքրեանի հետ՝
եւ. դարուն (որ անկարելի է), կամ Մարքարտի
հետ՝ է — Ը. դարուն: Իսկ եթէ ցուցուի որ Հա-
յաստանի աշխարհագրութեան վրայ խօսող Հա-
տածը՝ Պատմութեան հեղինակէն տարբեր հեղի-
նակ մ'ունի, ալն ժամանակ ստիպուած ենք
ընդունելու որ կամ Պատմութեան հեղինակն
օտար ազգաց աշխարհագրութիւնը գրած է եւ
յետնագոյն անձ մը նոյն աշխարհագրութեան
մեջ՝ Հայաստանի հատածն աւելցուցած մօծած
է, որ հաւանական չէ, կամ այս երկու երկերն՝
որչափ ալ ինչ ինչ կէտերու մէջ իրարու հետ
աղերս ալ ունենան — այս կէտերը հասարակաց
աղբիւրէ մը բխած պիտի ըլլան — տարբեր հե-
ղինակներէ են, այնպէս որ Պատմութեան յօրին-
ման ժամանակը կրնալ վճռուի՝ առանց աշխար-
հագրութիւնը նկատողութեան առնելու» (տես
եջ 263 — 264):

Համեմատելով այս տեսակետից վերոհիշյալ լերկերի
աշխարհագրական տեղեկութիւնները՝ Հյուբշմանը նը-
րանց մեջ մատնացուցց ե անում վորոշ աննմանու-

թյուններ և լեզրակացություն ե հանում, վոր խորե-
նացուն վերագրված պատմությունն «աշխարհագրական
տեսություններով ու անուններով» ավելի Փավստոսին
ե մոտ քան «Աշխարհացոյց»-ին: Այս լեզրակացու-
թյունը, իմ կարծիքով, ճիշտ չէ: Ներքե մենք կըսես-
նենք, վոր հարգելի ուսուչապետի դիտողությունները
կամ վռչինչ չեն ապացուցանում և կամ ակներև թյու-
րիմացություններ են:

Մատնանշված աննմանությունները, վոր կետ առ
կետ մեջ ենք բերում, հետևյալներն են:

1) Հլուբշմանի կարծիքով՝ խորենացու պատ-
մությունը, Փավստոսի նման, Բարձր Հայք, Տու-
րուբերան, Կորճեք, Պարսկահայք, Փայտակարան,
Ուտի եւ Ալարատ նահանգները չգիտե վորպես
նահանգ, սակայն, «Աշխարհացոյց»-ի նման, գի-
տե վորպես նահանգ՝ Չորրորդ Հայքը և Վաս-
պուրականը, վորոնք գոյություն չունեյին տա-
կավին Փավստոսի ժամանակ:

Այս դիտողությունն ըստ իս ավելի քան վիճելի
չէ: Յեթե խորենացու մոտ վերոհիշյալ լերկիրները չեն
հիշատակված վորպես նահանգ՝ այդ բացատրվում է,
հավանորեն, նրանով, վոր պատմության մեջ կարիք
չէ յեղել հիշելու Հայաստանի բոլոր շրջանները: Շատ
պարզ է, վոր պատահական նման համեմատություն-
ներից հնարավոր չէ լեզրակացնել, վոր իբր թե վերո-
հիշյալ շրջանները (իբրև ալդալիսի) հայտնի չեն լեղել
խորենացուն:

2) Իբրև ուշադրության արժանի աննմանու-
թյուններ՝ Հլուբշմանի մոտ նշանակված են աշ-
խարհագրական անունների և անգամ նրանց ուղ-

դագրութիւն հետեւալ տարբերութիւնները՝ ա.
 Խոր. III, 15, եջ 274 — Անձիւ, իսկ V. 607,21 —
 Հանձիթ, S. 30,14 — Անձիթ. բ. Խոր. II, 8 —
 Կողբ, Զոր, Ծոր, իսկ V. 610,11 — Կողրոփոր, Զո-
 րոփոր, Ծորոփոր. գ. Խոր. I, 12, եջ 39 — ռտն
 Արագածոյ, իսկ V. 610,24 — Արագածոան և S.
 34,9 — Արագածոտն. գ. Խոր. III, 23, եջ 383 և
 III, 37, եջ 305 — Կոգալովիտ, իսկ V. 610,25 և
 S. 32,24.29 — Կոգովիտ:

Ինքն ըստ ինքլան հասկանալի լե, վոր ալս մի-
 ւերկու անամանութիւններն առանձին կարևորություն
 չունեն, վորովհետև ավելի աչքի ընկնող ու ավելի շատ
 տարբերութիւններ ստացվում են «Աշխարհացոյց»-ի
 համառոտ ու ընդարձակ խմբագրութիւնների համե-
 մատութիւնից, վորոնք, ինչպես տեսանք, ծագում են
 նախնական միևնույն բնագրից:

3) Հլուրլմանն անամանութիւններ և համա-
 րում նաև ալն, վոր Դեգիք և Գորեք գավառ-
 ների անունները պակասում են Փափստոսի և
 Խորենացու մոտ, բայց հիշատակված են Գեոր-
 գիոս Կիպրացու մոտ (տես Georgii Cyprii, Des-
 criptio orbis Romani, Lipsiae 1890, եջ 49 —
 Κλίμα Διγρησινης և κλίμα Γαρινης) ու նաև «Աշխարհա-
 ցոյց»-ում (V. 607,21 Դէգիք, Դորեք և S. 30,15.17
 Դէգիկ, Գաւրէգ): Սրան հակառակ՝ հին Անգեղ
 տուն գավառը, վորը ծանոթ էր Փափստոսից
 սկսած մինչև Խորենացու պատմութիւնը (տես
 I, 23, եջ 71 և II, 8, եջ 114) անհետացած էր
 Թե Գեորգիոս Կիպրացու և Թե «Աշխարհացոյց»-ի
 ժամանակ:

Սխալ են, անշուշտ, և անընդունելի նաև այս դիտողութունները: Ինչպես հայտնի լե, Խորենացու մոտ նույնպես չեն հիշված Մընձուր, Արշամունիք, Մարդադի, Ծաղկոտն և ուրիշ գավառներ: Կարելի՞ լե միթե դրանից յեզրակացնել, վոր այդ գավառները հայտնի չեյին Խորենացուն: Իսկ Անգեղ տունը, վորը մեջ ե բերված Խորենացու քով իբրև «Տուրք Անգեղեայ» տոհմի անուն (II, 8, եջ 114)՝ չեր կարող, բնականաբար, հիշված լինել «Աշխարհացույց»-ի մեջ, վորովհետև վեցիորդ դարում, ինչպես վկայում ե հենց ինքը Հյուրշմանը (տես «Հին Հայոց տեղւոյ անունները», եջ 157), այդ գավառը ձուլված ե լեղել ուրիշ գավառի հետ:

4) Հյուրշմանի ասելով՝ Խորենացին Մեծ Ծոփք գավառի անունը (=Sophanene) գիտե իբրեւ Ծոփք, մինչդեռ այդ գավառը, վոր 591 թվին տրվել եր Բյուզանդիային և միացվել Աղձնիքի հետ, անվանվել ե ալեուհիսե Նփրկերա քաղաքի անունով Նփրկերտ գավառ: Բացի այդ՝ Խորենացին, ըստ լեռնույթին, անդեկություն չունի Մեծ Ծոփքըն Աղձնիքին միացվելու մասին, վորովհետև Աղձնիք ասելով (II, 8, եջ 116) նա հասկանում ե՝ «զԱրձն և որ շուրջ զնովաւ և զլեառն Տաւրոս, որ և Սիմ, և զԿղեսուրն ամենայն»՝ այսինքն՝ Արձն յերկիրը, Սիմ լեռը և Բաղիշի կիրճը, առանց Ծոփք գավառի: Հակառակ Խորենացուն՝ «Աշխարհացույց»-ը գիտե Նփրկերտ գավառը և Արձն ու Նփրկերաը համարում ե Աղձնիքի գավառներ (տես V. 607,25-26 և S. 30,26-27):

Հյուրշմանի ալս դիտողությունը ևս ըստ իս թյու-

րիմացութիւնն եւ Խորենացին իր պատմութիւնը գրե-
լիս՝ ոգտովել ե հնագուայն աղբյուրներէց և միանգա-
մայն իրավացի կերպով հին Sophanene գավառն ան-
վանում ե Ծոփք և համարում Չորրորդ Հայքի մաս
(II. 8, Եջ 115)։ Վոր նա չե իմացել այդ գավառի հե-
տագա անունը և միացումն Ազձնիքի հետ՝ այդ, ան-
շուշտ, ավելի քան վիճելի մի լեզրակացութիւնն ե, վոր
չի բղխում բնավ նրա վերահիշյալ վկայութիւններէց։

5) «Փափստոսի մոտ—ասում ե Հլուրշմանը—

Տմորիք լերկիրը զանազանվում ե Կորտուքից և
Կորզիքից (Կորդիք, Կորդրիք). բայց «Աշխարհա-
ցոյց»-ում այլևս սրանց հետ չե հիշլում. Խորե-
նացին հիշում ե գեռ, բայց նույնացնում ե մի
տեղ Տմորիքը Կորզիքի հետ և Տմորիքը համա-
րում ի սխալմամբ Կորդիքի հնագուայն անունը։

Հլուրշմանի այս դիտողութիւնը վնչ միայն վոչինչ
չի ապացուցանում, այլ և, ընդհակառակը, ցույց ե
տալիս, վոր Խորենացին, ինչպես և «Աշխարհացոյց»-ը,
Տմորիքը չեն համարել առանձին գավառ։ Խորենացին
Տմորիքի մասին ունի հետեյալ վկայութիւնը՝ «Հրա-
մանաւ Արտաշիսի բնակէ [Սմբաա] ի Տմորիս, որ այժմ
կոչի Կորդրիք, ի Ալկի նստուցեալ զբազմութիւն գեր-
ւոյն» (II, 53, Եջ 183)։ Հասկանալի չե, ուրեմն, թե
ինչո՞ւ «Աշխարհացոյց»-ի մեջ Տմորիքի փոխարեն հի-
շատակլած ե միայն Կորդիքը (տես V. 608, 12—13 —
«զԿորդրիս Վերին, զԿորդրիս Միջին, զԿորդրիս Ներ-
քին», Տ. 32, 10—11 — «զԿորդիս Վերի, զԿորդիս Միջի,
զԿորդիս Ներքի»)։ Տմորիքի այս նույնացման մասին
Կորդիքի հետ տես Marquart, Südarmenten und die
Tigrisquellen, Եջ 352 — 354.

6) «Աշխարհացոյց»-ն — ասում է Հյուբշմանը — Աշոցք գավառը, վերը գտնվում եր Գաւգարքի և Այրարատի սահմանի վրա, դնում է Այրարատում, իսկ խորենացին նույն գավառը գնում է Գուգարքում Ձորոյ և Տաշիրի միջև:

Այս աննմանութիւնը կարող եր, անշուշտ, վորոշ նշանակութիւն ունենալ, իթե նա ճիշտ լիներ: Խորենացու վկայութիւնն ուշադիր ընթերցումը համոզում է սակայն, վոր այս աննմանութիւնն արդյունք է Խորենացու համապատասխան վկայութիւնն սխալ լուսաբանման: Խորենացու մոտ «Աշոցայ տէրութիւն»-ը հիշատակված է հետևյալ հատվածում (II, 8, եջ 113—114)՝

«Իսկ Գուշարայ, որ յորդոցն Շարայի, Ժառանգեաց զլեառն Մթին, որ է Կանգարք, և զկէս մասինն Զաւախաց. զԿողբ, զԾոր, զՁոր, մինչև ցամուրն Հնարակերտ: Բայց զտէրութիւնն Աշոցայ՝ և սեպհականութիւնն Տաշրաց կարգէ Վաղարշակ ի գաւակացն Գուշարայ Հայկազնոյ: Իսկ ընդդէմ լերինն Կաւկասայ կողմնակալ հիւսիսոյ կարգէ զմեծ և զհզօր ազգն, և նահապետութեանն անուն կարդալ բգեաշխն Գուգարացւոց, որ էր լեալ ի գաւակէ Միհրդատայ, Դարեհի նախարարի»:

Այս հատվածից դժվար ու անհավանական է, անշուշտ, հետևցնել, վոր Խորենացու մոտ Աշոցքը հիշատակված է Գուգարաց գավառների մեջ: Պարզ է ուրեմն, վոր Հյուբշմանի վերոհիշյալ դիտողութիւնը դարձյալ ակնբեր է թիւրբիմացութիւնն է և վոչինչ չի ապացուցանում:

7) «Ըստ Խորենացու — ասում է Հյուբշմանը — Արտաշատը գտնվում էր այն տեղում, ուր Յերասխ ու Մեծամոր իրար հետ կըխառնվեին, իսկ ըստ «Աշխարհացույց»-ի — «ուր յառաջին ժամանակսն խառնուրդք Մեծամալրի, իսկ այժմն փոխեալ զգնացսն Մեծամալրալ՝ խառնի ի մտից կուսէ»:

Խորենացու և «Աշխարհացույց»-ի կարևոր այս համաձայնեցը, վորոնք Արտաշատի հին տեղը հույց են տալիս Արաքսի ու Մեծամոր, իսկ նոր տեղը՝ Արաքսի ու Ազատ գետի՝ միացման կետերի մոտ¹, մեջ հնք բերում առանց կրճատումների.

Խորեն. II, 49, հջ 176 (Տփղիս 1913)՝

«Երթեալ Արտաշիսի ի տեղին, ուր խառնին Երասխ և Մեծամոր, և հաճեալ ընդ բլուրն՝ շինէ քաղաք չիւր անուն անուանեալ Արտաշատ».

S. 34, 16—22՝

«Եւ ապա չելից նորա [Մեծամորի] դիտն Ազատ, և արդարեւ ազատ. որոյ ափունքն բխեն ի Գեօղ լեառնէ, ի Սախուրակ տեղոյ, որ իջանելով ընդ Դուխն, արբուցանէ զամենայն Ոստանն Հալոց, եւ անցեալ ընդ հարաւ անկանի յԵրասխ. յորոց ի մէջ շինեալ է Արաաշա քաղաք, ուր յառաջին ժամանակսն խառնուրդք Մեծամորի, իսկ այժմն փոխեալ զգնացսն Մեծամորալ՝ խառնի ի մտից կուսէ»:

¹ Արտաշատի տեղը վորոշելու համար այս վկայութիւնները կարող են, անշուշտ, կոպտն ծառայել դիտական արշավախմբերին:

Հյուբշմանի կարծիքով՝ այս վկայութիւնները վերագրվելու յեն տարբեր հեղինակների, իսկ իրապես՝ վերոհիշյալ վկայութիւնները վնչ միայն իրար հակասող աննմանութիւններ չեն, այլ և միմյանց հետ կատարելապես համերաշխ են։ Նույն վկայութիւնները, թվում է ինձ, կարող են անգամ բացատրվել հեղինակի նույնությամբ, վորովհետև «Աշխարհացոյց»-ի հեղինակին ևս հայտնի չե Արտաշատի հին տեղը, վոր մատնանշված է պատմության մեջ։

Հյուբշմանը, վերոհիշյալ իր դիտողութիւնների վրա հիմնվելով, յեկել է հետևյալ յեղրակացության՝

«Թերևս Խորենացւոյ պատմութեան եւ «Աշխարհացոյց»-ի խօսքերուն մէջ տեսնուած այս տարբերութիւններէն եւ ոչ մին լինքեան այնչափ զօրաւոր է, որուն վրա յեցեալ վճռուի աշխարհագրութեան աղբրսն՝ նկատմամբ պատմութեան, բայց այս տարբերութեանց ամբողջութիւնը կարծեմ թէ — եթէ նոյն իսկ այս տարբերութեաներէն քանի մը հատը մեկնութեամբ մ'ալ վերցուի — կ'ապացուցանէ որ աշխարհագրութեան Հայաստանով զբաղող մասն եւ ըստ այսմ ամբողջ գրութիւնը պատմութեան հեղինակէն չէ» (տես Թարգմ. Պիլեգիկճյանի, էջ 266)։

Հակառակ այս յեզրակացության՝ մեր քննութիւնն ից պարզ յերևում է սակայն, վոր մեկնությամբ վերանում են վնչ միայն մի քանիսը վերոհիշյալ տարբերութիւններից, այլ և բոլոր տարբերութիւններն առանց բացառութիւն։ Պարզ է ուրեմն, վոր ալդ յեզրակացութիւնը կաողոյ ենք կտրականապես մերժել։

8. Ընդհանրացած այն կարծիքը, վոր «Առխարհացոյց»-ի ներդրեցին Անախիա Շիրակացիին ե՛ր նրա չե: — Վերս մենք տեսանք, վոր բանասիրներից շատերը, հիմնվելով Պատկանի լեզրակացութիւն վրա, «Առխարհացոյց»-ի հեղինակ համարում են Անանիա Շիրակացուն: Սակայն այդ լեզրակացութիւնը զուրկ է, ինչպես աստ-ցինք, փաստական հիմնավորումից:

Վոր այս կարծիքը բոլորովին անընդունելի չէ, այդ յերևում է ըստ իս «Առխարհացոյց»-ի և Անանիա Շիրակացու լեզուների բովանդակութիւն համեմատութիւնից: Շիրակացու առխարհագրական վորոշ տերմինները, ինչպես և նրա առխարհագրական հատուկ հայացքները, այնքան տարբեր են «Առխարհացոյց»-ի համապատասխան տերմիններից ու հայացքներից, վոր վո՛չ մի կասկած չէ կարող լինել, վոր «Առխարհացոյց»-ը Շիրակացուն վերագրելը միանգամայն անհաջող մի կոռ-հում է:

Թողնելով մի քանի մանր աննմանութիւնները, վորոնք կարող են վիճելի համարվել, մեջ ենք բերում միայն այն խոշոր տարբերութիւնները, վորոնք անհերքելի կերպով ապացուցանում են նոր այս լեզրակացութիւնը:

1) «Առխարհացոյց»-ի ռուսերեն թարգմանութիւն ծանոթութիւններից մեկում (տես հջ 9, ծանոթ. 17) հենց ինքը Պատկանյանը շատ ճիշտ նկատել է, վոր «Առխարհացոյց»-ի հեղինակը «միջօրէական գիծ» է անվանում վո՛չ միայն միջօրեականը, այլ և հասարակածը: Պատկանյանը սակայն անուշադիր է թողել, վոր Անանիա Շիրակացին, վորին նա վերագրում է «Առխարհա-

ցոյց»-ը, գիտե՞ս հասարակած» և «հասարակօրեայ» տերմինները (տես «Անանիայի Շիրակունւոյ Թագորդք բանից», հրատ. Բ. Պ., Ս. Պետերբ. 1877, եջ 57, 59, 68), վորոնք ծանոթ չեն «Աշխարհացոյց»-ի հեղինակին:

2) Անանիա Շիրակացին ճշտիվ տարբերում է իրարից «ծով» և «ծովակ» աշխարհագրական գաղափարները և «ծովակ» ե անվանում «Ասփալդէս»-ը՝ չոր մօտ յաշխարհն Հրէաստանի է» և Հայաստանում «Բզնունեաց ծով»-ը, իսկ «Աշխարհացոյց»-ի մեջ թե ծովերը և թե այդ ծովակները կոչվում են, մեծ մասամբ, անխտիր ծով: Կարևոր ալը տարբերությունը պարզ լերեւում է Շիրակացու և «Աշխարհացոյց»-ի հետևյալ վկայություններից.

Անանիա Շիրակացի, Մնացորդք բանից, «Եղապս ծովում», եջ 41՝

«Սակալն ոչ է պարտ զծովական ծովս կոչել. ոչ զԱսփալդէս ծովակ որ մօտ յաշխարհն Հրէաստանի է, և ոչ զՍերբինիգիս ծովակ որ է ընդ Եգիպտոս և ընդ Պաղեստինէ ի միջի, և գալ հասանէ յաշխարհն Արաբացւոց: Եւ ոչ մեր աշխարհիս ծովակս զոր կոչեմք Բզնունեաց, ե ոչ այլք որ յարեւլս են որ կոչին նոյնանմանք. զի սոքա զոր ասացաք՝ ծովակք են և ոչ ծովք.»

Տ. 36,26 և 31,23՝

«Եւ զԱսփաղախտէս որ է Մեռեալ ծոֆն».

«Եւ ծոֆն Բզնունեաց լերկալնն հարիւր մղոն է, և լալնն վաթսուն».

V. 608,1-2՝

«Ունի (Տուրուբերան) և ծով զԲզնունեացն»:

3) Անանիա Շիրակացին իրարից տարրեր ե համարում թլուրիմացաբար «Հիւրկանիա» և «Ասպիս» (= ըսա լերեուլթին՝ Κασιός) ծովերը, իսկ «Աշխարհացոյց»-ի հեղինակը գիտե, վոր այդ յերկու անունն ել վերաբերվում են Կասպից ծովին:

Շիրակացի, Մնացորդք բանից, «լաղազս ծովու», եջ 41՝

«Թէպէտ և ասեն ոմանք զծովէն որ անուանեալ կոչի Հիւրկանիա, և զնորուն ընկերէ որ կոչի Ասպիս, եթէ զատեալ մեկնեալ են ի բուն ծովէն, այլ որ փոլթ յանձին կալան զաշխարհ ամենայն ի գիր առնուլ, որպէս յառջն ասացի, ասեն թէ ծակք են ի միմեանս ծովքն, և երթան կցին ի միմեանս ներքոյ երկրի»:

S. 8,4—6 և S. 11,29՝

«Եւ զերից ծովուցն՝ զՀնգկացն եւ զՅունացն եւ զԿասբիցն որ է Վրկանի, բնակութիւն մարդկսն ասէ լինել յուրջ զնոքօք»:

«Երրորդ ծով՝ Վրկանին է՝ որ կոչի Կասբից»:
Հմմտե նաև V. 589,28—30 և 592,11՝

Ուշագրավ ե այս հատվածներում նաև այն, վոր Կասպից ծովն անվանված ե Շիրակացու մոտ «Հիւրկանիա», իսկ «Աշխարհացոյց»-ի մեջ՝ «Վըրկան»:

4) Շիրակացին և «Աշխարհացոյց»-ի հեղինակը միանգամայն տարբեր հասկացողութիւններ ունեն յերկրի ձևի մասին: «Աշխարհացոյց»-ի հեղինակը, համաձայն Պտղեմեոսի տեսության՝

յերկիրը համարում ե գնդաձև, իսկ Անանիա Շիրակացին, վոր կանգնած ե քրիստոնեական մեկնիչների տեսակետի վրա՝ յենթադրում ե յերկիրը «չորեքկուսի»։ Տարաձայն լինելով այս հիմնական խնդրում՝ շատ բնական ե, վոր նրանք տարբեր կերպ են բացատրում «ընդդէմերկրի» ու հակոտնյաների աշխարհագրական հարցը։

Անանիա Շիրակացի, Մնացորդք բանից, «յադագս երկրի», Եջ 37՝

«Եւ քանզի երկիր չորեքկուսի ի միջոցի երկնի կառուցաւ, ոչ թոյլ տայ սմա երկին իւրով երապութեամբն ի ներքին կիսագունտն խոնարհել՝ նույնը, «յադագս արեգական», Եջ 60՝

«Եւ արեգակն միայն միով անձամբ յորժամ երևիցի զամենայն սահմանս աշխարհի լուսաւորէ»։ նույնը, «յադագս երկրի», Եջ 39՝

«Ասեն արտաքինքն զբնակութիւն կենդանեաց աստի և անտի, եթէ գոն ի ներքոյ երկրի մարդիկ, և այլ կենդանիք որք ընդդիմոտունք են մեզ. որպէս ճանճք զխնձորով պատեալ, նոյնպէս մարդիկ զերկրաւ. և յամառեալ պնդին՝ ասելով. Եթե ոչ էին ընդդիմոտունք, զի արդեօք արեգակն տալր լոյս զկէս օրն, յորժամ ստուերաւն զմեզ գիշերուցանէ։ Զի անօգուտ արեգական զընթացս իւր ծախել անհնար է։ Այս են անմտութիւնք մեծ, և աւելի թուին ինձ ի սոցանէ ասացեալքն. թողում ասել զյանդիմանութիւնն որ յաստուածային գրոց»։

Տ. 6, 18—21՝

«Յորս նախ առնելի է զտիեզերաց ստորա-

գրութիւն նմանութեամբ գնդականաց պատկերին, եւ ապա ձեւիլ ըստ նորին նմանութեանն, երկրորդ գնդաւն աստիղականաւ, զմեծ կէս շրջանակին, ռնհիւով հարիւր ութսուն բնակութիւն մարդկան».

Տ. 7,19—23՝

«Եւ աստի անտի նորա Ովկիանոս ընդմիջելով զնա ի բնակութենէս եւ ի հարաւային կիսագնդէն, զոր ընդգէմերկիր կոչեցին բնակեցելոյ երկրիս մեծութեամբ ոչ ըստ սմա՝ ալ ըստ հյուսիսային կիսագնդին, զոր կոչեն զօսացեալ քանզի նմա ասեն փոքրագոյն գծագրիլ, վասն անձուկ գոլոյ բոլորակին».

Համտե նաև V. 587,6 — 11 և 589,7 — 13՝

Ծ) «Աշխարհացոյց»-ի հեղինակը և Անանիա Շիրակացին տարբեր կարծիքի լին նաև արեգակի մեծութեան մասին, ինչպես ալդ պարզ յերևում ե հետևյալ հատվածներից.

Շիրակացի. Մնացորդք բանից, «յաղագս արեգակա՛ն», Եջ 60՝

«Եւ յայսմ ամենայնէ լալտ է թէ մեծ է արեգակն, ըստ աստուածային գրոց վկայութեան. որում և արտաքնոցն բարեաց ի ճահ պատահեն վկայութիւնք: Քանզի ասեն թէ մեծութիւն լուսնոյ է ըստ չափոյ երկրի. և արեգականն առաւել է քան զնա՝ ըստ աստուածային գրոց».

Տ. 7,15—18՝

«Վասն որոյ ասացին զարեգակն շատ փոքր քան զերկիր. քանզի վաթսուն և վեց մասն ասեն զարեգակն, զերկուս նահանգս ասելով զբովան».

դակութիւն արեգական, այսինքն օթեանս քա-
ռասուն».

V. 589, 1-5՝

«Վասն որոյ ասացին զարեգակն շառ փոք-
րագոյն քան զերկիրս զայս լինել. քանզի վե-
ցերորդ վաթսներորդ լինել չափ արեգական, զեր-
կուս նահանգսն ասելով բովանդակութիւն արե-
գական, այսինքն է օթեվանս քառասուն»:

Չանց ենք առնում մեջ բերել նաև ուրիշ վկայու-
թյուններ, վորոնք միմյանց աննման են վոչ միայն
աշխարհագրական անուններով կամ տեղանքներով,
այլ և աշխարհագրական հիմնական բացատրություն-
ներով: Ինձ թվում ե՝ վերը բերված համեմատու-
թյուններն ել բավական են համոզելու, վոր «Աշխար-
հացոյց»-ի հեղինակի մասին տիրող ու ընդհանրացած
կարծիքը պարզ մի թյուրիմացություն ե և վոր այդ
լերկը չի կարող համարվել Անանիա Շիրակացու աշ-
խատություն:

9. Ասխարհագրական տեղեկությունների նմանություն-
ները, վոր նկատուիմ եմ խոսեցեացու պատմության յետ «Աս-
խարհացոյց»-ի սեղ: — Վերև մենք տեսանք, վոր Հյուս-
սըշմանի մատնանշած աննմանությունները և շեղում-
ները խորենացու պատմության ու «Աշխարհացոյց»-ի
մեջ զուրկ են կարևորությունից և վերանում են ու-
շագիւր քննությամբ: Ինձ թվում ե՝ իրավացի յեն,
ընդհակառակը, Վենետիկի Մխիթարյանները և վերո-
հիշյալ մյուս բանասերները, վորոնք նույն այս լեր-
կերի մեջ մատնացուց են արել վորոշ համեմադխու-
թյուններ աշխարհագրական հայացքների և տեղեկու-
թյունների:

Բացի վերև հիշված դիտողութիւններէց՝ Առաջին Հալքի տեղագրութիւն, Վանանդ գավառի անվան ծագման, «Արդող»-ի ու «Արտաղի», «Արգունի»-ի ու «Առաւելեան»-ների մասին՝ նախորդ ուսումնասիրութիւններում ցույց են տրված նաև հետևյալ նմանութիւնները.

ա. Նորենացու պատմութիւն (II, 2, էջ 102), ինչպես և «Աշխարհացոյց»-ի մէջ (S. էջ 41), Բուշանաց լեռերի մայրաքաղաքն անվանված է «Բահլ Առաւօտին» (= Bahli-bamik, տես Marquart, Eranschahr, էջ 87, 147 և Халатьянц, Армянские Аршакиды, էջ 14 և 16), վոր Եմինը Նորենացու պատմութիւն ռուսերեն իր Թարգմանութիւն ծանոթութիւններէց մեկում մեկնում է «Բահլ Արևելիան» (տես «История Армении Моисея Хоренского», Москва 1893, էջ 240 — 241, ծանոթ. 124): «Աշխարհացոյց»-ի և պատմութիւն ալդ վկայութիւնները նման են իրար նաև այն տեսակետից, վոր «Պահլաւ» և «Պարթև» անունների ծագումը ակնարկված է նրանց մէջ Բահլ արքայանիստ քաղաքի ու համանուն գավառի անունից:

Նորենացի II, 68, էջ 204 (Տիդիս 1913)՝

«Եւ ինքն [Արշակ Մեծ] չուեալ ի Բահլ՝ հաստաւեաց զԹագաւորութիւնն իւր ամս յիսուն և յերիս. վասն սրոյ զարմք նորա Պահլաւք անուանեցան, որպէս և եղբօրն Վաղարշակայ ի նախնւոյն անուն՝ Արշակունիք».

Նույնը II, 74, էջ 211՝

«Սոստանայր [Արտաշիւր] զբուն տունն դար-

ձուցանել ի նոսա, որ Պահլաւն կոչէր, զարքայանիստ քաղաքն Բահլ, և զամենայն աշխարհն Գուշանաց».

V. 614,3-8՝

«և աշխարհք են Արեաց այսոքիկ... Բահլ որ են Պարթևք.

S. 41,29-31՝

«որոյ ի հիւսիսոյ Պարթևաց աշխարհն, ասէ Պաղոմէոս՝ ընդ մեջ ցուրտ կրմանալ և Վրկանի. քալց Պարսիկք կոչեն այժմ յաղագս Բահլ քաղաքի զնա Բահլի-բամիկք, որ է Բահլ-առաւօտին».

ր. Խալաթյանցի ասելով՝ ինչպես պատմութիւն (I, 8, 9. եջ 28 և 30). նույնպես և «Աշխարհացոյց»-ի մեջ (V 613.9 և S. 38.1), հիշատակված ե նիւնուէն քաղաքը. վորը՝ համաձայն Սերեոսի վկայութիւնների՝ Սասանյան վերջին Թագավորների ժամանակ դառել եր նորից կենտրոնական խոոր քաղաք («Армянские Аршакиды», եջ 25, 26 և 376).

գ. նույն քանասերի ասելով՝ թե պատմութիւն և թե «Աշխարհացոյց»-ի մեջ Ճանիւք գովառը (Մալալասի ժամանակագրութիւն մեջ՝ T'zay-vixh) նույնացված ե Խաղտիքի հետ («Арм. Аршакиды», եջ 129).

Խորենացի II, 76, եջ 215 (Տիգրիս 1913)՝

«Իսկ Արտաշիւր հասեալ ի Տակիտոս՝ ի փախուստ դարձուցանէ, որ ե սպանաւ ի լիւրոցն ի Ճանիւս Պոնտացոյց, որ են Խաղտիք».

V. 605,11-13՝

«Եւ ունի Եգեր փոքր աշխարհա չորս... զձա-
նեթ որք են Խաղտիք».

Տ. 27,27—28՝

«Եւ ի շանիւս որ են Խաղտիք»:

Ուշադրութեան արժանի յե այս վկայութիւն-
ներում, վոր պատմութեան և «Աշխարհացոյց»-ի
ընդարձակ խմբագրութեան մեջ գալառն անվան-
ված ե «Ճանիւս»:

Այս նմանութիւնների վրա ավելացնելու յե նաև
մեր նկատած հետեյալ կարևոր նմանութիւնները.

ա. «Աշխարհացոյց»-ի մեջ Պարսից աշխարհը
բաժանված ե չորս յերկրամասերի՝ Մարք, Խու-
ժաստան, Պարսք և Արիք: Այս ստորաբաժա-
նումն ուրուշն ե ու անսովոր այն տեսակետից,
վոր Պարսկաստանի արևելյան շրջանը՝ Խորասա-
նը՝ անվանված ե Արիք (տես V. 614,1 և S. 40,13
և 41,25): Արգ՝ առանձնապես ուշագրավ ե, վոր
Խորենացու պատմութեան վկայութիւններից մե-
կում (II, 57, եջ 187) աշխարհագրական Արիք
անունը հիշատակված ե նույնալս նեղ ու առանձ-
նահատուկ նշանակութեամբ, վորը ծանոթ չե հին
հայոց մատենագրութեան մյուս աղբյուրներին:

բ. Ըստ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբա-
գրութեան՝ Արիք — Խորասանում ե գտնվել Ահ-
մադան գալառը (տես S. 40,14): Ինչ թվում ե՝
Ահմադանի տեղագրութեան մասին նույն ոտա-
րոտի ու արտասովոր տեղեկութիւնը կրկնված ե
նաև Խորենացու պատմութեան հետեյալ հատվա-
ծում.

Խորենացի II, 57, եջ 187 (Տիգլիս 1913)՝

«Յաւուրս սորա [Արաաշխի] ասեն եկեալ զաղ-
գըն Ամատունեաց ի կողմանցն արեւելից
Արեաց աշխարհին... Տարեալք են նոքա ի
Սրշակայ առաջին ի Պարթեաց Թագաւորեցելոյն.
և յառաջադիմութեամբ անդէն յԱրեաց աշ-
խարհին ի պատիւ հասեալք ի կողմանս
Ամատանի: Բայց թէ լինչ պատճառաց զա-
լուստ նոցա այսր՝ ոչ գիտեմ. ալլ պատուին
յԱրաաշխէ գեղիւք և զաստուկերտօք, և անուա-
նին Ամատունիք, որպէս թէ եկք»:

Յեթե ճիշտ է իմ այս մեկնութիւնը՝ այդ
դէպքում սխալ պետք է համարել Ադոնցի կար-
ծիքն Ամատունիների ծագման մասին, վորոնց
սկզբնական հայրենիքը նա յենթադրում է Ատր-
պատականի սահմաններում (տես «Армения в
эпоху Юстиниана», СПб 1903, էջ 321):

Գ. «Աշխարհացոյց»-ի մեջ Հայաստանին սահ-
մանակից հարավ-արեւմտյան շրջանը, վորի մեջ
գտնվում էին Ուռհան և Մծբինը, անվանված է
Միջագետք, իսկ հարավ-արեւելյան շրջանը, վորի
մեջ էր Շիրուէն՝ «Արուաստան, որ կոչի Ասո-
րեստան» (տես V. էջ 611 և 613): «Աշխարհա-
ցոյց»-ի այս տեղեկութիւնը հիմնովին տարբեր
է Ագաթանգեղոսի, Փափստոսի և Սեբեոսի վկա-
լութիւններից, վորոնց մեջ «Արուաստան» է
կոչված Մծբնի շուրջը և արեւմտակողմը գտնվող
յերկիրը: Ուշադրության արժանի չե ըստ իս,
վոր Խորենացու պատմության մեջ՝ համապա-
տասխան «Աշխարհացոյց»-ի տեղեկության՝ Մի-
ջագետք են տնվանվում Մծբնի և Ուռհայի շրջ-

ջանները, իսկ Ասորեստան՝ վերոհիշյալ «Արու-
աստան-Ասորեստան»-ը:

դ. Խորենացին Փոքր Ասիան անվանում է
Միջերկրացի (I, 8, հջ 28. II, 14, հջ 127 ևն),
Նույն անունը գործ է ածված և «Աշխարհացույց»-ի
մեջ (տես S. 21,29 և V. 600,5),

ե. Ուշադրութիւն արժանի լե նահ ալն, վոր
թե պատմության և թե «Աշխարհացույց»-ի մեջ
աշխարհագրական անունները գրված են հաճախ
նման ու անսովոր ուղղագրութեամբ.

1. Ալիւս կամ Ալիս = Halys՝ Խորհն. II, 13,
հջ 124 և 125. Ալիս — S. 24,14. 25,5 և V. 603.2.22.

2. Գալիլեայ, ծան. Գալիլիայ = Galilaia, Ga-
lilaia՝ Խոր. II, 21, հջ 136. Գալիլիա — S. 36,24
և V. 611,17.

3. Գաղղիուս, ծան. Գալլիուս՝ Խոր. II, 88,
հջ 237. Գաղղիուս V. 594,9. Գալլիուս S. 14,23.25,
նահ Գաղղիա V. 594,12.

4. Գութք — Խոր. II, 79, հջ 218. Գուղք —
V. 591,28. 594,20. 596,11. S. 11,2. 16,30.

5. Ելլադա, ծանոթ. Եղղադա՝ Խոր. II, 12,
հջ 123. II, 13, հջ 126. III, 62, հջ 346. Ելլա-
դա — V. 596,20. S. 17,18.

6. Վերիայ — Խորեն. II, 8, հջ 114. «Վեռիա,
այս ինքն է Վիրք» — V. 605,16:

Այս բազմաթիվ համերաշխութիւնները մի կողմից
Խորենացու պատմութեան և մյուս կողմից «Աշխար-
հացույց»-ի մեջ չեն կարող ըստ իս պատահական գու-
գադիպութիւն լինել: Սույն ուսումնասիրութեան շա-
րունակութեան մեջ մենք պարզ ու վորոշ կը տեսնենք,

վոր բոլոր այդ նմանությունները բացատրվում են նրանց հեղինակի նույնությամբ: Հենվելով ուրիշ՝ ավելի հաստատուն հաստեղի վրա, մենք ցույց կըտանք, վոր «Աշխարհացոյց»-ի հեղինակը նույն ինքն խորենացին է, վոր մեծ չափով ոգտվել է այս աշխատությունից իր պատմության աշխարհագրական մասերում:

10. Վոր «Աւետարնացոյց»-ն ամպայտն խորեմացունն է՝ այդ յերելում է նրա վոնից, բազմաթիվ դարձվածքներից ու մատենագրելու բնութոս ձեւից, վոր հասունկ են միայն խորեմացուն: — Վերև հիշեցինք, վոր Պատկանյանը «Աշխարհացոյց»-ի լեզուն բոլորովին տարբեր է համարում խորենացու պատմության լեզվից: Նրա կարծիքով՝ «Աշխարհացոյց»-ի հեղինակի վոչ լեզուն, վոչ մատենագրելու ձևը, վոչ ել հունարեն լեզվի հըմտության աստիճանը բնավ թուլլ չեն տալիս վերագրելու այդ յերկը խորենացուն: Վենետիկի Միխիթարյանները և, մասնավորապես, Սուքրյանը՝ պնդում ելին, ընդհակառակը, վոր «Աշխարհացոյց»-ի լեզուն միանգամայն նման է խորենացու լեզվին. ուստի և այդ աշխատությունը յենթադրում ելին խորենացու գործ: Հակասական և անհաշտելի այս կարծիքները ցույց են տալիս, թե վոքան դժվար է յեզրակացություններ անել հին մատենագիրների լեզվի ու վոճի առանձնահատկություններից:

Բանասիրական նորագույն ուսումնասիրություններում մատենագրական հին յերկերի փոխադարձ կապը և աւընչությունը, ինչպես և այդ յերկերի հեղինակների նույնության հարցը, վճռվում են հաճախ բառամթերքի ու առանձնահատուկ բառերի համեմատությամբ: «Աշխարհացոյց»-ի և խորենացու պատմության

մեջ ևս մասնացույց են արված հաղվագյուտ ու նման բառեր, վոր շատ քիչ են հանդիպում կամ բնավ չկան ուրիշ յերկերում. որինակ՝ «տափաքիթ» — խոր. II, 8, եջ 114 և V. 615, 6. «հաւք ճարակաւորք» — խոր. III, 59, եջ 338 և S. 30, 4. «բազմաշրջութիւն» — խոր. I, 30, եջ 83 և V. 589, 20. S. 7, 29. «Ալրեցած» — խոր. I, 30, եջ 84 և V. 585, 20. S. 5, 14. «հրէշ» — խորեն. II, 81, եջ 223 և V. 616, 14. S. 46, 7, և ուրիշ նման բառեր: Այդ բառերի վրա մենք յերկար կանգ չենք առնում, վորովհետեւ զգուշանում ենք լուրջ հետեւութիւններ անել առանձին բառերի նմանութիւններից, վոր պատահական են հաճախ և ավելի քան վիճելի:

Բառաքնական համեմատութիւններից մենք շատ ավելի կարեւոր ենք համարում «Այխարհացույց»-ի և պատմութիւն մեջ լեզվական մի ալ յերեւոյթ, վոր նկատված չե լեղել և քննութիւն չե յենթարկվել նախորդ ուսումնասիրութիւններում:

խորենացին իբրեւ պատմագիր ունի, ինչպես հայտնի յե, հետաքրքիր առանձնահատկութիւններ, վորոնցից զուրկ են մյուս հայ պատմագիրները: խորենացին հիշում ու քննադատում ե, սովորաբար, իր գործածած աղբյուրները: Պատմական անցքեր նկարագրելիս նա անտարբեր արձանագրող չե, այլ նաեւ այդ անցքերը լուսաբանող ու գնահատող: Նրա այս առանձնահատկութիւններին համապատասխանում ին, բնականաբար, նրա մատենագրելու ձեւը և վոճը:

խորենացու պատմութիւն մեջ սովորական են բնորոշ դարձվածքներ, ինչպես՝ — «գիտեմ», «ոչ գիտեմ», «կարծեմ», «ինձ թուի», «հաւանեալ եմ», «ոչ հաւատամ», «ճշմարիտ է», «մեզ անհաւատալի է» — վո-

րոնք գրեթե չեն հանդիպում մյուս մատենագիրներին մոտ: Հետաքրքիր է արդև ուշագրավ, վոր նույն այս դարձվածքները հանդիպում են շարունակ և «Աշխարհացոյց»-ի մեջ:

Կարևոր այս փաստը զորավոր մի ապացույց է. անշուշտ, «Աշխարհացոյց»-ի և պատմութիւան հեղինակին ունեցած լիակատար, ուստի և ներքև մեջ ենք բերում մեր համեմատութիւններն ամբողջութեամբ ու առանց կրճատումների:

«Գիտեմ». Խոր. II, 7, եջ 111 — «Գիտեմ և զԳնու-նիսդ գինի ունիս». I, 19, եջ 57 — «այսպէս հաւաստեալ գիտացուք զկարգ բանից». II, 7, եջ 112 — «ոչ գիտեմ թէ վասն սպառելոյ ազգին առաջնոյ»:

= S. 31 — «Ասեն թէ նհանգ կայ յԱրածանի, որպէս յԵփրատ, զոր հաւաստի գիտեմք, կենդանի քարքաշամ գուգեալ...» S. 37 — «ունի [Միջագետք] լերինս երկու, ասէ Պտղոմէոս, զմինն կոչէ Սեգառոս, զոր ոչ գիտեմ ով է». S. 37 — «զայս երկու գետս գիտեմ Միջագետաց Ասորաց». S. 42 — «զի տլժմ այլազգ ոչ գիտեմք»:

«Կարծեմ». Խոր. I, 6, եջ 22 — «որում ոչ զոք ընգդիմանալ կարծեմ ի միտս ունողացն». I, 3, եջ 12 — «սակայն և ի նոցանէ՝ զոր ինչ հավաստին կարծեմք, առնուլ»:

= S. 12 — «առ մուտս Տառայ գետոյ, զոր կարծեմ եմաթ է». S. 19 — «որ կոչի Ռաւանիտենիա, զոր կարծեմ զՄարեայ լիճն լինել». S. 37 — «զմիւսն կոչէ Քաբառոն, զոր

կարծեմ խաբոր լինելը»։ Տ. 8 — «Ընդ որով թագեալ կարծեմ զարեգակն»։ հմմտե նաև Տ. 20, 38, 45։

«Ինձ բռնի»։ Խոր. I, 3, եջ 11 — «Այլ ինձ թուի, որպէս ալժմ՝ և առ հինսն Հայաստանեայցս լեալ անսիրելութիւն իմաստութեան և երգարանաց բանաւորաց»։ I, 4, եջ 16 — «Ինձ թուի՝ հանգուցանելն դագաբեցուցանել է»։ I, 18, եջ 56 — «այլ հաւաստի մեզ թուեցաւ»։ I, 6, եջ 12 — «որ ինձ թուին Սեմ, Քամ և Յարեթ»։ = Տ. 13 — «Ինձ թուի Սեմայ, Քամայ և Յարեթի»։ Տ. 12 — «Ինձ թուի՝ Մրւ եւ Մրվռոտ», Տ. 41 — «եւ աստուածային գիրն զամենայն Արեաց աշխարհն Պարթևք կոչէ»։ Ինձ թուի վասն թագաւորութեան ի նոցանէ լինելոյ»։ հմմտե նաև Տ. 42, 5.11։

«Հաւաքեալ եմ», «ոչ հաւաքեամ»։ Խոր. I, 6, եջ 24 — «բայց որպէս ես հաւանեալ եմ, բազում ինչ ճշմարիտ է»։ I, 13, եջ 43 — «հաւանեցաք անցանել սակաւութիւն և ընդ կարգ բանից պատերազմացն որ ի Հալկեանն Արամայ»։ I, 15, եջ 48 — «որպէս հաւանեալ եմ»։ II, 67, եջ 203 — «բայց ես հաւանեալ եմ ձեզ և լերկար առնել զպատմութիւն ժամանակիս այսորիկ»։ II, 88, եջ 238 — «բայց այս մեզ անհաւատալի է»։

= V. 590 — «Այլ հաւանեալ եմ Պողոսեայ պատմութեանն»։ V. 592 — «բայց ես ոչ հաւատամ»։ Տ. 13 — «բայց ոչ հավանիմ»։ Տ. 11 — «եւ որ զնմանէ զրոյցք, անհաւատալիք»։ Տ. 39 — «որում ոչ հաւատացաք»։

«Ռօմարիս է»։ Խոր. I, 8, եջ 20 — «եւ է ճշմարիտ, եւ մի ոք յերկուսացի. քանզի պատմէ մեզ զայսոսիկ ի լուով իրս հաւատարիմն Արիւդենոս»։

= V. 589 — «եւ երկիր բնակութիւն մարդկան ասէ շուրջ լինել զնոքօք. և է ճշմարիտ»։ S. 8 — «բնակութիւն մարդկան ասէ լինել շուրջ զնոքօք. եւ ճշմարիտ է»։

«Ասեմ», «տեսցում», «տեսայում»։ Խոր. II, 7, եջ 111 — «Ասեմ և զՍպանդունիսդ ի վերայ գնահարանաց»։ I, 19, եջ 57 — «եւ ասեմք լինել արդարաբան ի պատմութեանս յայսմիկ ըստ մերոյ լօժարութեան եւ ուղղամտության»։ I, 12, եջ 42 — «որպէս ասացաք»։ II, 68, եջ 204 — «Սորա լինին որդիք երեք և դուստր մի. որպէս յառաջագոյն ասացի»։ II, 67, եջ 202 — «որպէս ասացաք, ի Վաղարշալ առնու զթագաւորութիւնն Խոսրով որդի Նորին»։ I, 21, եջ 64 — «ասասցուք որ ինչ հարկաւորն է»։ II, 69, եջ 205 — «բայց մեք ասասցուք ի մատենէն»։ հմմտե նաև II, 8, եջ 114. II, 49, եջ 176, ևն։

= S. 39 — «բայց ասեմ թէ ըստ դիպուածոյ անցանէ անդ պասկուճ հաւ»։ S. 40 — «այսինքն զոր ասեմ»։ S. 9 — «եւ յաղագս ովկիանոսի՝ որպէս յառաջագոյն ասացի, է զկողմամբ Զեփիռոս հողմոյ»։ S. 10 — «արդ որպէս ասացաք ցվաթսուն մասն ովկիանոս եկեալ դադարէ»։ S. 12 — «զոր նախն ասացաք»։

S. 29 — «բայց մեք ասասցուք զբուն աշխարհն Աղուանից»:

«Իրեմ», «գրեմ». Խոր. II, 1, եջ 101 — «գրեմքեզ ակժմ և որ ինչ առանձին մերոյ աշխարհիս գործք». II, 1, եջ 101 — «բայց գրեմ կարճ ի կարճոյ». I, 5, եջ 21 — «սկսաք գրել»:

= V. 690 — «մեք որպէս անհաս եղեալ մեծութեան լռեմք և գրեմք զայս միայն». V. 588 — «յորմէ մեր ծայրաքաղ արարեալ գրեցաք զմեծամեծսն և զնշանաւորսն միայն». S 14 — «բայց գրեմք զգետս միայն անուանիս»:

«Ակսայց», «սկսցուք». Խոր. I, 3, եջ 12 — «բայց սակալն սկսայց, թէպէտ և ջանիւ». I, 3, եջ 12 — «և սկսայց յորոց և այլքն». I, 7, եջ 28 — «այլ սկսեալ ցուցից քեզ զմերն, թէ ուստի և իրպէս»:

= V. 590 — «արգ սկսցուք ըստ Պապայ Աղեքսանդրացւոյ երկրագրութեանն». V. 593 — «այսուհետև սկսցուք պատմել աշխարհ աշխարհ առանձինն». S. 13 — «սկսանիմք պատմել զառանձնութիւն նոցա ըստ գրից Պապայ Աղեքսանդրացւոյ»:

Նշանակելու յի, մանավանդ, նաև հետևյալ դարձվածքները, վոր հատուկ են Խորենացուն՝

Խորեն. II, 88, եջ 238 — «Բայց այս մեզ անհաւատալի է, այլոց՝ որպէս կամք իցեն»:

Խորեն, I, 14, եջ 47 — «Իսկ որ այլ ի լոմանց ասի ի յունական կողմանսն՝ մեզ ոչ է հաճոյ. այլոց որչափ կամք իցեն»:

Խորեն. I, 6, եջ 24 — «Արդ՝ զայսոսիկ այլ

որ թէպէտ առասպելա, թէպէտ ճշմարտութիւն հաշուեալ համարեացի՝ բայց որպէս ես հաւանեալ եմ, բազում ինչ ճշմարիտ է»:

== Տ. 46, 23—24 — Շինձ անհաւատալիք, այլոց որպէս կամք իցենք:

Տ. 23, 9 — Վեթէ առասպել է եւ եթէ ճշմարիտ ոչ գիտեմք:

Գրեւոր միևնույն սովորությունը, միևնույն դարձվածքները, վոր գործ են ածված վերոհիշյալ համեմատութիւններում, անկարելի չե, իհարկե, համարել պատահական: Պարզ ե, վոր մատենագրելու այս հատուկ ձևը բացատրվում ե այդ լերկերի հեղինակների նույնությամբ:

Ի նկատի ունենալով խորենացու խնդրի բացառիկ կարևորութիւնը՝ ավելորդ չեմ գտնում մեջ բերել մի նոր փաստ եւ, վորով հաստատվում ե դարձյալ միևնույն յեզրակացութիւնը:

Ինչպես հայտնի չե, խորենացու առանձնահատկութիւններից մեկն ել այն ե, վոր նա ժողովրդական հին առասպելները համարում եր ալլաբանութիւն ե կարծում, վոր նրանք ճշմարտութիւն իրաց ալլաբանաբար չինքեանս ունին թաքուցեալ» (տե՛ս I, յաւելումա՛ծ Ա, եջ 90): Այդ առասպելներին պատմութիւն մեջ նա աշխատել ե տալ բնական վորեւե բացատրութիւն: Պատահական չե, անշուշտ, վոր առասպելների մասին միևնույն հայացքը մենք գտնում ենք նաեւ «Աշխարհացոյց»-ի մեջ:

Ուշադրութիւն արժանի չեն այդ տեսակետից պատմութիւն ու «Աշխարհացոյց»-ի հետեյալ վկայութիւնները:

Նոր. I, 7, ԵՂ 27՝

«Եւ ընդէր սա գտակ հրոյ, և կամ Պրոմեթէոս գողացեալ առ ի յաստուածոցն զհուր և շնորհեալ մարդկան, — որ է ալաբանութիւն, — ոչ բերէ ասել կարգ բանիս».

Նույնը, I, 30, ԵՂ 84՝

«Երրս շարին բանք երգոցն զԱրտաշիսէ և զորդոցն նորա, յիշելով ալաբանաբար և զդարմիրցն Աժգահակայ, վիշապազունս զնոսա կոչելով. զի Աժգահակդ՝ ի մեր լեզուս է վիշապ».

Նույնը, II, 49, ԵՂ 176՝

«Այս ամենայն, որպէս ասացաք, յայտնի են քեզ լերզս վիպասանացն, բայց լիշատակեսցուք և մեք կարճառօտիւք, և զալաբանութիւնն ճշմարտեսցուք».

S. 20, 13—16՝

«զոր ասեն թէ գնաց Զոսիմոս միայնակեացն. բայց կարծեմ թէ զրոյցն ալաբանութիւն ե, զոր պատմեն զնմանէ».

S. 45, 22—29՝

«Իսկ ի հարաւ կոյս դաշտք են փզուց ճաբակք. եւ ասեն թէ մին ազգն էզք են բնակիչք աշխարհին, եւ ի փղաց կուսէ ժամանակ ինչ ի տարւոջն շունք անցանին, եւ խառնակին ընդ կանախն, եւ լգացեալ ծնանին երկուորիս, զմիւսն կորիւն եւ զմիւսն ազջիկ. եւ կորիւնք անցանեն ընդ գետն առ հարսն. եւ աղջկացն մնալով առ մարսն. բայց ես ալաբանութիւն կարծեմ. որպէս վասն Ամազոնացն պատմի յԱղեքսանդրի գիրսն, զոր Թւրասլաց ազգ են ալաբանեալ».

Ինչպես տեսնում ենք, «Աշխարհացոյց»-ի և պատմութիւն մեջ նման են ու համերաշխ վոչ միայն աշխարհագրական վերոհիշյալ տեղեկությունները, այլ և մատենագրելու այն հատուկ ձևը և անգամ վորոշ հայացքները, վորոնք հայոց մատենագրութիւն մեջ առանձնահատուկ են լեղել բացառապես Խորենացուն:

Արդ՝ նոր այս դիտողութիւններն այնքան կարևոր են ու ծանրակշիռ, վոր կարող ենք, ինձ թվում է, «Աշխարհացոյց» ի հեղինակի խնդիրը համարել վերջնականապես պարզված: «Աշխարհացոյց»-ի հեղինակն է, անտարակուս, Մովսես Խորենացին, և Վեհետկի Մխիթարյաններն այդ կետում կատարելապես իրավացի լնն: Միանգամայն ճիշտ է, ուրեմն, և ձեռագիրների ավանդական վերնագիրը, վորի մեջ Մովսես Խորենացին պարզ ու վորոշ հիշված է՝ իբրև «Աշխարհացոյց»-ի հեղինակ:

Իսկ յեթե ալդ ալդպես է, ուրեմն, մեր այս ուսումնասիրութիւն մեջ, վորի հիմնական նպատակն է լուծել Խորենացու առեղծվածը, մեզ կարող է կռվան ծառայել վոչ միայն Խորենացու պատմութիւնը, այլ և նրա «Աշխարհացոյց»-ը:

11. Խորենացու պատմութեան յել «Աշխարհացոյց»-ի վերնագրեր: — Վոր «Աշխարհացոյց»-ը և Խորենացու պատմութիւնը միևնույն հեղինակի գործ են՝ ալդ յերևում է նաև ուրիշ ցուցումներից վոր վրիպել են բանասերների ուշադրութիւնից:

Հետաքրքիր է նախ, վոր ոտարագգի աղբյուրները, վորոնցից միջանկյալ կերպով ոգտվել է «Աշխարհացոյց»-ի հեղինակը, հենց նույն այն հայտնի մատենագիրներն են, վորոնք աղբյուր են ծառայել նաև

Խորենացու պատմության, Այսպիսի ընդհանուր աղբյուրներ են՝ Կեղծ-Կալիսթենեսի Աղեքսանդրի վեպը (տե՛ս վերև § 3 և Տաշյան «Ուսումնասիրութիւնք Սըտոյն-Կալիսթենեսայ»), Եվսեբիոս Կեսարացու ժամանակագրութիւնը (տե՛ս վերև § 3), Հովհաննէս Մաղաղասի ժամանակագրութիւնը (տե՛ս վերև § 3 և Կարիյեր «Նորագոյն աղբերք Մովսիսի Խորենացու», հավելված, էջ 7 — 31) և, իմ կարծիքով, նաև Նոննոսին վերագրված առասպելաբանական մեկնութիւնները (տե՛ս վերև § 3 և Халатъянц, Армянские Аршакиды):

Ավելի հետաքրքիր են ու ուշագրավ Խորենացու պատմության և «Աշխարհացոյց»-ի նման ու արտասովոր վերնագրերը:

Խորենացու պատմության վերնագիրն է ըստ Արեղյանի և Հարութիւնյանի քննական հրատարակության՝ «Հայոց պատմութիւն լերիս հատուածս ասացեալ Մովսիսի Խորենացու ի խնդրոյ Սահակայ Բագրատունու»: Ապա գալիս են պատմության յերեք մասերի հետևյալ վերնագրերը՝ «գիրք առաջին», «գիրք երկրորդ» և «հատած երրորդ»: Հիշյալ խորագրի մեջ սկզբնական բնագրում լեզած պիտի լինի ըստ իս վնչ թե «լերիս հատուածս», այլ «լերիս հատածս», ինչպես ունենե՛ս bcef ձեռագիրները (տե՛ս քննական հրատարակութիւն, Տփղիս 1913, էջ 1), նաև Եւսեբիոսը և հունարան գպրոցի քերթողները: Իսկ պատմության առաջին և յերկրորդ մասերում, — այնպեղ՝ ուր գտնվում են այժմ «գիրք առաջին» և «գիրք երկրորդ» վերնագրերը, — բուն ձեռագիրն ունեցած պիտի լինի, հավանաբար, «հատած առաջին» և «հատած երկրորդ»:

Պատմության բաժանումը «հատած»-ների մատնանշված և կարենյանի ունեցած լերկրորդ ձեռագրի վտանավոր հիշատակարանի հետևյալ տողերում (տես «Բաղդատութիւն Պատմութեան Մովսիսի Խորենացու տպագրելոյն ի Վենետիկ ընդ երկուց ձեռագրաց», Թիֆլիս 1858)՝

«Երբեակ հատածք սոյն մատենի վիպագրութեան և Մովսիսի Խորենացու գերալրական»:

Վորովհետև «հատած»-ը խորթ և անսովոր բառ էր՝ Թովմա Արծրունու մոտ Խորենացու պատմության մասերն անվանված են «հատուածք» («վերադարձութեան ի վերայ երկեցունց դրուագեալ հատուածին», տես «Թովմայի վարդ. Արծրունու, Պատմութիւն տանն Արծրունեաց», Ս.-Պետերբ. 1887, էջ 76), իսկ Բաղդշու Ամըրդու վանքի Խորենացու ձեռագրի հիշատակարանում՝ «հատոր» («տրոհեալ ի հատորս երիս», տես Միաբան, «Խորենացու պատմութեան ուսումնասիրութիւն», Վաղարշապատ 1896, էջ 42):

Միանգամայն պարզ է մեջ բերված այս վկայութիւններէից, վոր պատմության բաժանումը «հատած»-ների անպայման Խորենացունն է:

Արդ՝ ուշագրավ է առանձնապէս, վոր խորթ ու արտասովոր նույն «հատած» վերնագրերը, վոր չեն հանդիպում մատենագրական մյուս հին լերկերում, ունի նաև «Աշխարհացոյց»-ը՝ V. 590 – «Աշխարհագիր. հատած երկրորդ», Տ. 18 – «Լիբիա. երկրորդ հատած աշխարհիս», Տ. 21 – «Հատարեցաւ երկրորդ հատածն»:

Այս նմանութիւնը ևս, անշուշտ, պատահական չէ:

Քանի վոր վերև ցույց եր արված արդեն, վոր պատմությունը և «Աշխարհացոյց»ը միևնույն հեղինակի աշխատություններ են՝ ինքն ըստ ինքյան հասկանալի լին այժմ թե նրանց վերնագրերի այս նմանությունը և թե վերոհիշյալ նրանց աւրյուրների նույնությունը:

12. Յե՞րբ ե գրված խորեմացու «Աւխարհացոյց»-ը: — «Աշխարհացոյց»-ի հորինման ժամանակը գիտնականները, ինչպես վերև տեսանք, լենթագրում են զանազան դարաշրջաններում: Ինճիճյանը և Սուքրյանը՝ նրա գրվելու ժամանակը դնում եյին հինգերորդ դարում, Սենտ-Կրուան՝ յոթերորդ դարի վերջերում կամ ութերորդ դարի սկզբում, Սեն-Մարտենը՝ իններորդ դարի վերջերում կամ տասերորդ դարի կեսում, Պատկանյանը՝ յոթերորդ դարում, Գուտշմիտը՝ յոթերորդ դարի կեսերին, և Մարկվարտը՝ ամենականուխը յոթերորդ դարի վերջերում:

Վենետկի Մխիթարյանների հին կարծիքի վրա ավելորդ ե այժմ կանգ առնել, վորովհեան Խորենացին, ինչպես վերը հիշեցինք, թե իր պատմության և թե «Աշխարհացոյց»-ի մեջ ոգտվել ե ավելի ուշ ժամանակի աղբյուրներից և քաղել ե նրանցից ավելի նոր ժամանակի աշխարհագրական տեղեկություններ: Կարող ենք անտես առնել նույնպես այն գիտնականների կարծիքները, վորոնք «Աշխարհացոյց»-ը թյուրիմացաբար համարել են Անանիա Շիրակացու աշխատություն և նրա ժամանակը լենթագրել ըստ այդմ յոթերորդ դարում:

Ժամանակի խնդիրը պետք ե, ուրեմն, նորից քննել, մի կողմ դնելով նախառյալ այդ կարծիքները, և կանգ առնել բանասերների փաստական միայն դի-

տողությունների վրա, վոր վերաբերվում են այս խընդ-
րին:

Իբրև ապացույց, վոր «Աշխարհացոյց»-ը գրված է
յոթերորդ դարի առաջին կիսում, Պատկանյանը բերում
է հետևյալ իր դիտողությունները. նախ, վոր այդ
գրվածքում չեն նկատվում այն փոփոխություններն
Առաջավոր Ասիայի վիճակում, վոր առաջացած պիտի
լինեյին արաբների ժամանակ. ուստի և, նրա կար-
ծիքով, «Աշխարհացոյց»-ի գրության ժամանակը կա-
րելի յե ճշտիվ վորոշել մինչև արաբների մուտքը Հա-
յաստան՝ խոսքով Բ-ի ու նրա հաջորդների և Հսրակ
կայսեր ժամանակաշրջանում: Յերկրորդ, վոր «Աշխար-
հացոյց»-ում մատնանշված են յերեք Արաբիա, վորոնք
ունեցել են արաբական բնակչութիւն. իսկ այդ չեր
կարող անել «Աշխարհացոյց»-ի հեղինակը, յեթե նա
ապրած լիներ արաբական նվաճումների ժամանակ:
Յերրորդ, վոր Իրանի վաթսուն շրջանի աշխարհագրա-
կան անուններում չե նկատվում արաբական արտա-
սանության ազդեցութիւնը և, բացի այդ, չկան նրանց
մեջ զուտ արաբական անուններ, վորոնք արագ կեր-
պով տարածվել ու սովորական ելին դառել Պարսկաս-
տանում (տես «Армянская география», եջ XIII):

Ըստ իս այս դիտողություններից և վոչ մեկը հա-
մողիչ չե: Առաջին դիտողութիւնը պարզապես սխալ
է, վորովհետեւ «Աշխարհացոյց»-ի մեջ կան ակներև
նշաններ այն փոփոխութիւնների, վոր առաջ ելին
յեկել արաբական տիրապետության ժամանակ. որի-
նակ՝ «Աշխարհացոյց»-ում հիշատակված է Բասրա քա-
ղաքն «ամենալից վաճառօք» (V. 612, 7), Կոֆա կամ
Ակողա քաղաքը՝ իբր «բնակեալ բանակ Տաճկաց» (Տ.

38,16), «Արուաստան, որ կոչի Ասորեստան՝ այս ինքն Մուծղ» (= Մոսուլ, տես V. 613,8) են: Յերկրորդ գիտողությունը ճիշտ չե և անգամ անհասկանալի յե, վորովհետեւ լեռեք Արաբիան՝ «Ապառաժ, Անապատ և նըջանիկ» գոյություն են ունեցել, անշուշտ, և արաբական աշխարհակալության ժամանակ և բնիկ ցեղերն էին այնտեղ դարձյալ արարները: Յերրորդ գիտողությունը ևս հիմնավոր չե, վորովհետեւ Պարսկաստանի աշխարհագրական մասում «Աշխարհացոյց»-ի հեղինակն ոգտվե, ե, ինչպես մատնացոյց ե արել Մարկվարտը («Eranschahr», եջ 5), գլխավորապես, նեստորական լեկեղեցական աղբյուրից, սակայն այդ մասում ևս միջանկյալ կերպով հիշատակված են նույնպես զուտ արաբական անուններ. որինակ՝ Արուաստան—Ասորեստանի արաբական անունը՝ «Մուծղ» կամ Մոսուլ (V. 613,8), խոժաստան աշխարհի անունը՝ «Բծրա» կամ Բասրա (S. 41,7) են:

Մեր բերած առարկությունները վոչ միայն հերքում են Պատկանյանի սխալ յենթադրությունը, այլ և ցույց են տալիս, վոր «Աշխարհացոյց»-ը գրված ե արաբական շրջանում:

Պատկանյանի գիտողություններից շատ ավելի կարևոր են Մարկվարտի փաստական ցուցումները նրա «Eranschahr» ուսումնասիրության մեջ (եջ 5 — 6): Մարկվարտն ուշադրություն ե դարձնում այն հանգամանքի վրա, վոր խորասանի յերկրների ցուցակում նշանակված են «Աշխարհացոյց»-ի մեջ այնպիսի տեղեր, վորոնք կամ լեռեք չեն հիշատակված իբրեւ առանձին շրջաններ, կամ մասամբ են միայն հիշատակված՝ առաջին անգամ Արդլա Ի. Տահիրի հարկա-

ցուցակում (գրված է Հեջիրի 211, 212 թվին = 826/7 — 827/8 թ.), և ծագումն են մասամբ իրանական եպոսից և Վահրամ Չորինի վեպից: Մասնավորապես ուշագրավ են Գճակ և Ասան տեղերը (Տ-ի մեջ 40, 17 «Գճակստան» ուղղելու յե ըստ Մարկվարտի՝ «Գճակ, Ասան»), վորոնցից վերջինը չե չեղել յերբեք առանձին վարչական շրջան: Այդ յերկու տեղը վորոշ դեր էին խաղացել և հիշատակվել թուրք-արաբական այն մեծ կռիվի վերաբերյալ հաղորդագրություններում, վորն արևմտաթուրքերի խաբանի դեմ տեղի չեր ունեցել Հեջիրի 119 թվին (= 737 թ. Բ. հ.) Գոզկանում: Մարկվարտի կարծիքով՝ «Աշխարհացույց»-ի հեղինակը ծանոթ չեղած պիտի լիներ գրավոր այդ հաղորդագրություններին: Բացի այդ՝ Սկյութիան և Սարմատիան նկարագրելիս՝ նա ոգտվել է մի աղբյուրից, վորն իրազեկ է յեղիչ վաղ միայն սլավոնների բալկանյան արշավանքներին մինչև Մակեդոնիա, Դադմատիա ու Աքայա, նաև բուլղարներին գաղթին Ասպարհրուկի առաջնորդությամբ (679 թ.), այլ և հեփթաղների, ավառների մասին ու Սոգդիանայի առևարի վերաբերյալ մանրամասն տեղեկություններին, վոր հայտնի էին դառել թուրք-բյուզանդական դիվանագիտական հարաբերությունների ընթացքում Յուստին Բ. և Մավրիկիոս կայսրերների ժամանակ:

Յեկնելով այս փաստերից՝ Մարկվարտն «Աշխարհացույց»-ի գրության terminus a quo վորոշումն է ամենավաղը լոթերորդ դարի վերջերում: Սակայն ի նկատի առնելով խորասանի նկարագրությունը, ինչպես և «Աշխարհացույց»-ի հեղինակի իրազեկ լինելը 737 թվի թուրք-արաբական կռիվներին՝ նա հնարավոր է հա-

մարում, վոր «Աշխարհացոյց»-ը կարող է նաև գրված լինել այդ Թվականից հետո՝ ամենավաղն առաջին Աբրահայանների ժամանակ։

Նորագույն իր աշխատություններում Մարկվարտը, ինչպես հիշեցինք, փոխել եր իր այս կարծիքը և «Աշխարհացոյց»-ը վերագրել՝ համաձայն Պատկանյանի «խալ յենթադրության՝ Անանիա Շիրակացուն։

Սեն-Մարտենը, ինչպես վերև տեսանք, «Աշխարհացոյց»-ի հորինման ժամանակը յենթադրում է իննե լորդ դարի վերջերում կամ ավելի շուտ՝ տասներորդ դարի կեսում։ Այս յենթադրության փաստական միակ հիմքն է նրա հրատարակած բնագրի վկայությունը Դանուբ գետի մասին՝ «[մինչև] ցԴանոբ գետ, որ է Յոզուս ուսաց» (տե՛ս «Mémoires» II, էջ 336)։ Փաստական այս հիմնավորումը միանգամայն կարեւորությունից զուրկ է, վորովհետև «որ է Յոզուս ուսաց» բացատրությունը չունեն «Աշխարհացոյց»-ի V. և S. հրատարակությունները։ Պարզ է, վոր այս բացատրությունն ակներև մի ընդմիջարկություն է։

Մնում են, ուրեմն, անխախտ միայն Մարկվարտի կարեւոր դիտողությունները, վորոնցից կարելի չի հետեցնել, վոր «Աշխարհացոյց»-ը գրված է լոթերորդ դարից հետո։

«Աշխարհացոյց»-ի հորինման terminus post quem non կամ վերջին յեզրը վորոշված է Հյուբերտինի «Հին Հայոց տեղուլ անունները» աշխատության մեջ (Թարգմ. Պիլեգիկճյանի, էջ 267)։ «Աշխարհացոյց»-ի մեջ նախիջնվանը համարվում է Վասպուրականի գավառ, իսկ հայտնի յե Թովմա Արծրունու պատմությունից (Պետերր. 1887, էջ 240, 247, 252), վոր 902 թվին նա

բաժանվել եր Վասպուրականից և միացվել Սյունիքի հետ: Հիմնվելով կարևոր այս փաստի վրա՝ Հյուբշմանն «Աշխարհացոյց»-ի գրութիւն վերջին սահմանն իրավացի կերպով ընդունել ե 902 թվականը: Վոր «Աշխարհացոյց»-ը չէր կարող գրված լինել իններորդ դարից հետո՝ այդ ավելի քան պարզ լերևում ե նաև անհերքելի ալն փաստից, վոր նա հիշատակված ե թովմա Արծրունու պատմության մեջ և ծառայել ե Արծրունուն իբրև աղբյուր (տես «Պատմութիւն տանն Արծրունեաց», 1887, եջ 27):

Այսպիսով «Աշխարհացոյց»-ի գրութիւն ժամանակը վորոշվում ե կամ ութերորդ և կամ իններորդ դարում: Պարզվում ե նաև այն, վոր նրա հեղինակն ապրել ե անպալման արաբական շրջանում: Իսկ այս լեզրակացություններից ինքնին արդեն հետևում ե, վոր արաբական այն բառերը, վորոնք հանդիպում են «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրութիւն բոլոր ձեռագիրներում, իսկ հաճախ նաև ընդարձակ խմբագրության մեջ՝ պատկանում են, հավանորեն, նրա բուն ու իսկական հեղինակին և չեն կարող համարվել ոտարամուտ ընդմիջարկություններ: Այդպիսի արաբական բառեր են, որինակ՝ աղխունա V. 612,28 (= արաբ. axkûna, տես Աճառլան, Հայերեն արմատական բառարան), դուռնադհուռար V. 612, ծան. 6, հուռնադհուռար S. 39,30 (= արաբ. duhn-ulhinnâ, տես Hübschmann, Armenische Grammatik, եջ 269 — 270), մաղապ V. 612,28, S. 39,29 (= արաբ. malâb, տես Arm. Gram. եջ 270), բալասան V. 612,27 (= արաբ. bala-sân, տես Arm. Gram. եջ 263) և այլն:

Ուշագրութիւն արժանի յե նաև, վոր «Աշխարհա-

ցոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ Քաղիրթ գետի մասին ասված է, թե արաբները նրան կոչում են Շիթիթմա.

Տ. 37,37 — 38,1՝ «նախ Քաղիրթ, որ բղխէ ի լեռանց Սալնայ և Սանասնոյ.... եւ. կոչի ակժմ Շիթիթմա, որ է արիւնարբու.»

Տ. 30,28—29՝ «գետն Քաղիրթ, զոր Շիթմա կոչեն Տաճիկք, ակսինքն՝ արիւնարբու.»

Քաղիրթ գետի անվան այս փոփոխությունը, ինձ թվում է, կարող եր անդի ունեցած լինել ութերորդ դարի վերջերում կամ իններորդ դարում, յերբ Հայաստանի հարավային մասերում հաստատվել էին արաբական գաղութները և հիմնվել էին այստեղ արաբական առանձին ամիրայութիւններ:

Կարելի լե նույնպես հավանական համարել, վոր նույն այս ժամանակներում յենթագրելու լե նաև ֆրանկ «հզօր աղգ»-ի հիշատակութիւնն «Աշխարհացոյց»-ում: Ֆրանկները, ինչպես հայտնի լե, արաբների դեմ հաղթական կռիւներ ելին մղել Սղանիայում Կարլոս Մեծի ժամանակ (768 — 814 թ.): Նույն այս Կարլոս Մեծը բարեկամական հարաբերութիւններ ե ունեցել Հարուն ալ-Ռաշիդի հետ: Հավանական է ըստ այսմ, վոր «Աշխարհացոյց»-ը գրված պիտի լինի հենց այս ժամանակաշրջանից հետո, ակսինքն՝ իններորդ դարում:

Արդ՝ լեթե «Աշխարհացոյց»-ի հեղինակը Մովսես Խորենացին է, իսկ այդ, ինչպես տեսանք, անվիճելի լե ու անտարակուսելի՝ շատ պարզ է, վոր Խորենացու ժամանակն իջեցրվելու լե իններորդ դար: Այս յեզրակացութիւմը Խորենացու ժամանակի համար ստաց-

վում ե վորոշ ու հաստատուն մի կռվան, վորի ոգնու-
թլամը Խորենացու առեղծվածի լուծումը, ինձ թվում
է, հաջողվելու չե մեզ տալ սույն ուսումնասիրության
յերկրորդ մասում:

18. «Մղոնաչափ»-ի գրության ժամանակը: — Խորե-
նացու և նրա «Աշխարհացոյց»-ի հետ կարող ե վորոշ
կապ ունեցած լինել «Մղոնաչափ»-ը, վորը տպագր-
ված ե «Աղուէսագրք»-ի հրատարակություններում՝
Ամստերդամում 1668 թվին և Մարսիլիայում 1676 և
1683 թվերին: Այդ գրվածքի ֆրանսերեն թարգմանու-
թյունը լույս ե տեսել Սեն-Մարտենի «Mémoires his-
toriques et géographiques sur l'Arménie» աշխատու-
թյան մեջ (T. II, Paris 1819, էջ 395 — 397), իսկ
ռուսերեն թարգմանությունը՝ «О торговле и городах
Армении» իմ գրքում (Эривань 1930, էջ 171—173),

«Մղոնաչափ»-ը՝ վոր առանձնապես կարևոր ե
առևտրական հին ճանապարհների վորոշման և առևտրի
պատմության համար, գրված ե, անտարակույս, արա-
բական շրջանում՝ տասերորդ դարից վճ ուշ: Այդ
միանգամայն պարզ ե, վորովհետև «Մղոնաչափ»-ի
բնագիրն ունի Պետական կենտրոնական Ձեռագրա-
տան թիվ 2679 հռչակավոր հին ձեռագիրը (= Գևորգ-
ցուցակ, թ. 102), վոր գրված ե 971 — 981 թվական-
ներին: Հնագույն այդ բնագիրը շնորհակալությամբ
ստացել եմ նորերս Սենեքերիմ Տեր-Հակոբյանից, վորը
բարեհաճել եր իր արտագրությամբ ուղարկել ինձ ամ-
բողջ հատվածը, ուղղելով նրա ընթերցվածներից մեկը
թիվ 1737 ձեռագրի համեմատությամբ:

«Մղոնաչափ»-ի հին բնագիրը, վոր դեռևս հրա-

տարակված չե, ավելորդ չեմ համարում մեջ բերել
ամբողջությամբ՝ դնելով դեմը նաև «Աղուէսագրք»-ի
1683 թվի հրատարակության բնագիրը:

Ձեռ. 2679, քերք 206a (Յշտվ.
208a)՝

«Վասն գիտութեան մղոնա-
չափաց:

Ասպարէզն ձէ քայլ է. քայ-
լըն 2 ոտն է, ոտն 62 մատն
է, մղոնն է ասպարէզ է. ըստ
Գարսից ասպարէզն ձեռք քայլ է,
մղոնն Ռ քայլ է, հրասահն Գ մղոն:

Ի Դունա ի Կարին Մ մղոն.

Ի Կարնա ի փոսադուրս ձ.

անտի ի Կողոնիա Ղ.

անտի ի Նիկիա ձ.

անտի յԱմասիա Ձ.

անտի ի Գանգրս ձն.

անտի յԱնգերա Ձ.

անտի ի Կոստնպուղիս ձի.

անտի ի Հռովմ Ղ:

Ի Դունա ի Խլաթ ձէ.

անտի ի Բղիմար Ձ.

անտի յՈւրհա ձձ.

անտի յԵփրատ դետ Խ.

«Աղուէսագիրք», Մարտիրիա 1688,
էջ 61 — 64՝

«Անա կամիմ զչափ աշխար-
հիս համառօտել մղոնախաղաց
ոտնաչափութեամբ ուղղեկա-
բար, ասպարիզանեմ գրու-
թեամբ:

Ի Դունայ մղոն 200 ի Կար-
նոյ քաղաք.

անտի մղոն 120 ի փոս աշխարհն
Հայոց և Յունաց.

անտի մղոն 90 ի Կողոնիոյ բերդն.

անտի մղոն հարիւր ի Նիկիսար:

անտի մղոն 80 յԱմասիայ.

անտի մղոն 130 ի Գանգրայ¹.

անտի մղոն 80² յԱնկիւրիայ.

անտի մղոն 320³ ի Կոստանդ.

անտի մղոն 6000⁴ ի Հռոմ:

Ի Դունայ մղոն 170 ի Խլաթ.

անտի մղոն 80 ի Բղիմար.

անտի մղոն 180⁵ ի յՈւրհայ.

անտի մղոն 40 յԵփրատ դետ.

1 Սեն-Մարտենը, վոր բացի «Աղուէսագրքից» ոգտվել է նաև
մի այլ ձեռագրից՝ չունի ամբողջութեամբ Ամասիայից Գանգրա:

2 Սեն-Մարտենը՝ «108 milles»:

3 Սեն-Մարտենը՝ «300 milles»:

4 Սեն-Մարտենը՝ «3000 milles»:

5 Սեն-Մարտենը՝ «160 milles»:

անտի ի Դամասկոս ձի.
անտի ի Թափոր լեռն Ղ.
անտի յԵրուսաղէմ ձ:

Ի Դուռնա ի Բերդկուռնա Կ.

անտի ի Պարտաւ ձի.
անտի ի ծոփն Կասպից Ղ:

Ի Դուռնա ի Նախճեւան ձ.

անտի ի Գանձակ Շահաստան ձի.

անտի ի Տիւբոն Յձ.
անտի յԱկողա ձ.
անտի ի Բսրա ձի.
անտի ի ծոփն Պարսահաւան¹ Ի:

Ի Գանձակէ ի Նինուէ ձի.

անտի ի Մծբին ձի.
անտի յՈւրհա ձի:

Ի Նախճեւանէ յԱրտեւատ Մ.
անտի ի Վանդանակերտ ձ.
անտի ի Փայտակարան Կ.
անտի ի ծոփն Կասպից Կ:

Ի Դուռնա ի Կողբ Մ.

անտի մղոն 150 յԱմասիայ¹
(= Hemesa).

անտի մղոն 100 ի Դամասկոս.
անտի մղոն 90 ի Թաբոր.
անտի մղոն 100 ի քաղ. յԵրուսաղէմ:

Ի Դուռնայ մղոն 60 ի Բերդկուռնա.

անտի մղոն 180² ի Պարտաւ.
անտի մղոն 90³ ի ծոփն Կասպից:

Ի Դուռնայ մղոն 70 ի Նախճեւան.

անտի մղոն 120 ի Գանձակ Շահաստան.

անտի մղոն 370 ի Տապոն.
անտի մղոն 70 ի Յակողոն.
անտի մղոն 140 ի Պասրայ.
անտի մղոն 20 ի ծոփն Պարսակային:

Դարձեալ ի Գանձակայ մղոն 100 ի Նինուէ.

անտի մղոն 150 Թուռհայ:

Ի Դուռնայ մղոն 50 ի Կողբ.

¹ Սեն-Մարտենն ուղղել է՝ «Emèse»:

² Սեն-Մարտենը՝ «140 milles»:

³ Սեն-Մարտենը՝ «20 milles»:

⁴ Թիվ 1737 ձեռագիրն ունի Պարսակային (72 b):

անտի ի Կոտադեւդն ձի.
անտի ի Տփղիք ձի.
անտի ի Հունարակերտ Հ.

անտի ի Պարտաւ ձի

ՅՆՐՈՒՆԱՊԷՄԷ յԱղեկասնդր
քաղաք Շ.

անտի ի Պենապաւղիս Ռ.

անտի ի Տուպաւղիս ՅՄ.

անտի յԱփրիկէ ՌՇ.

անտի ի Տեփոէ Զ.

անտի յՈվկիանոս Ս.

Կատարեցաւ մղոնչափս:

անտի մղոն 105 ի Կոտ դեղ.

անտի մղոն 140 ի Տպլիս.

անտի՝ մղոն 70 ի Հունարա-
կերտ.

անտի մղոն 100 ի Պարտայ:

Դարձեալ յՆՐՈՒՆԱՊԷՄԷ մղոն
500 յԱղեկասնդրիայ.

անտի մղոն 1000 ի Պենապաւ-
ղիս.

անտի մղոն 300 ի Տրապօլիս.

անտի մղոն 1030 յԱփրիկայ.

անտի մղոն 900 ի Սեպտէ.

անտի մղոն 1000 յՈվկիանոս
ժողով անժանօթ:

Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին ուռ-
սերեն իմ աշխատութեան մեջ («О торговле и го-
родах Армении», եջ 171) ալս գրութեան ժամանակը
լսս լինթադրել եյի արաբական շրջանի վերջին դա-
րերում, բայց հնարավոր եյի համարել, վերնա կարող
ե հորինված լինել և ավելի առաջ, Ալիշանն «Այրա-
րատ»-ում (եջ 412 — 413) «Մղոնաչափք»-ի ժամա-
նակի մասին հայտնել ե հետևյալ կարծիքը՝

«Հեղինակն թուի Անանիա Շիրակացին, եթէ
չիցէ հնագոյն քան զնա ոք, զի գրի և ընդ գոր-
ծըս սորա և ընդ աշխարհագրութեան Խորենացւոյ,
և ընծայի ի հեղինակէն առ երկասիրող ոմն ի
գործս Պապայ Աղեքսանդրացւոյ և Պորփիրի և
նմանեաց. ինքն միայն զչափ մղոնից հղեալ է.
յետոյ Սարգիս ոմն յաւելեալ է և զասպարէզն,

1 Սեն-Մարտենը՝ «de Tovin à Hounaragerd»:

որ է ¹/₅ մղոնի և զնետաձիգն որ է ¹/₅₀ ասպարիգի. իսկ մղոն համարեալ է 1000 քայլ, քայլն 6 ոտն, ոտն՝ 6 մատն և ավն՝:

Ալիշանի այս նկատողության մեջ հետաքրքիր է այն, վոր նա իր ձեռքի տակ ունեցել է մատենագրական վկայութիւններ, վորոնց մեջ մատնանշված է լեզել «Մղոնաչափք»-ի կապը խորենացու աշխարհագրության և Պապպոս Աղեքսանդրացու գրութիւնների հետ: Այդ ցուցումներն ըստ իս ուշադրության արժանի չեն: Ավելի քան հավանական է, վոր խորենացու «Աշխարհացոյց»-ը և այս «Մղոնաչափք»-ը ժամանակակից յերկեր են և վոր լերկուսն ել միասին չեն կարող վերագրվել Անանիա Շիրակացուն:

«Մղոնաչափք»-ի աշխարհագրական տեղեկութիւնները վոչ միայն չեն հակասում «Աշխարհացոյց»-ի տեղեկութիւններին, այլ և գրեթե միշտ նման են ու համերաշխ միմյանց: Յերկու գրվածքի մեջ ել հիշատակված են «Ակողա» և «Բասրա» քաղաքները, վորոնք առևտրական խոշոր կենտրոններ եյին դառել յոթերորդ դարից հետո. արաբական Մոսուլն անվանված ենրանց մեջ «Նինուէ». արաբական Մադաինը յերկուսն ել շարունակում են անվանել «Տիսպոն»: Իսկ ամենից կարևորն այն է, վոր «Մղոնաչափք»-ի մեջ բացի «Պենտապոլիս»-ից, «Տրապոլիս»-ից և «Ափրիկէ»-ից հիշված են նաև «Սեպտէ»-ն և «Ուվիանոս ծովն անծանօթ», վորոնք հալոց հին մատենագրության մեջ հանդիպում են միմիայն «Աշխարհացոյց»-ում և Հայաստանում կարող եյին հալտնի յեղած լինել, հավանորեն, Պապպոս Աղեքսանդրացու «Ներկրագրութիւն»-ից:

Եթե մեր այս գիտողութիւնները հավանութիւն

գանեն՝ ալդ դեպքում կարելի լի լինթադրել, վոր «Մղո-
նաչափք»-ը գրված պիտի լինի «Աշխարհացոյց»-ից
հետո կամ «Աշխարհացոյց»-ի հետ միասին վոչ թի
Շիրակացու, ալ խորենացու ժամանակաշրջանում: Ան-
հնարին չի, իհարկե, վոր խորենացին «Աշխարհացոյց»-ի
հետ միասին կարող եր դրած լինել նաե «Մղոնա-
չափք»-ը, վորն ընծավել է, ինչպես տեսանք, «առ
երկասիրող ոմն ի գործս Պապալ Աղեքսանդրացու»:
սակայն այս վերջին յենթադրութիւնը կարոտ է դեռ
դրական ու ավելի պարզ ապացույցների:

14. «Աթսահացոյց»-ը յեւ Նեղծ-Նալիսքնեաի Աղեք-
սանդի վարք: — Բանասերները նկատած կըլինեն, վոր
«Յունաբան դպրոցը և նրա դարգացման շրջաններն»
իմ ուսումնասիրութիւն մեջ քննութիւն չի առնված
Աղեքսանդրի վեպը և քննութիւն չի առնված վոչ նրա
խմբակցութիւնը հունաբան թարգմանութիւնների
հետ և վոչ ել նրա թարգմանման ժամանակը: Իրա
պատճառն այն է, վոր այս թարգմանութիւնը, թեև
իր բառապաշարով հարում է հաճախ Փիլոնյան խմ-
բին, սակայն, ընդհանրապես, ազատ է հունաբան հին
թարգմանութիւնների լեզվա-քերականական խրթին
անհարթութիւններից և ունի լուրահառակ վոճ և
լեզու, վոր միանգամայն տարբեր են հունաբան լերեք
խմբերի լեզվից:

Աղեքսանդրի վարքի հալերեն թարգմանութիւնը,
ինչպես հայտնի լի, մանրակրկիտ կերպով ու գիտա-
կան ամենամեծ հմուտթյամբ ուսումնասիրել է Հ. Տա-
շյանն իր «Ուսումնասիրութիւնք Ստոյն-Կալիսթենեայ
վարուց Աղեքսանդրի» աշխատութիւն մեջ (Վիեննա
1892): Տաշյանը, ինչպես և նրանից առաջ բոլոր գրե-

թե հայ և ոտարագգի գիտնականները, համարել և
Կեղծ-Կալիսթենեսը խորենացու թարգմանութլուն՝ գըր-
ված հինգերորդ դարում։ Իր ուսումնասիրութլան մեջ
նա հանգամանորեն ցույց և տվել նաև այդ թարգմա-
նութլան կապը խորենացու «Աշխարհացոյց» ի հետ։

Վոր «Աշխարհացոյց»-ի մեջ խորենացին ոգտվել և
իր թարգմանած Կեղծ-Կալիսթենեսից՝ այդ լերևում և,
նրա ասելով, հետևյալ համեմատութլուններից.

1. խորենացին — գրում և Տաշլանը — «կըփա-
կէ գիրքը [«Աշխարհացոյց»-ը] սա դիտողութեամբ.
«Բայց անտի յանժանօթ երկիրն որ ինչ պատմի՝
անհաւատալի է. գաղանք անժանօթք մարդա-
կերպը կիսանձնեայք երկդիմիք վեցձեռնիք փո-
կոտունք վիշապատտունք կիսահաւք կիսանդամք
անգլուխք» (տէս V. Եջ 616, 21—25)։ Խնդիր չկայ՝
որ այս տեղ խորենացի կ'ականարկէ Կալիսթենեսայ
ՄԹ. ՄԻԴ. և ՄԾԸ. հատուածները, ուր Կալիս-
թենէս գԱղեքսանդրոս կը շրջեցընէ զննելու «ան-
ժանօթ երկրին» սահմանները, և անհեթեթ
առասպել ու երևակայութեան ցնորք չի մնար՝
որ չկուտէ այս կտորներուն մէջ։ Խորենացու այս
ականարկութեան մեջ գործածած բառերէն ոմանք
(այսպէս «վեց ձեռնիք, փոկոտունք, ան-
գլուխք») Կալիսթենէսի մեջ գործածուած բնիկ
բառերն են։ Մնացեալք ականարկութիւն են Կա-
լիսթենեսայ առասպելաց».. (տէս «Ուսումնասի-
րութիւնք Ստոյն-Կալիսթենեսայ», Եջ 80)։

2. «Հնդկաց վրայ գրածներուն մէջ [«Աշխար-
հացոյց»-ում] կայ սա խօսքը. «Ոմանք ի նոցա-
նէ մարդակերք են, և այլք վայրենակերք. ոմանք

ազեւորք են, եւ այլք կարճահասակք, տափա-
քիթք, լաշներեսք, սպիտակք. եւ ոմանք մեր-
կիմաստակք (երկու օր. «մերկիմաստք»)
որք գործս անիրաւս ոչ գործեն, եւ զմարմինս
կենդանեաց ոչ ուտեն» (տես V. 615,3—8): Այս
տեղ ակնարկուած են Կալիսթենեայ ՄիԱ — ՄիԳ
հատուածները, ուր կը պատմուի Աղեքսանդրի
արշաւելն յՈկսիդարկաս եւ «Մերկիմաստա-
սէր (γυμνοσφοισται) Բրաքմանաց» հետ խօ-
սակցիլն ևն: Այս մերկիմաստակ կամ մեր-
կիմաստասէր բառն Խորենացի նախ գործա-
ծած է, որչափ գիտինք, եւ ինքը կերտած է
նոյնն ըստ յոյն բնագրին: Ճիշտ նոյն բառն կը
գործածէ նաև Փիլոնի Վարք իմաստնոց
գրոց Թարգմանութեան մէջ. «Հնդկաց մերկի-
մաստակացն՝ վասն ծերութեան խարոյկ կուտեալ
զինքեանս ալրել» (տես «Ուսումնասիրութիւնք»,
եջ 82 — 83):

Ըստ իս Խորենացին ալդ բառը ինքը չե՛ կերտել,
ալլ առել ե Փիլոնից, վորի հայերեն հին Թարգմանու-
թիւնները մեծ ազդեցություն են ունեցեցել Խորենա-
ցու լեզվի վրա:

3. Ե՛ վերջոյ կը հիշենք — ասում ե Տաշլանը —
օրինակ մ'ալ՝ որ անշուշտ կը ցուցնէ միանգա-
մայն՝ Թե Աշխարհագրութեան հեղինակն եւ Կա-
լիսթենեայ Թարգմանիչը մի եւ նոյն անձն
է: Յոյնը պատմելէն ետքը անգլուխ մարդկան եւ
այլ նմանեաց դեպքերը եւ անոնց ծովէն ձուկ
բռնել ծախելն Աղեքսանդրի զօրաց՝ կը լաւելու
սա խօսքը (B միայն, C չունի). «Այլք (քաղէին):

յերկրէ փշասուռնկ որ ունէր լտերս քսան եւ հինգ»։ Այս *ῥιγνόν* լատիներէն նոյնպէս *hydnum* կը կոչուի, եւ գաղղիէրեն՝ *hydne*, որուն ուրիշ մէկ տեսակը *urchin*, *rignache* (*hydnum repandum*), եւ երկրորդ տեսակ մը՝ *érinace* (*hydnum erinaceum*) եւ գերմաներէն *Stachelpilz* (ասկէ առեալ եւ «փշասուռնկ»)։ Արդ այս բառն բոլորովին նոր բառով մը թարգմաներ է *Կալիսթենեայ հայ թարգմանիչն*, այսինքն՝ «գերերի»։ Բառ մ'որ առաջին անգամ հոս կը գործածուի։ Բայց ոչ միայն իրեն յատուկ է այս թարգմանութիւնն, այլ և յաւելուած մ'ալ կ'ցեր եւ թարգմանիչը՝ թէ այս «գերերին» իւր հայրենի երկրին մեջ կը գտնուի։ Այս նշանակալից խօսքն է։ «Եւ լերկիր (յերկրէ) գերերի՝ որ առ մեղս լինին, որ ունէր լտերս քսան, եւ հինգ, քաղեցին և ետուն մեզ» (տես «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ», Վենետիկ 1842, ՄԹ, եջ 127)։ Թէ ինչ տեղ կը հասկընայ հեղինակ - թարգմանիչը «առ մեղս» ասութեամբ, կ'իմացընէ լետու, ալսինքն՝ իւր Աշխարհագրութեան մեջ գրելով «Սիւնիք... լինի ի նմա մուրտ եւ գերերի եւ նուառն, եւ ամուր տեղիք» (V. 609, 12—13)։

Տաշյանի այս դիտողութիւններէց առաջինը ցուցեւ տալիս միայն, վոր «Աշխարհացոյց»-ի հեղինակն ոգտվել եւ Կալիսթենեսի հայերեն թարգմանութիւնից, սակայն լերրորդը հավանական մի նշան եւ, անշուշտ, վոր ալդ թարգմանութեան հեղինակն եւ ինքը խորե-նացին։

Ավելորդ չեմ համարում մեջ բերել նաև իմ նկատած մի քանի կարևոր նմանությունները՝

1. Բացի Տաշլանի մատնանշած վերոհիշյալ բաներից ուշադրութան արժանի լին նաև հետևյալ հազվագյուտ ու նման բառերը.

ա. «ոլնգեղջիւր» V. 598, 11, «ոլնգեղջիւր» S. 20, 70 և «լոլնգնեղջեւր» Կալիսթ. ՄԻԷ, եջ 150 (Վենետիկ 1842), «ոլնկեղջերք» ՄԻԴ, եջ 142.

բ. «ժամադիտական, ժամադիտակ» V. 587, 12. S. 6, 22. 28 և «ժամադէտ» Կալիսթ. Ը, եջ 5.

գ. «տեղագրութիւն» V. 589, 17. S. 7, 27 և «տեղագրեմ» Կալիսթ. ԶԱ, եջ 38 և ԶԵ, եջ 40.

դ. «հաւք ճարակաւորք» S. 30, 4 և Կալիսթ. ԻԳ, եջ 12.

2. Մարկվարտի ասելով՝ «Աշխարհացոյց»-ի հեղինակը Խուժաստանի «Շուշանիկ» անունը (S. 41, 6) կերտել է ինքը «Շօշան» քաղաքի անունից, ի նկատի ունենալով հունարեն Σουσιανί և Σουσα անունները¹, Հետաքրքիր է, անշուշտ, վոր Կալիսթենեսի Աղեքսանդրի վարքում ևս նույն աշխարհաշրջանի համար գործ է ածված «Շուշանաստան» անունը (ՄՀԴ, եջ 180),

3. Տաշլանը մատնացոյց է արել (տես «Ուսումնասիրութիւնք», եջ 189—190 և 224), վոր Կալիսթենեսի Թարգմանիչը պահել է յերբեմն հունական հոլովման վերջավորությունները. որինակի համար «զթրասիլէոնտա», «զԱնտիփոնտա» ևն (= Θρασιλέωντα, 'Av-

¹ Տես «Eranschahr», եջ 144.

ԴԵՓՈՂԱ հայցական)։ Նույն սխալները հանդիպում են
յերբեմն նաև «Աշխարհացոյց»-ի մեջ. որինսկի՝ «զՊղա-
յիդա» (V. 586,9. հունար. τῆς Πλατῶα, հայցական)։

Այս բոլոր համեմատութիւնները, միասին առնը-
ված, տպավորութիւն են ստեղծում, վոր վեջ միայն
«Աշխարհացոյց»-ը, այլ և Աղեքսանդրի վարքի թարգ-
մանութիւնը, հավանական է վերագրել միևնույն
թարգմանչի։

Կարևոր այս լինթադրութիւն դեմ հիմնական առար-
կութիւնը կարող է ալն լինել, վոր «Աշխարհացոյց»-ը
վերև մենք համարեցինք իններորդ դարի գրվածք, իսկ
Աղեքսանդրի վարքը համարվում է հինգերորդ դարի
յերկ՝ թարգմանված Սերեոսից և Փարպեցուց առաջ։
Արդ՝ ճիշտ է արդոք ընդհանրացած այդ կարծիքն
Աղեքսանդրի վարքի թարգմանման ժամանակի մա-
սին։ Ինչ թվում է, վոր ճիշտ է։

Աղեքսանդրի վարքի հայերեն թարգմանութիւն
մեջ Արածանի գետի մասին կա հետևյալ տեղեկու-
թիւնը (ՃԾԸ, եջ 89)՝

«և ընդ Արիակէ գնացեալ [Աղեքսանդր]՝ եկեալ
հասանէր ի գետն Արածանի, որ հոսի ի Ծաղ-
կաւէտ լեռանցն Անգղայ գաւառին յակունքն Եփ-
րատայ հանդէպ լերինն Այրարատայ»։

Գերմանացի գիտնական Բաուզգարտները մատնա-
նշել է, վոր Սերեոսը ևս ունի համապատասխան մի
հատված, վորն առնված է, նրա կարծիքով, Կալիս-
թենեսի հայերեն թարգմանութիւնից (տես „Ueber das
Buch die Chrie“, ZDMG, 1886, III, հջ 504)։

«Ապա եկն Սենիտամ Խոսրով, և զաւրն յու-

նաց գումարեալ նստան ի Ծաղկոտանն՝ մերձ ի գեւղն՝ որ կոչի Անգղն, ընդ որ անցանէ գետն Արածանի» (Սեբ. ԻԲ, եջ 74)։

Այս հատվածները բերված են նաև Տաշյանի ուսումնասիրութեան մեջ, վորը համամիտ է Բաղդադաւաններին և կարծում է նույնպէս, վոր «Սեբէոսը կարդացեր է այս Թարգմանութիւնը» («Ուսումնասիրութիւնք», եջ 42—43)։ Սեբեոսի մոտ Տաշյանը մատնացուցց ե արել բացի այդ նաև մի ուրիշ նման հատված։ «Նոյնպէս շատ նման են — ասում է Տաշյանը — Սեբէոսի հրովարտակի մը մէջ Խոսրովալ բերան դրած խօսքերը Դարեհի առաջին նամակին առ Աղեքսանգը, այնպէս որ կարծես Սեբէոս այս վերջնոյն համեմատ գունաւորած է առաջինը» (տե՛ս Սեբ. ԻԶ, եջ 90—91 և Պատմ. Աղեքս. ՃԴ, եջ 49—50)։

Բաղդադաւանների և Տաշյանի այս դիտողութիւնները, վորոնցով նրանք կամենում են ապացուցանել թէ Կալիսթենեսի հալերեն Թարգմանութիւնը գրված է լեղել Սեբեոսից առաջ՝ ըստ իս ավելի քան կանկածելի լեն։

Բաղդադաւանների դիտողութիւնը մի պարզ թյուրիմացություն է, վորովհետեւ Սեբեոսի և Աղեքսանգրի վարքի «Ծաղկոտան» և «Անգղ»-ի մասին վերոհիշյալ տեղեկութիւններն իրանց բովանդակութեամբ իրարից հիմնովին տարբեր են։ Իսկ Տաշյանի յերկրորդ դիտողութիւնը, վոր նա կարծիքաբար է մեջ բերել, գուրկ է կարևորութիւնից, վորովհետեւ մատնանշված հատվածների նմանութիւններն այնքան աղոտ են և աննշան, վոր չեն կարող հիմք ծառայել վորեւէ յեզրակացութեան։

Բանասերների լերկրորդ առարկութիւնը, անշուշտ, այն է, վոր Աղեքսանդրի վարքի թարգմանութիւնը պարզ ակնարկված է Ղազար Փարպեցու պատմութիւն մեջ: Խոսելով վրաց Վախթանգ թագավորի խորամանկութեան մասին՝ Փարպեցին ասում է (Տփղիս 1904, ՀԳ, հջ 132 — 133)՝

«Դարձեալ լրտեսս տայր արձակել արս ի գնդէն Վրաց և Հայոց. որք իջեալ ի տեղիս ինչ դաշտացն՝ տալր երեեցուցանել լոյսս կրակաց բազմաց և կոճեղս ծառոց զինեալս արանմանս, ըստ՝ խաբէութեան Մակեդոնացւոյ Աղէկսանդրի»: Այս ակնարկած տեղն է Կալիսթենեսի ԾՀԳ հատվածը (հջ 96)՝

«Քանզի որք անդ արածանէին հօտքն՝ կորգեաց և ի բաց հհան արօտականս. և ի ծառոցն ոստս հատեալ կապեաց ի վերա չորքոտանեացն, և զկնի զօրականին գնային հօտքն, և ծառքն քարշէին ի վերայ երկրին և զհոգն դամենայն ի վեր կոյս հոսեալ լուղէին սաստկութեամբ, և ելանէր փոշին մինչև ի լեառն լիղիմպոս»:

Համառոտ խումբն ունի ալստեղ նաև հետևյալ հատվածը (հջ 96, ծան. 1)՝

«Կորովամիտն Աղեքսանդրոս ըմբռնեալ այծս բազումս և ջահ վառեալ լեղջերսն ի գիշերի ցոյց առնէր ի բացեալ՝ կարծելով բազում գումարտակս լրտեսաց. և ի ցերեկի ըմբռնեալ զհօտն որ անդ արածանէին յեղին»:

Ընդարձակ խումբը եւ ունի ալս հատվածը, սակայն ուրիշ տեղ՝ ՄԹ, հջ 122:

Տաշյանը Փարպեցու մոտ մատնացուլց է արել նաև

հետեւյալ հատվածը, վորը, նրա կարծիքով, կարող ե
քաղված լինել Աղեքսանգրի վարքից՝

«Բայց եթէ յորժամ ժիր մշակք քաջ սուր
մանգաղաւ և գերանդեաւ զխոտ հարկանիցեն»
(ՁԸ, եջ 159),

Հմմտե Կալիսթենես, ՃՁԸ, եջ 105՝

«և գերանդիքն յընթանալ կառացն հնձէին
զբազմահոծ պարսիկսն որպէս յարտորայս զհասկս
մշակքն հնձիցեն»:

Մեջ բերված հատվածների համեմատությունից յե-
րևում ե, իրոք, վոր Փարպեցին ծանոթ ե յեղել կամ
Կալիսթենեսի հունարեն բնագրին և կամ նրա հայե-
րեն թարգմանության: Դժվար չե նաև կռահել, վոր
Կալիսթենեսի հնագույն ալդ խմբագրությունը տար-
բեր ե յեղել այժմյան հայերեն խմբագրությունից:

Առաջին իսկ հալացքից նկատելի յե, վոր Փարպե-
ցու վերոհիշյալ հատվածները հայտնապես զանազան-
վում են մեր ձեռքը հասած Կալիսթենեսի վկայու-
թյուններից: Փարպեցու մոտ ասված ե՝ «տալր երե-
ւեցուցանել լոյսս կրակաց բազմաց», իսկ համառոտ
խմբի բնագրում՝ «ջահ վառեալ յեղջերսն ի գիշերի ցոյց
առնէր ի բացեալ»: Փարպեցին ունի՝ «կոճեղս ծառոց
զինեալս ալրանմանս», իսկ հայերեն ընդարձակ բնա-
գիրը՝ «եւ ի ծառոցն ոստս հատեալ կապեաց ի վե-
րալ չորքոտանեացն»: Փարպեցին ունի՝ «յորժամ ժիր
մշակք... զխոտ հարկանիցեն», իսկ այժմյան հա-
յերենը՝ «որպէս յարտորայս զհասկս մշակքն հըն-
ձիցեն»: Այս տարբերություններն իսկ մի պարզ
ակնարկ են, վոր Փարպեցու հատվածները կարող են
ծագած լինել ինչ վոր ալ աղբյուրից:

Միանգամայն հնարավոր է ու հավանական ըսա-
իս, վոր Փարպեցին կարդացած է լեզել Կալիսթենեսի
հունարեն բնագիրը և վերոհիշյալ նրա վկայութիւն-
ները քաղված են վոչ թէ հինգերորդ դարի Կալիսթե-
նեսի հայերեն թարգմանութիւնից, այլ հունարեն
բնագրից: Վոր Փարպեցին իր ձեռքի տակ ունեցել է
հունարեն լեզկեր, վորոնցից նա ոգտվել է՝ այդ լեռ-
վում է նրա Թղթի հետևյալ վկայութիւնից (տես «Ղա-
զարայ Փարպեցու, Պատմութիւն Հայոց եւ Թուղթ
առ Վահան Մամիկոնեան», հրտր. Գ. Տեր-Մկրտչյանի
և Ստ. Մալխասյանի, Տփղիս 1904, եջ 196):

«Զի անգամ և զհոռոմ գրեանդ ոչ ետուն
զկնի իմ. որք կան այդր ընկեցեալ ի կերակուր
ցեցոյ. բայց արդեօք կարդացեալ լուսաւորիցի՞ն
ի դոցանէ բնակեալքդ ի տեղւոյդ, և կամ զայլս
լուսաւորիցէն»:

Հ. Ն. Ալիւսիանի յենթադրութիւնը, վոր «հոռոմ
գրեանք» այս հատվածում «ասացուածք մը կը թուի,
որով կիմանալին ժամանակակիցները Յունաստանէն
ներածուած հայ գրչագիրներն ու թարգմանութիւն-
ները» (տես «Դասական հայերէնը և Վիեննական Մխի-
թարեան դպրոցը», Վիեննա 1932, եջ 63), մի թյու-
րիմացութիւն է, անշուշտ, վոր հակասում է Փարպե-
ցու պարզ ու վորոշ վկայութիւն:

Վոր Կեղծ-Կալիսթենեսի Աղեքսանդրի վարքի մեր
ձեռքը հասած թարգմանութիւնը չե կարող և վոչ մի
դեպքում գրված լինել հինգերորդ դարում, ինչպես
այդ յենթադրել են Տաշյանը և Ալիւսիանը՝ այդ պարզ
լերևում է նրա լեզվի մանրազննին քննութիւնից:
Լեզվական իմ դիտողութիւններն անհրաժեշտ են հա-

մարում մեջ բերել ընդարձակ կերպով, վորովհետև նոր ալս յեզրակացութիւնը հիմնովին խախտում է ընդհանրացած հին կարծիքն Աղեքսանդրի վարքի թարգմանման ժամանակի մասին և խիստ կարևոր է հայոց լեզվի ու մատենագրութեան պատմութեան համար:

Լեզվական իմ նկատառումները հետևյալներն են.

ա. Աղեքսանդրի վարքի թարգմանը, ծանոթ լինելով Հունաբան Դպրոցի հնագույն յերկերին, գլխավորապես, Պիտոլից—Փիլոնյան խմբի թարգմանութիւններին, մեծ չափով ոգտվել է ալդ թարգմանութիւնների հատուկ բառապաշարից: Այդ բառապաշարը, վոր չէ հանդիպում հինգերորդ դարի մատենագրական յերկերում, այնքան շատ է Աղեքսանդրի վարքի թարգմանութեան մեջ, վոր վո՛չ մի կասկած չէ կարող լինել, վոր ալդ թարգմանութիւնը գրված է վերոհիշյալ թարգմանութիւններից հետո: Այդպիսի առանձնահատուկ բառեր են (տես «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ», Վենետիկ 1842).

1. Վաւաշ, վաւաշամու 4. Նխ. ծն. և Խոր. Ա. 15. 17, եջ 48 և 55. վաւաշոտ, վաւաշոտական Պիա. 566, Փիլ. իմաստն. Նոննոս 81, վաւաշոտութիւն Պիտ. 449. 467, վաւաշանալ Փիլ. իմաստըն. Խոր. Բ. 63, եջ 195 ևն.

2. վրդովել 13. 134. Փիլ. իմաստն. Խոր. Գ, 50 և 68. Զքր. կաթ. ևն. վրդովումն, վրդովութիւն, Պիտ. 357. Փիլ. բապն. և իմաստն. Խոր. Հռիփսիմ. վրդովասէր Պիտ. 425, վրդով Բր. 21.

3. ամհնազան 40. Պիտ. 343. 387. Փիլ. Խոր. Գ. 62, եջ 344.

4. շիշք 17. Փիլ. լին. Բ. 24, եջ 106.

5. տինա 33. Պիտ. 342. Փիլ. նիս. Բ, Էջ 110.
Փիլ. Լիւս., Էջ 162. Իրեն. Հերձ., Էջ 207, Ներ-
Պորփ., Էջ 234 ևն.

6. չարահալած 43. Փիլ. լին. Գ, 10, Էջ 182.

7. պոռոտախօս 57. 132. պոռոտող 132. պո-
ռոտ Փիլ. նիս. Բ. 77. պոռոտաբան Գիրք. Թղթ.
39. պոռոտաբան Արծր. II. Գ, Էջ 87.

8. տաղ 45. 66. Թր. 2. Պիտ. 359. Փիլ. լին.
Դ. 2, Էջ 245. Փիլ. տեսակ. ԴՊորփ. 253. Նոն-
նոս 57 ևն.

9. խենեշ 77. Փիլ. լին. Դ, 183. Պիտ. 350.
խենեշութիւն Պիտ. 343. Ար. Առաք. 633. խենե-
շանալ Փիլ. լին. Գ, 52, Էջ 287 ևն.

10. արդարակ 122. Փիլ. Էլ. Ա, 1. Պիտ.

11. ճղփիւն 126, ճղփուֆն Փիլ. Լիւս., ճող-
փուֆն Փիլ. Յոֆն., ճողփիւն Արծր.

12. իւղագլխութիւն 151. Փիլ. Էլ. Բ, 51. Փիլ.
իմաստն., բազն և ժ բան.

13. վրիժակ 115. Պիտ. 384. Փիլ. Լիւս., Էջ
159. Փիլ. քհ. ժր.

14. մերկիմաստասէրք 135. 161. մերկիմաս-
տակք Փիլ. իմաստն. Խոր. Աշխ. (Վենետիկ 1843),
Էջ 615. մերկիմաստունք՝ Խոր. Աշխ. (հրատ. Սու-
բբրլանի), Էջ 43.

15. նախահալը 42. 66. Պիտ. 401. 415. Տի-
մոթ. 194. Փիլոն.

16. ամենապատիկ 45. Պիտ. 423. Փիլ. Ած.
աղք. Խոր. Բ. 88, Էջ 238.

17. քաջօրէն 48. Փիլ. իմաստն. Խոր. Գ, 26,
Էջ 287.

18. քաջալաւութիւն 106. Պիտ. 357. Փիլ., քաջալաւագոյն Ած. աղք. ևն.
19. քաջախառնութիւն 44. Փիլ. իմաստն.
20. բարեբախտիկ, բարեբաաստիկ 50. 137. 160. 167. Պիտ. 349. Փիլ. Խոր. Գ. 48, եջ 319.
21. թմբիւն 160. Փիլ. իմաստն.
22. ճեմարան 68. Փիլ. լին. Գ. 16, եջ 188. Սահմ. 194. ԴՊորփ. 280. Խոր. Գ. 61, եջ 343. Առ որս ևն.
23. լանձնկալութիւն 83. Փիլ. լին.
24. օձուտ 89. Փիլ. ալլար.
25. կարութիւն 96. Տիմոթ. 78. ՅՊէր. 533. ԴՊորփ., անկարութիւն Պիտ. 401. Փիլ. լին. Գ. 2, եջ 168. Փիլ. ալլար. Ար. Ստ. 366. Վերլ. 575 ևն.
26. պարսեմ «ոստնուլ» 102. Փիլ. Յոֆլ.
27. աւաղ 105. Խոր. Բ. 13, եջ 124. 125. Գ. 68. Պիտ. աւաղական Թր. 33. աւաղումն Փիլ. լին. ևն.
28. պապկայ 150. Փիլ. Լիւս. 128.
29. առնապատկեր 149. Փիլ. նխ., եջ 34. Խոր. Բ. 12, եջ 122, բաւց անդրի, անդրիանդ Նոն. 24. 70. 71. այրած և ներ. Պորփ. 238.
30. արգելաորութիւն 183. Փիլոն ստեպ.
31. եօթնուղէշ 169. ուղէշ Պիտ. 466. Փիլ. քաջուղէշ Փիլ. լին. Ա. 9. Պիտ. 448.
32. այրասպան 1. Պիտ. 403. Փիլ. նխ. և լին. ալրասպանել, ալրասպանութիւն Փիլ. Ժբան և լին.
33. քաղաքավարութիւն 48. 81. Պիտ. 357, Փիլ. լին. Դ. 135, եջ 347. Փիլ. նխ., եջ 80. Սահմ. 172. Իր. Հերձ. 30. Տիմ. 248. Նոն. 18. Ար. Աշխ. 624 ևն.

34. Գեղեցկավայելուչ 11. Փիլ. լին. Դ. 15.
Պիտ. ևն.
35. Երաժշտականութիւն 15. 71. Փիլ. լին. Գ,
3, և՛ 173. Փիլ. նիւ. և այլաբ. Պիտ. Պէր. 545 ևն.
36. Ժամտիմ փիւ. Ժպտիմ. 25. Փիլ. իմաստն.
37. Ժամաժողով 47. Ժամաժողով 84. իմ. Պաւլ.,
անժամաժողով Փիլ. իմաստն.
38. Վարկանեմ 49. 51. Խոր. ստեպ. Պիտ. 342.
Փիլ. Դիրք Թղթ. 22. 33. Սահմ. 121. Նոն. 37.
Առ որս ևն.
39. Խոխոզ 22. ըսա Նոր Հակազյան բառա-
բանի համապատասխանում և «կոկոզ» բառին.
տե՛ս «կոկոզավիզ» Դավիթ հց. իմ., «կոկոզանալ,
կոկոզիլ» Փիլ. լին., տե՛ս. և Լիւս., «կոկոզաբա-
նել» Արծր.
40. աստուածադն 41. աստուածազան Տիմոթ.
63. 83 ևն. Փիլ. Պիտ. 2քր. կաթ. ևն.
41. ամէնժողով 162. ամենաժողով. Փիլ. Ժ.
բան և այլաբ.
42. դարանապետ 69. Փիլ. ստեպ.
43. արդեան 94. Պիտ. Փիլ. Ժ. բան և ել. Խոր.
Գ, 48, և՛ 319.
44. յղկել 99. Փիլ. ստեպ. Առ որս ևն.
45. նուազաւոր 65. Փիլ. Պիտ. ևն, նուազա-
ւորագոյն Փիլ. տեսակ.
46. նուազերգութիւն 71. Պիտ. 369. Առ որս.
նուազերգեմ Պիտ. 537.
47. նախիմացութիւն 18. Փիլ. նիւ. 12 և ստեպ.
նախիմացական Փիլ. նիւ. 12.
48. ծննդաբան 5. ծննդաբանեմ Փիլ. լին. Ա.

82. Նոն. 11. Խոր. Ա. 1, եջ 7. ծննդաբանութիւն
Ած. լալտ. Շիր. ևն.

49. մանկավարժ 15, Պիտ. 343. Փիլ. Լիւս. 151.

50. որակութիւն 105. Պիտ. 464. Իր. Հերձ.
171. Տիմոթ. 324. Սահմ. 168. Ներ. Պորփ. 235.

Ար. Ստ. 386. Յամբ. Ստ. 410. ԴՊորփ. 324 ևն.

Աղեքսանդրի վարքի թարգմանութիւն մեջ այս
հիսուն բառը, վոր չեն հանդիպում հինգերորդ դարի
լերկերում և Փարպեցու մոտ, կազմում են Պիտոյից—
Փիլոնյան խմբի բառապաշարի միայն մի մասը: Լեզ-
վական մեր դիտողութիւնները, լեթե անգամ նրան-
ցից վորևէ մեկն առարկելի համարվի, այնուամենայ-
նիվ իրանց ամբողջությամբ բավարար կերպով լուծում
են Աղեքսանդրի վարքի թարգմանութիւն ժամանա-
կագրական մութ խնդիրը և ապացուցանում, վոր այդ
թարգմանութեան ժամանակը չի կարելի լինթադրել
Փարպեցուց առաջ հինգերորդ դարում:

բ. Հունաբան Դպրոցի խորթ նախդիրները և նո-
րակերտ բարդութիւնները, ինչպես նկատել ե այդ և
Տաշյանը («Ուսումնասիրութիւնք Ստոյն-Կալիսթենեայ»
եջ 204), պատահում են նաև այս թարգմանութեան
մեջ: Այդպիսի բարդութիւններ են՝

1. շաղկապեմ σπνδεδω 7. Թր. քերակ. 35. Պէր.
508. Ար. Աշխ. 624. շաղկապ σπνδεδωμὸς Փիլ. Նիս.
Բ, եջ 83. Իրեն. Հերձ. 158. Պէր. 489. ԴՊորփ.
Վերլ. ևն.

2. շաղապատեմ 36. Փիլ. լին. Դ. 19, եջ 259.
Փիլ. Սամփա., եջ 567. 568. Իրեն. Հերձ. 67.
165 ևն.

3. բացակտուր ἀποκοπὸς «կուրտ» 14. տե՛ս
Տաշյան, Ուսումնաս. եջ 200, ծան. 1.

4. հոմիլիան Յուստին 19. Խոր. Գ. 66, ԵՂ 353.

5. վերագրութիւն 36. վերագրեմ Պիտ. 345. փիլ. իմաստն. Իրեն. Հերձ. 37. Տիմոթ. 3. 299. Նոննոս 24. Խոր. Ա. 16, ԵՂ 54. Գ. 51, ԵՂ 323.

6. հակառակամարտ 72. 103. 134. Պիտ. 351. փիլ. լին. Բ. 36, ԵՂ 115. Սամփս., ԵՂ 565. Էլիաս Ստ. 35.

7. անդրադարձութիւն 93. 116. Էլ. Ստ. 91. անդրադարձիլ Թր. քեր. 19. Պիտ. Սահմ. 144. ԴՊորփ. 266.

8. արտահանեմ 159. Սահմ. 161. 165 Լն.

9. գերազանցեմ 167. Պիտ. 347. Տիմ. 97. Յամբլ. Ստ. 417. Խոր. Գ. 67, ԵՂ 356. գերազանցութիւն փիլ. Ել. Ա. 5, ԵՂ 451 Լն.

10. գերախանչ 174. փիլ. լին. Գ. 25, ԵՂ 196. փիլ. Ժ. բան.

11. ներհակ 185. Տիմ. 160. Պէր. 475. Յամբ. Ստոր. 413. 417. Նոննոս 64. Ար. Աշխ. 611. Ար. առ. 629. Էլ. Ստ. 103.

12. տարապատկան 37. Գիրք. Թղթ. 22:

Աղեքսանդրի վարքի թարգմանութիւնն ունի նաև հետևյալ բազմաթիւ բառերը, վորոնք ինձ չեն հանդիպել վսչ միայն Հունարան Դպրոցի թարգմանութիւններում, ալլ և մատենագրական մյուս լերկերում.

13. շրջագրեմ, ԵՂ 40.

14. ներքնագիր, ԵՂ 42.

15. վերագալուստ, ԵՂ 92.

16. ընդհանգնեմ, ԵՂ 100. 106.

17. շրջաչափութիւն, շրջաչափումն, Եջ 162, 168.

18. յարալիշելի, Եջ 163:

Վերոհիշյալ հունարան նորակերտ բաղադրութիւնները մի պարզ ապացույց են, անշուշտ, վոր Աղեքսանդրի վարքը չեր կարող թարգմանված լինել վնչ միայն հինգերորդ դարում, այլ և վեցերորդ դարի առաջին կիսում՝ Պիտոյից-Փիլոնյան խմբի թարգմանութիւնների ժամանակաշրջանում: Յունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները իմ ուսումնասիրութիւն մեջ (Եջ 115) յետ արդեն մատնացուցց ելի արել, վոր «ներհակ» բառը կազմվել ու առաջին անգամ գործածվել և Պիտոյից-Փիլոնյան խմբի թարգմանութիւններից հետո:

գ. Տաշյանի կարծիքով, Աղեքսանդրի վարքի թարգմանութեան մեջ մի շարք բառեր, վորոնք դտնվում են միայն «յետնոց քով» և կարող են թերեւս կարծվել նորագուէն բառեր — ինչպես «դիպուած բաստի» (Եջ 25), «լորտու» (Եջ 20), «ընդկողմեալ» (Եջ 101) ևն ևն — Կալիսթենեսի վկայութեամբ ստանում են մեծ հնութիւն (տես «Ուսումնասիրութիւնք», Եջ 202): Ինչ թվում է, վոր ալս լենթադրութիւնը հավանական չէ: Կալիսթենեսի թարգմանութեան մեջ թե այդ և թե նման բառերը, վորոնք գործ են ածված, գլխավորապես, 7 — 9-րդ դարերի մատենագրական յերկերում, ըստ իս, հավանորեն, նոր են, ինչպես և ինքն այդ թարգմանութիւնը: Այդպիսի կասկածելի բառեր են՝

1. քուշտընգեր 72. քուշտիկեր Վրդ. առ. 291.

քուշտակիր Տաթև. տես Աճառյան, Արմատ. բառ.

2. սատակ 116. Սոկր. Ա. 36, Եջ 103. Բ. 39,

Եջ 147 (= հուն. փն65). Ոսկ. յհ. բ. 39. Թղթ. ղաշ. ևն.

3. ուժաւոր 97. Խոր. Ա. 10, Եջ 33. ուժաւորութիւն Շիր.

4. աշտանակել «ցատքել և նստիլ ձիու վրա» 16. Խոր. Բ. 79, Եջ 217 և Բ. 82, Եջ 225, նաև Յհ. կաթ. «աշտանակել» վերոհիշյալ իմաստով չե հանդիպում իններորդ դարից առաջ.

5. հանդիսել 25, գումարտակել 104 (ունի և Յհ. կաթ.) կարող են լինել նոր բառեր.

6. պապաջեմ 125. Խոսր. 116. Նիւս. կազմւես Ահ. Արմ. Բառ.

7. խախանջեմ 125. չունի ՆՀԲ., տես Արմ. Բառ.

8. աշխովութիւն 25. աշխով Յհ. իմ. պաւլ. Խոր. Գ. 8, Եջ 265. ունի նաև Պիտ. «բաղդատութիւն մշակութեան և զինուորութեան» հատվածում (Եջ 485), վորը, հավանորեն, հնագույն մասի վարժություններից չե.

9. սրաւորեալ 110. մատենագրական հին յերկերում չե հանդիպում անգամ «սրաւոր» բառը.

10. հարուստ «հետեակ». «տուեալ ամսոց ամսոյ առն հարստի ոսկիանակա երիս և հեծելոյ ոսկիանակա հինգ» 109. հմմտե Արծր. Գ. 9, Եջ 174՝ «ունելով ընդ ինքեան գունդ հարուստ»: «Հարուստ» բառը «հետեակ» նշանակությամբ, վոր ուղիղ լուսաբանել ե Տաշյանը (Ռուսումն. 192), չե հանդիպում հնագույն լերկերում.

11. կիսախողխող 28. 105. Խոր. Գ. 32, Եջ 296. Ասող. Գ. 7, Եջ 172.

12. բազմախողխող 65. Խոր. Գ. 28, ԵՂ 290-
Յհ. կաթ.

13. կոճ «վէգ». «տալով նրան ճակգարանս և
կոճս, որով մակեդոնացւոց մանկունքն խաղան»

54. «կոճ» բառի իմաստը հնագույն յերկերում
տարրեր և.

14. ժամադէտ 5. ունի նաև Շիր. ժամադէտա-
կան, ժամադէտուակ Խոր. Աշխ. (1843), ԵՂ 587.
Սուքր. հրատ., ԵՂ 6. նույն իմաստով գործ և
ածվել հնում «ժամաբաշխ» բառը, տես Վեցօր. գ.

15. խաժակն 15. ԴՊորփ. 311. խաժակնու-
թիւն ԴՊորփ. 309, իսկ «խաժ» Թրաքացու քե-
րականութիւն մեջ նշանակում և «հասա, ստվար,
թափ».

16. տեղագրեմ 38. 39. 40. Ասող. Բ. 1, ԵՂ
72. տեղագրութիւն Խոր. Աշխ. (1843), ԵՂ 589.
Սուքր. հրատար., ԵՂ 7.

17. պեւկէ 102. «պեկիւ» Ղևոնդ 14, ԵՂ 90.

18. նախկին 75. 157. Ար. Ստ. 363. Յամրլ.
Սա. 447. Պէր. 495. Ներ. Պորփ. 242. Խոսր.
Սոկր. Յով. իմաստ. ևն: Այս բառն ինձ չե հան-
դիպել հունաբան յերկրորդ շերտի Թարգմանու-
թյուններից առաջ.

19. եռոտանի 63. Նոննոս, ԵՂ 10, իսկ «երեք-
ոտնեան» Սոկր. Ա. 16, ԵՂ 44. «եռ» հունաբան
դպրոցի ածանց և և գործ և ածվել հաճախ ավելի
ուշ շրջանի յերկերում.

20. փրփրածին 67. ունի նաև Նոննոս, ԵՂ 7.

21. խծբծանք 90, թվում և ուշ շրջանի բառ-
Աճառլանը սխալմամբ կարծում և, վոր այս բա-

որը գտնվում է միայն արգի գրականի մեջ. տես Արմ. Բառ.

22. ջախեմ 91. Ղևոնդ. Յհ. կաթ. «Ջախումն»
Խոր. Բ. 46, եջ 173. հինգերորդ դարի լերկերն
ուռնեն կրկնությամբ «Ջախջախել».

23. ցոփաբանութիւն 93. ցոփաբան Շիր. Հա-
յամ առակ.

24. յոգնատարած 98. Անան. եկ. Նար. մծբ.
«յոգն» առաջադիրը գրեթե չէ հանդիպում հինգե-
րորդ դարի յերկերում.

25. գեղալարմար 108. ունի նաև Մագ. «գեղ»
առաջդիրը հանդիպում է, գլխավորապես, հունա-
բան և ավելի հաճախ հետագա լերկերում.

26. ճախր առնուլ — «զոր տեսեալ... դօրացն
Աղեքսանդրի, ճախր առեալ ճեմէին» 134. «քան-
զի հարեալ նիզակաւ՝ ճախր առնոյր կաճեայն»
Խոր. Դ. 9, եջ 267. «ճախր առեալ ի ներքուստ
ի վեր ի լեառն Վարագ» Արծր. Գ. 20, եջ 254.
«հեծեալ ի ջորւոջ իւրում՝ ճախր առեալ ճեմէր»
Յհ. կաթ.: Մատենագրական հնագույն լերկերն
ուռնեն «ճախրել».

27. լանջապան — «սռնապանօք և բարձրա-
պանօք մորթեղինօք, և լանջապանօք զմարմինս
իւրեանց պատէին» 140. լանջապահ Արծր. Ա. 5,
եջ 39. Յհ. կաթ. լանջապանակ Յհ. կաթ.: Հնա-
գույն լերկերում «լանջապան» և «բարձապան»
բառերը չեն հանդիպում.

28. բարձապան 148. տես նախորդ «լանջա-
պան» բառը.

29. գազաճուռ 145. ունի նաև խոր. Աշխ. (1843), էջ 597.

30. տաճարալարդար 27. ունի Անան, եկեղ. ևն ևն:

Յեթե անգամ ապացուցվի, վոր այս բառերից մի քանիսը գործ են ածվել հնագույն լեզվերում, թվում ե ինձ, վոր սրանց մեծագույն մասը համարվելու լեն մատենագրական հետին շրջանի բառեր, գլխավորապես, 7 — 9-րդ դարերի:

գ. Աղեքսանգրի վարքի թարգմանության մեջ կան, ինչպես մատնացույց ե արել Տաշլանը (Ուսումնասիր., էջ 205 — 206), բազմաթիվ «ոսմիկ ձևեր», վոր նա համարում ե հին և սովորական հինգերորդ դարի գրաբարում: Ընդունելով սակայն, վոր Աղեքսանդրի վարքն ու ժամանակվա թարգմանությունն ե և գրված ե արաբական շրջանում՝ կարելի չե լենթագրել, վոր վերոհիշյալ ռամկաբանությունները վհճ թե հին են, այլ արդյունք են, հավանորեն, լեզվի հետագա զարգացման:

ե. Վոր Աղեքսանգրի վարքը թարգմանված ե արաբական շրջանում և վհճ հինգերորդ դարում՝ այդ լեռում ե ըստ իս, բացի վերոհիշյալ նկատառումներից, նաև այդ թարգմանության մի քանի հատվածներից, վորոնց մեջ հանդիպում են արաբական բառեր: Այդ հատվածները՝ վոր ուշադրության չեն առնվել՝ հետևվալներն են.

1. ՃՂԸ, էջ 113՝ «Իսկ Աղեքսանգրի բախտակից եղեալ և ի գութ դորովոյ շարժեալ լայր դառնապէս. և հրամայեաց թ ա փ տ ո լ Վ [չորս օրինակ՝ թ ա բ ու տ ո լ կ ա մ թ ա փ ու տ ո լ] բառ-

նալ զմարմինն և թաղել զնա որպէս պարա էր զթագաւոր թաղել պարսկական օրինօք».

2. ՄԾԸ, եջ 167՝ «և ոչ հաւատացեալ թէ իցեն սեղմք կռածոյք [արձանքն Հերակլիսի], կամ եղև ինձ զոհս մատուցանել Հերակլի և ծակել զմի յարձանացն, և երևեցաւ ինձ համակ ոսկի. կամ եղև ինձ դարձյալ լնուլ զծակն, և գտաւ ծակուածըն զի տարաւ ոսկիս հազար և հինգ հարիւր մտղալ [երկու օր. մթիսալ. երկու ալլ մըսղալ կամ մսխալ] որ է դրամ մի»:

Առաջին հատվածի մեջ գործ է ածված «թափուտ» բառը, վորը Տաշյանը համարում է «հին աղաւաղութիւն» հետևյալ իր բացատրության մեջ.

«Ուսումնասիրութիւնք», եջ 247՝ «Այս բառն է ռամկօրէն (ճշդիւ ևս՝ արաբերէն) «թափութ» որ դագաղ կընշանակէ. Բաւական հին աղաւաղութիւն մըն է այս, այնպէս որ նաև քիչ մ'ետքը (113,23) ուր Թ. 424 «դին» կ'ըսէ, չորս շրինակք կըկրկնեն «թապութ» բառը»:

Աճառյանն իր «Արմաասկան լառարանում» մատնացույց է անում, վոր Սեն-Մարտենը (Mémoires II, եջ 292) և Պատկանյանը (Matер. I, 9) «թափուտ» բառը մեկնել են իբրև փոխառություն արաբերենից: Ինքը սակայն կարծում է, վոր այդ «կարելի չէ, վորովհետև հայ բառի գործածությունը հին է». ուստի և նույն բառը նա համարում է փոխառություն վիչ թե արաբերենից, ալլ պարսկերենից (= պրս. tâbūt, արաբ. tâbūt «դագաղ»):

Տաշյանի ու Աճառյանի վերոհիշյալ բացատրությունների գլխավոր ու միակ հիմքը, անշուշտ, այն

ե, վոր նրանք Աղեքսանդրի վարքը լենթադրել են հին թարգմանություն։ Ընդունելով այդ յերկը նախարարական շրջանի թարգմանություն՝ նրանք «Թափուտ»-ը համարելու եյին, բնականաբար, կամ ընդմիջարկություն և կամ փոխառություն պարսկերենից։

Այս լերկու կարծիքն ել ըստ իս ընդունելի չեն։ Քանի վոր լեզվական վերոհիշյալ մեր դիտողությունները վկայում են, վոր Աղեքսանդրի վարքը թարգմանված պիտի լինի արաբական շրջանում՝ միանգամայն հասկանալի յե նրա մեջ արաբերեն «Թափուտ» բառի գործածությունը։ Այս բառը, վոր պարսկերենում հանդիպում ե նաև Ֆիրդուսու մոտ (I, 514, 1352, 1354. տես Hübschmann, Armentische Grammatik, եջ 153), թե հայերենում և թե պարսկերենում փոխառություն ե, անշուշտ, արաբերենից, ինչպես այդ ճիշտ լենթադրել են Սեն-Մարտենը և Պատկանյանը։

Աղեքսանդրի վարքից վերև մեջ բերված լերկորդ հատվածն ունի, ինչպես տեսանք, «մտղալ» բառը, վոր փոխառություն ե դարձյալ արաբերենից և չե հանդիպում վոչ միայն մատենագրական հնագույն յերկերում, այլ և Անանիա Շիրակացու «Յաղագս կշոոց և չափուց» գրվածքում։ Ավգերյանի վկայությամբ՝ Վենետիկի ձեռագիրներից Բ. որինակի հավելվածում միայն հիշվում ե «մաղալ»-ը հետևյալ հատվածում՝ «մթխալն որ է դահեկան մի... մթխալն իդ կուտ է» (տես «Բացատրութիւն չափուց և կշոոց», Վենետիկ 1831, եջ 27 և 71)։ Այս հատվածը, անտարակույս, Շիրակացունը չե, այլ ուշ ժամանակի հավելումն և ուրիշ գրչի։ Վոր «մտղալ»-ը կամ «մթխալ»-ը (= արաբ. miṯqāl, տես Hübschmann, Arm. Gramm., եջ 271) արաբական

բառ ե՛ ալդ անվիճելի չե։ Ըստ Աճառյանի (տես «Արմատական Բառարան») «մթխալ»-ը ծագում ե արաբ. Ծղ «ծանրութիւն» արմատից։ Ուրեմն՝ այս բառի գործածութիւնը ևս Աղեքսանդրի վարքի թարգմանութիւն մեջ հավանական մի նոր ապացույց ե, վոր ալդ թարգմանութիւնը գրված ե արաբական շրջանում։

Ուշադրութիւն արժանի չե նույն այս թարգմանութիւն մեջ նաև հետևյալ հատվածը.

Լէ, եջ 18՝ «Զարմանք են զնախիմացութեան փորձ առնուլ զնեկտաներայ. զի ալը եգիպտացի ի Մակեդոնիա եկեալ ելլադական օրինօք պատանաց և թաղմամբ թաղեցաւ. և Աղեքսանդրոս որ մակեդոնացին էր, յնգիպտոս եկեալ մսրական թաղմամբ աստուածօրէն լինէր»։

Տաշյանը նկատել ե, վոր «մսրական թաղմամբ» խոսքերը չելին կարող գրված լինել հինգերորդ դարում։ Նրա կարծիքով՝ «մսրական թաղմամբ» փխ. «եգիպտական» լետամուտ ռամկականութիւն է» (Ուսումնասիր., եջ 216)։ Տաշյանի ալս լենթադրութիւնն ևս ինձ թվում ե վիճելի ու անհավանական։ Ինչպես վերև մատնանշված «թափուտ» և «մտղալ» արաբական բառերը, նույնպես և «մսրական» բառը, վհչ թե հետամուտ ընդմիջարկութիւններ են, ալլ հավանական նշաններ, վոր Աղեքսանդրի վարքը, ինչպես և Խորենացու «Աշխարհացույց»-ը, ուշ ժամանակի թարգմանութիւններ են։

Լեզվական վերոհիշյալ դիտողութիւններից անկախ հիշատակութիւն արժանի չե և ալն, վոր Աղեքսանդրի վարքը, ինչպես և Խորենացու «Աշխարհացույց»-ը և պատմութիւնը, առաջին անգամ հիշվում են Թովմաս

Արծրունու պատմության մեջ, վորը հորինված է տասերորդ դարի առաջին կիսում: Հակառակ բանասերների յենթադրության՝ վոչ Ղազար Փարպեցին և վոչ ել Սերեոսը չեյին կարող ոգտված լինել Աղեքսանդրի հայերեն այժմյան վարքից, վորովհեան այդ յերկը, ինչպես անսանք, ավելի ուշ շրջանի թարգմանությունն է: Իսկ յեթե այդ այդպես է, ուրեմն, հիմնվելով Խորենացու «Աշխարհացոյց»-ի և Աղեքսանդրի վարքի վերև մատնանշված նմանությունների վրա, նաև ուշադրության առնելով այն սերա կապը, վոր ունի Կեղծ-Կալիսթենեսը Խորենացու պատմության հետ՝ կարող ենք միանգամայն հնարավոր ու անգամ հավանական համարել, վոր Կալիսթենեսի մեր ձեռքը հասած հայերեն թարգմանությունը պատկանում է «Աշխարհացոյց»-ի հեղինակ Մովսես Խորենացուն, վորի պատմությունը ևս գրված է, ինչպես կրանեսենք, իններորդ դարում:

**ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՌԵՂԾՎԱԾԻ
ԼՈՒԾՈՒՄԸ**

1048444

1048444

15. Խորհնացու պատմությունը յեղ «Առխարհացոյց»-ը գրված են իննետուրդ դարում՝ հայ վաճառականության զարգացման ու Հայաստանի տարանցիկ առևտրի վերականգնման օրջանում: — Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին ուսուներեն իմ աշխատութեան մեջ մատնացույց ե արված (տես «О торговле и городах Армении», եջ 133 — 140), վոր արաբական տիրապետութիւնը Հայաստանում, մինչև իններորդ դարը, նպաստավոր չե յեղել միջազգային ապրանքիկ առևտրի զարգացման համար Հայաստանի վրայով: Ոմմայանների և առաջին Աբբասյանների ժամանակ միջազգային առևտրական հարաբերութիւնները զարգանում եյին մեծ չափերով բոլորովին այլ ուղղութեամբ՝ վնջ թե Բյուզանդական կայսրութեան հետ Ասորիքի, Փոքր Ասիայի կամ Հայաստանի վրայով, այլ, գլխավորապես, Զինաստանի, Հնդկաստանի, Սպանիայի և հարավային Յեվրոպայի հետ:

Արաբական խալիֆայութեան ժողկման ու բարգաւաճման առաջին շրջանը, ինչպես ուղիղ դիտել ե Գուրկո-Կրյաշինը (տես В. Гурко-Кряжин, Прошлое и настоящее Советской Армении, «Новый Восвок», գիրք 16 — 17, եջ 206), համառ ու անվերջ կռիւների մի շրջան եր խալիֆայութեան արևմտյան, բյուզանդական սահմաններում:

Այդ անդադար կռիւները և մշտական թշնամու-

թյունն անհնարին եյին դարձնում Արևելքի առևտուրը Բյուզանդիայի հետ։

Հայաստանի անտեսական բարեկեցության և տրնտեսական զարգացման վրա միջազգային առևտրի այդ ընդհատումն ունենալու յեր, անշուշտ, բացասական ազդեցություն, և հետաքրքիր ե, վոր արաբական տիրապետության սկզբնական շրջանում Հայաստանի անտեսական կյանքում նկատելի յե վորոշ անշարժություն և անգամ հետաշրջում։

Այս դրությունը սկսել եր փոխվել, ինչպես ցույց ենք տվել վերոհիշյալ մեր աշխատության մեջ, իննբորդ դարում։

774 — 775 թվերի նախարարական մեծ ապստամբությունից հետո, վոր աղետալի հետևանքներ ունեցավ նախարարական Հայաստանի համար, Բագրատունիներն հարկադրված եյին թողնել իրանց հայրենի կալվածները Կոգովիտում և հեռանալ Հայաստանի լեռնային արևմտյան շրջանները։ Այստեղ նրանք, գտնվելով Բյուզանդիայի հովանավորության տակ, նորից զորեղացան, և իններորդ դարի սկզբներում կարողացան հետզհետե տեր դառնալ ընդարձակ կալվածների ու նոր յերկիրների Հայաստանի ու Վրաստանի նաև դաշտային մասերում։

Բագրատունիների. այս զորեղացմանը մեծապես նպաստում եյին գահակալական կռիվները Հարուն ալ-Ռաշիդի մահից հետո, մահմետական ամիրայությունների և աղանգավորների ապստամբությունները Հայաստանում և, մանավանդ, Բաբելի մեծ ապստամբությունը 817 — 837 թվականներին։ Նալիֆայության թուլացման և յերկպառակությունների խռովահույզ

հենց այս շրջանում, ինչպես վկայում է Վարդան պա-
միչը, «հանգչէր երկիրս Հայոց, և սկսան զօրանալ
իշխանքն մեր յիւրաքանչիւր տեղիս» (տես «Հաւա-
քումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենե-
նեաիկ 1862, ևջ 77):

Նույն այս իններորդ դարը միջազգային առևտրի
զարգացման մի նոր շրջան եր Հայաստանում, վոր
սկիզբ եր դնում Բազրատունյաց Հայաստանի տնտե-
սական ու կուլտուրական բուռն և արագ վերակենդա-
նացման:

Բազրատունիները, ֆնալով հավատարիմ արաբա-
կան խալիֆայության, ունեյին միաժամանակ սերտ
բարեկամական հարաբերություններ նաև Բյուզանդա-
կան կայսրության հետ: Նրանց յերկիրը, վոր Բա-
բերդի ու Արտանուճի վրայով հաղորդակցություն
ունեւր բյուզանդական վաճառականական նավահան-
գիստների հետ, վիչ միայն խոշոր նշանակություն եր
ստանում իբրև համաշխարհային առևտրի տարանցիկ
ճանապարհ, այլ և դառնում եր չեզոք մի կենտրո-
նավայր, տնտեսական մի բուլֆեր, ուր խոշոր չափե-
րով սկսում եր զարգանալ այդ առևտուրը:

Միջազգային այս առևտուրը խոշոր մի յերևույթ
եր, անշուշտ, վոր չեւ կարող չանդրադառնալ նախա-
բարական Հայաստանի սոցիալական կազմակերպու-
թյան, ինչպես և նրա կուլտուրական ու անգամ մտա-
վոր կյանքի վրա: Ուշագրաւ է այդ տեսակետից, վոր
հենց իններորդ դարից սկսած կարելի յե յենթագրել
ընիկ հայ վաճառականության զորեղացումը, վորն
ոտաբազգիների հետ միասին ղեկավարող դեր եր կա-
տարում թե տեղական և թե համաշխարհային առև-
տրում:

Տնտեսական ու սոցիալական այս հեղաշրջումը կարևոր մի ազդակ եր ըստ իս, վոր խթան եր հանդիսանում աշխարհայեցողության ընդլայնման և քաղաքական նոր ձգտումների ու նոր գաղափարախոսության առաջացման:

Ինձ թվում է, վոր մատենագրության մեջ նոր այդ ձգտումները ե գաղափարները բավական վորոշ նկատելի յեն Մովսես Խորենացու յերկերում, վորը տաղանդավոր արտահայտիչն է նաև Բագրատունյաց տոհմի իղձերի ու մտայնության:

Խորենացու «Աշխարհացոյց»-ը և վերոհիշյալ «Մղոնաչափ»-ը, վորոնց մեջ հետաքրքիր տեղեկություններ են հաղորդված առևտրական ճանապարհների, նշանավոր վաճառատեղիների, զանազան յերկիրների բնական հարստությունների, արտահանվող ապրանքների ու անգամ նրանց գների մասին՝ իրանց բովանդակությամբ իսկ կապ ունեն միջազգային առևտրի հետ, վոր Հայաստանում նորից սկսել եր զարգանալ իններորդ դարում: «Աշխարհացոյց»-ի մեջ առաջին անգամ հիշատակված ե նույնպես բնիկ հայ վաճառականությունը, վորի մասին չկան հիշատակություններ նախորդ դարերի յերկերում:

«Աշխարհացոյց»-ի այդ տեղեկություններից ալեւորդ չեմ համարում մեջ բերել հայ վաճառականության և նշանավոր վաճառատեղիների մասին հետևյալ հատվածները.

ա. V. եջ 590,4—6— «Քանզի զյունականաւն և զկասբիականաւն մերոց իսկ արանց պատահեաց շուրջ անցեալ. յորս վարկանիմ և հնդկայնոյն նոյնպէս լինել» (հմտոե նաև Տ. 8,6—8).

բ. Տ. 22,18—14՝ — «Ունի [Բիւթանիա] եւ մայրաքաղաքս երկուս զՔաղկեդոն և զՆիկոմիդիա, որք ունին ընդ ինքեանս քաղաքս չորեքտասան, և եմպոռիոնս բազումս, այսինքն քաղաքս ծովեղերայս, վաճառատեղիս» (հմմտե Վ. 600,10—12).

գ. Տ. 27,29 — 28,2՝ — «Ունի [Կողքիս, որ է Եգր] հինգ քաղաքս՝ Իանի, Կոտա, Ռոդիւպօլիս, Աթինա, Ռիդոն. եւ այլ բազում եմպոռիոնս, այսինքն գեղաքաղաքս ծովեղերեայս, յորոց է Տրապիզոն» (հմմտե Վ. 605).

դ. Տ. 42,28—31՝ — «Ունի [Սկիւթիա] աշխարհըս հինգ, զՍոգդիանի՝ որ է Սագաստան, եւ զՍակէ. ընգ երկուսին են ազգ հնգետասան, հարուստք արուեստաւորք վաճառականք՝ որ բնակեն ի մէջ Թուրքաստանի եւ Արեաց (առ) Եմաւոն լերամբն» (հմմտե Վ. 614,23—25).

ե. Վ. 612,6—8՝ — «Եւ է Պասրա ամենալից վաճառօք, և եկք նաւաց ի հնդկաց և յամենայն կողմանց արեւելից».

Հմմտե նաև Վ. 612,17—19. Վ. 616,15—16. Տ. 46,10—12 և այլն:

«Աշխարհացոյց»-ի թե այս և թե ուրիշ նման տեղեկութիւնները վերաբերվում են ըստ իս Բյուզանդա-արաբական առևտրին, վոր սկսել եր զարգանալ իննեքորդ դարում:

Թե ինչպիսի բարձր դիրք են ունեցել «Աշխարհացոյց»-ում հիշված հայ վաճառականները, նաև քաղաքացիները, Հայաստանի վերակենդանացման այս շրջանում՝ այդ յերևում ե խորենացու պատմության հետևյալ հատվածից, վորը կարևոր մի վկայութիւն ե քա-

ղաքացիների դրության մասին վոչ թե Վաղարշակ Թագավորի, այլ, հավանորեն, իրա խորենացու ժամանակ.

«Հրաման տայ [Վաղարշակ] — վկայոււմ ե խորենացին — և քաղաքացեաց մարդկան արգոյ և պատիւ լինել առաւել քան զգեղջկաց. և գեղջկաց պատուել զքաղաքացիս որպէս զիշխանս. և քաղաքացեաց մի կարի առ գեղջկօքն պերճանալ, այլ եղբայրաբար վարիլ, վասն բարեկարգութեան և աննախանձոտ կենաց, որ է շինութեան և խաղաղութեան կենաց պատճառք» (II, Ը, ԿՂ 117—118):

Ինչպես հայտնի յե, խորենացին իրեւ պատմաբան իր հմտությամբ շատ ավելի բարձր ե կանգնած, քան հնագույն հայ պատմիչները: Նա քննադատական վերաբերմունք ունի դեպի հինը, պարսավում ե հայոց նախկին թագավորների անիմաստութիւնը, անվանում ե նրանց «անբան, թուլամիտ, վայրենի»։ Նույն իսկ Սահակ-Մեսրոպյան շրջանի թարգմանչական արվեստը նա համարում ե թերի ու անկատար: խորենացու պատմության քննադատական այս ուղղութիւնը, վոր ունի բազմատեսակ արտահայտութիւններ, արդիւնք ե, հավանորեն, սոցիալական ու կուլտուրական այն հեղաշրջման, վոր տեղի յեր ունեցել իններորդ դարում:

Լինելով փառաբանող ու հերոսացնող Բագրատունի իշխանների՝ խորենացին, ինչպես այդ պարզ յերևում ե նրա պատմության բովանդակութիւնից, ունի անտարակույս, հատուկ մի նպատակ՝ տրամադրութիւն ստեղծելու ի նպաստ նախարարական Հայաստանի միության և Բագրատունյաց թագավորության հաստատման: Քաղաքական նրա այս ձգտումն ու իղձը,

վոր հակառակ եյին նախարարական կենտրոնախույս շրջանների հակումներին, համապատասխանում են ըստ իս Բագրատունիների հովանավորության տակ զարգացող մեծ առևտրի շահերին։ Այդ բաղձանքները հասկանալի յեն, բնականաբար, վերակենդանացման իններորդ դարում և միանգամայն անհավանական են Հայաստանի տնտեսական ու կուլտուրական հետաշրջման յոթերորդ կամ ութերորդ դարերում։

Պորենացու ուրույն աշխարհայացքը և նրա դադափարախոսության կապը իններորդ դարի վերածնության հետ այնքան կարևոր ու հետաքրքիր խնդիրներ են, վոր կարող են նյութ ծառայել հատուկ ընդարձակ մենագրության։ Մենք բավական ենք համարում այստեղ վերոհիշյալ մի քանի նկատողությունները, վորոնք ուշագրավ կռվաններ են Պորենացու ժամանակի վորոշման։

Ընդհանուր այս դիտողությունները, վոր կարող են թվալ վիճելի կռահումներ, ինչպես կըտեսնենք, հաստատվում են կարևոր նոր փաստերով, վորոնք ուշագրության չեն առնվել նախորդ ուսումնասիրություններում։

16. Խորեմացու պատմությունը իննեւորդ դարի գործ լինելը յեմքադրվել ե մայել մախորդ հետազոտություններում։ — Վոր Պորենացու պատմությունը կարող ե լինել իններորդ դարի գործ՝ այգ յենթադրել են ինձանից առաջ Ֆրանսական գիտնական Լաֆրոզը, Պալաթյանցը, Ադոնցը, Մառը, իսկ վերջերս նաև Ակիւյանը և Մարկվարտը։

Դեռևս 18-րդ դարի առաջին կիսում Լաֆրոզը միանգամայն ճիշտ կռահել եր, վոր Պորենացու պատմու-

թյունն ուշ ժամանակի գործ եւ 1730 թվի ապրիլի 24-ին Գուրիելիմ Վիստոնին դրած իր նամակում խորենացու ժամանակի մասին նա հայտնել ե հետևյալ կարծիքը՝

«խորենացւոյ վրայ իմ կարծիքս կ'ընթեռնուս ի ծանօթութիւնս վիպասանական քերթուածի Կլայեցւոյն Ներսիսի Միայն քանի մը խօսք աւելցընեմ: Կըհամարիմ թէ այդ պատմութիւնը շարադրողը ապրած ըլլայ ի միջոցի իններորդ և տասներորդ դարուց, յաւուրս Բաղրատունի իշխանաց, որ մեծ ազդեցութիւն ունէին յայնմ ժամանակի, և իշխանք էին բովանդակ Հայաստան աշխարհի» (տես Գ. Զարբանալյան, «Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրևմուտս», Վենետիկ 1895, եջ 52. հմմտե The saurus epistolici Lacroslani, 1742 — 1746, հատ. III, եջ 281):

Հա-Կրողի այս կարծիքը չեւ կարող հաւանություն գտնել, վորովհետև մինչև անցած դարի ութսունական թվականներն ընդհանուր տարածված համոզմունք եր, վոր խորենացին ապրել ու գրել ե հինգերորդ դարում:

Գուռշմիտի և Կարրիերի մերկացուցիչ բնույթ կրող նոր ուսումնասիրություններէց հետո՝ խորենացուն հնարավոր եր համարել իջեցնել իններորդ դար նաև պրոֆ. խալթյանցը: Ռուսերեն լեզվով գրած իր ընդարձակ հետազոտության մեջ («Армянский эпос в истории Армении Моисея Хоренского», Москва 1896, եջ 344) նա խորենացու աղբյուր եր համարել Ղևոնդ յերեցի պատմությունը և խորենացու ժամանակը յենթադրել Ղևոնդից հետո՝ ութերորդ դարի վերջերում կամ իննե-

բորդ դարի սկզբում: Պետք է ասել, վոր Խորենացու «Բանագործյուն»-ները Ղևոնդից հիմնված են նրա մոտ մի քանի սովորական բառերի կամ անունների ու դարձվածքների, նմանության վրա, ուստի և Խալաթյանցի թե բռնաձիգ համեմատությունները և թե նրա ընդհանուր յեզրակացությունը վիճելի եյին և կասկածելի:

Խորենացուն շատ ուշ ժամանակի մատենագիր եր յենթագրել նույնպես և պրոֆ. Ադոնցը հետաքրքիր իր մի հոդվածում, վոր լույս եր տեսել 1901 թվին (տես «Начальная история Армении у Себеоса в ее отношениях к трудам Моисея Хоренского и Фауста Византийского», Визант. Времен. 1901, հատ. VIII, № 1 և 2, եջ 41 — 42): Ադոնցի կարծիքով՝ Խորենացու պատմությունը գրված է Բագրատունիների զորեղացման ժամանակ և Բագրատունեաց թագավորության հաստատումից առաջ: Այդ պատմությունը, վոր գերազանցապես քաղաքական է և նկարագրում է Հայկազանց և Արշակունիների թագավորության անցյալը, Ադոնցի ասելով, արդյունք է բարձր տրամադրության և քաղաքական մոտալուտ ազատության ակնկալման: Հիմնվելով իր այս դիտողությունների վրա՝ Ադոնցը Խորենացու պատմության ժամանակը յենթադրում է յոթերորդ դարից հետո և Բագրատունյաց թագավորության հաստատումից առաջ¹:

1 Նույն կարծիքն է հայտնի նաև ակադեմ. Մառն իր «Кавказский культурный мир и Армения» աշխատության մեջ (Петроград 1915)՝ «взгляд Моисея Хоренского характеризует не реальность эпохи древнего царства, а современность историка, дающего идеализованное представление о первом аршакидском царе согласно национальным идеалам его времени, приблизительно VIII—IX-го века по Р. Хр.» (եջ 33).

Խորենացու պատմությունն իններորդ դարի գործ
և համարվում նաև վերջերս լույս տեսած Ալիսյանի և
Մարկվարտի ընդարձակ ուսումնասիրություններով
(տես Ալիսյան, «Մատենագրական հետազոտություն-
ներ», հատոր Գ., Վիեննա 1930 և Markwart, Die Ge-
nealogie der Bagratiden und das Zeitalter des Mar
Abas und Ps. Moses Xorenathi, Caucasica, Fasc. 6,
2 Teil, Leipzig 1930):

Ալիսյանը վերոհիշյալ իր ուսումնասիրության յերկ-
րորդ մասը (եջ 127 — 291), ինչպես հայտնի յե, նվի-
րել և Խորենացու և Ղևոնդ յերեցի նույնության հար-
ցին: Այդ հարցի մանրագնին քննությամբ նա հանգել
և հետևյալ յեզրակացությունների (տես եջ 286):

1. «Մովսես Խորենացի եւ Ղևոնդ մի եւ նոյն
անձնաւորութիւններն են, ինչպէս մի եւ նոյն
են Մովսէս և Մար Աբաս Կատինա»:

2. Խորենացու «ուսումնասէր» և «բարձրա-
գունից արժանաւոր գովութեանց» մեկեանսն այն
Սահակ Բագրատունին է, վորն «Անձեացեաց երկ-
րին, այսինքն Կորճայք նահանգին ընդարձա-
կուած սահմաններուն տէրն էր 806—816 շրջա-
նին»:

3. «Մովսէս ի գլուխ հանած է իւր պատմու-
թիւնը Սահակ Բագրատունւոյ արքունիքը հաւա-
նօրէն ի Կանգուար»:

4. «Հայոց Պատմութիւնը յօրինուած է 806-էն
ետքը, ոչ շատ ուշ քան 820, ուստի 810-ին մեր-
ձաւորապէս»:

Ալիսյանի այս յենթադրություններից և վե՛լ մեկը
չե կարող ըստ իս համարվել հավանական և ընդունե-

լի, վորովհետև այդ յենթադրությունները չեն համապատասխանում այն կարևոր նոր մեր գիտողություններին, վոր ներքև քննության են առնվելու: Ակիսյանի ուսումնասիրության մեջ ուշադրավ ե միայն այն, վոր նա ևս խորենացու պատմությունը համարում ե շատ ուշ ժամանակի գործ:

Մարկվարտի ուսումնասիրության մեջ, վոր նվիրված ե, գլխարորապես, Բագրատունիների ճյուղագրության, շոշափված ե նաև Մար Արասի և խորենացու ժամանակի խնդիրը և նրանց ժամանակը վորոշված ե նույնպես իններորդ դարում:

Մարկվարտի գիտողություններն այս հատուկ խնդրի մասին, գծախտարար, բավարարաչափ հիմնավորված չեն, վորովհետև հանգուցյալ հայագետը մտադիր ե յեղել վերադառնալ նույն խնդրին իր հաջորդ աշխատություններում (տես Die Genealogie der Bagratiden, եջ 56 և 67):

Քննության յենթարկելով Մար Արասի և խորենացու վկայությունները Բագրատունիների ճյուղագրության մասին՝ նա մատնացույց ե արել այդ հեղինակների ժամանակը և մեջ ե բերել հետևյալ իր յեզրակացությունները:

1. Մար Արասի պատմությունը գրված ե Հակոբ Նդեսացուց և Ղևոնդից հետո Տառնում, «իշխանաց իշխան» Բագարատի արքունիքում, իններորդ դարի առաջին կիսում (տես եջ 16 և 56):

2. Մար Արասը՝ Փարնավազյան Բագարատին նկարագրելիս՝ ի նկատի յե ունեցել իբրև կաղապար «իշխանաց իշխան» այս Բագարատին:

3. Մար Արասի վկայությունը, վոր Արշակ

արքան Փարնավազյան Բագարատին նշանակել եր «իշխան և հրամանատար ամենայն թագաւորութեան», հարմարում ե միայն Տարոնի «իշխանաց իշխան» Բագարատին, վորը Հովհաննես կաթողիկոսի պատմութեան մեջ ևս անվանված ե «հրամանատար և իշխան իշխանացս Հայոց» (եջ 49):

4. Յեթե Խորենացին, Մար Աբասի վկայութեան հակառակ, Բագարատունիների նախահայր ե համարում Շամբատ-Սմբատին՝ «զկոչեցեալն Բագարատ»՝ դրա պատճառն այն ե, վոր նա համակրում ե Սմբատ Խոստովանողին և ատում Տարոնի հովատուրաց Բագարատին (եջ 67):

5. Խորենացու այս Շամբատ-Բագարատը նախատիպն ե, ուրեմն, Սմբատ սպարապետի, վորը 856 թվին վախճանվել եր Սամարայում «վասն Քրիստոսի խոստովանութեանն» (եջ 65):

6. Խորենացին իր պատմութեանը գրել ե այս Սմբատի վորդու՝ «իշխանաց իշխան» Աշոտի արքունիքում՝ վորպես մի հայելի հայկական պետութեան, վոր նոր ստեղծվելու յեր» (եջ 67):

Մարկվարտը, ինչպես տեսնում ենք, Խորենացու ժամանակը վորոշել ե ճշգրիտ կերպով և իր կարծիքը հիմնավորել նաև Խորենացու Շամբատ-Բագարատի վերաբերյալ ուշագրավ ու կարևոր իր դիտողութեանները, վոր նոր լույս են սփռում Խորենացու հարցի վրա, ինչպես և «Աշխարհացոյց»-ի խնդրի մեր նոր լուսաբանութեանը, կարևորագույն նեցուկներն են ըստ իս Խորենացու առեղծվածի լուծման:

Ներքև մենք կը տեսնենք, վոր Մարկվարտի վերո-

հիշյալ դիտողութիւնները միանգամայն ճիշտ են և հաստատովում են այն նոր տվյալներով, վոր մանրամասն քննելու յենք:

17. Խորեմուցու պատմութիւնը գրված է Ռուդայի Խոսովանքից հետո: — Ակինյանը վերոհիշյալ իր աշխատութեան մեջ մի ընդարձակ դուռ է նվիրել Խորեմուցու «Ողբ»-ի քննութեան և իբրև այդ քննութեան արդիունք հանգել է հետևյալ յեզրակացութիւններէ (տես «Մատենագրական Հետազոտութիւններ», եջ 180—181).

ա. «Մուսէս Խորեմացոյ «Հայոց Պատմութեան» վերջը (գլ. 68) գտնուած Ողբը իւր բովանդակութեամբը անյարիր և տեղւոյն և ժամանակին. այն չի կրնար «Հայոց Պատմութեան» վերջարանը նկատուիլ»:

բ. «Բնական երեոյթներու, քաղաքական և բարոյական կեանքի հանգամանքներու մասին հաղորդուած տեղեկութիւնները կ'ականարկեն Ը. գարու երկրորդ կէսին (750—774) դիպուածները, այնպէս ինչպէս նկարագրած են զանոնք Սուտն-Դիոնեսիոս Թել-Մահրեցի և Ղևոնդ երէց: Ողբը գրուած է 774-ին»:

գ. «Ողբը սկզբնաբար յօրինուած է իբրև վերջարանութիւն Ղևոնդ երէցի Պատմութեան առաջին մասին» (գլ. 1Գ)... «790-ին, երբ Ղևոնդ իւր Պատմութեան կցեց 774—790 տարիներու դիպուածները, տեղափոխուեցաւ Պատմութեան Բ. մասին վերջը, դոյզն փոփոխութիւններով... և ապա «երկրորդ ձեռք մը Ղևոնդի Պատմութեան վերջարանը փոխադրած է «Հայոց Պատմութեան» վերջը: Այս փոխադրութեան ժամանակ սուծուած

են մանր փոփոխութիւններ եւ յաւելուածներ,
որոնք շօշափելի են»:

Ակիրնյանի այս յենթադրություններէց և վոչ մեկին մենք համամիտ չենք: Խորենացու «Ողբ»-ը գտնւելում ե ըստ իս իր իսկական տեղում, և իր լեզվով վոճով ու բովանդակությամբ միանգամայն անհարազատ ե Ղևոնդին և անբաժան մասն ե, անշուշտ, վոչ թե Ղևոնդի, այլ Խորենացու պատմության:

Ապացուցանելու համար՝ վոր «Ողբ»-ը գրված պիտի լինի 774 թվին՝ Ակիրնյանը մանրամասն համեմատել ե բնության արհավիրքների և քաղաքական, տնտեսական ու բարոյական կյանքի մասին «Ողբ»-ի մեջ հաղորդված մանրամասնություններն այն նման դիպվածների հետ, վորոնք տեղի եյին ունեցել Ասորական Միջագետքում Ը. դարի յերկրորդ կեսին, հատկապես 772—773 թվերին, և նկարագրված են Սուտն-Դիոնիսիոս Թել-Մահրեցու ժամանակագրության մեջ:

Այս համեմատություններէց, ինձ թվում ե, առարկելի յեն, նախ և առաջ, բնության արհավիրքների, նաև սովի և հիվանդությունների, վերաբերյալ նմանությունները: «Ողբ»-ի մեջ հիշված յերաշտը, կարկուտը, ծանր ձմեռը, անժամանակ անձրևները սովորական, անշուշտ, յերևույթներ են, վոր պարբերաբար կրկնվել են Հայաստանում վոչ միայն հին, այլ և նոր ժամանակներում: Ակիրնյանի յենթադրությունը, վոր այդ արհավիրքները հազվագյուտ յերևույթներ են և վոր դրանք պետք ե միաժամանակ զգացված լինեյին Հայաստանում և սահմանակից Ասորական Միջագետքում՝ ավելի քան վիճելի յե և անհավանական:

Համոզիչ չեն նաև քաղաքական պայմաններին վե-

րաբերվող համեմատությունները: Պատերազմներ ու խռովություններ, թագավորների խստություններ, կեղեքումներ ու հալածանքներ, վոր ակնարկված են «Ողբ»-ի մեջ, դարձյալ սովորական յերևույթներ են և չեն կարող վերագրվել միայն այս ժամանակաշրջանին:

Շատ պարզ է, վոր նման համեմատությունները չեն կարող նշանակություն ունենալ և ծառայել իբրև յեկակտ «Ողբ»-ի ժամանակի վորոշման:

Ակինյանի ուշադրությունից, դժբախտաբար, վրիպել են «Ողբ»-ի այն մանրամասնությունները, վորոնք միանգամայն հակառակ են իր յեզրակացության և պարզ ակնարկներ են, վոր խորենացու «Ողբ»-ը գրված է վոչ թե 774 թվին, այլ 852—855 թ. Բուղայի արշավանքից հետո:

Ուշադրության արժանի յեն այդ տեսակետից «Ողբ»-ի հետևյալ ակնարկները.

1. Խորենացի III, 68, եջ 360, տող 10—16 (Տրփ-դիս 1913)՝

«Ի դերութիւն վարեցաւ Սեդեկիայ, և Զօրաբարէլ ոչ ուրեք է, որ նորոգէ զպետութիւնն: Անտիոքոս բռնադատէ թողուլ զօրէնս հայրենիս, և Մատաթիայ ոչ ընդդիմակայէ. պատերազմ զմեզ շուրջ պաշարէ, եւ Մակարէ ոչ փրկէ: Այժմ մարտք ի ներքուստ և արհաւիրք արտաքուստ. արհաւիրք ի հեթանոսաց և մարտք ի հերձուածողաց, և խորհրդականն չէ ի միջի, որ խրատէր և յարմարէր ի պատերազմ»:

2. Նույնը, III, 68, եջ 365, տող 9—366, տող 2՝

«Զի թագաւորք տիրեալք խիստք և չարա-

չարք, բեռինս բառնալով ծանունս և դժուարա-
կիրս, հրամանս տալով անտանելիս. վերակացուք
անհարթարարք, անողորմք, սիրելիք դաւաճա-
նեալք, և թշնամիք զօրացեալք. հաւատ վա-
ճառեալ ընդ սնոտի կենցաղոյս: Հէնք
եկեալ անհատք և յոլովից կողմանց-
գերփռումն տանց և յափշտակութիւն
ստացուածոց. կապումն գլխաւորաց և
բանտք յայտնեաց. յօտարութիւն վտարումն
ազատաց և անթիւ նեղութիւնք ռամկաց. առումն
քաղաքաց և քանդումն ամրոցաց. աւերումն աւա-
նաց և հրդեհումն շինուածոց. սովք անրաւք և
հիւանդութիւնք և մահք բազմօրինակք. աս-
տուած պաշտութիւն մոռացեալ, և ա-
կընկալութիւն դեհենիւ:

3. Նույնը, III, Եջ 365, տող 5—6՝

«Երկրի անբերութիւնք պտղոց և անաճելու-
թիւնք կենդանեաց, այլ և սասանմունք և
դղրդմունք»:

Խորենացու առաջին և յերկրորդ վկայություննե-
րից յերևում ե, վոր «Ողբ»-ը գրված ե այնպիսի մի
ժամանակաշրջանում, յերբ «Անտիոքոս»-ը բռնադա-
տում եր «Թողուլ զօրէնս հայրենիս» և «Մատաթիա»-ն
չեր դիմադրում, յերբ հավատը վաճառում եյին «ընդ
սնոտի կենցաղոյս» և «աստուածպաշտութիւն»-ը մո-
ռացված եր: Պատմագրի այս աղնարկները, ինչպես
տեսնում ենք, բռնի կրոնափոխության բացառիկ դեպ-
քերի մասին չեն, այլ կրոնական լայն հալածանքների
մասին: Ուշագրաւ ե նաև, վոր այդ հալածանքների
ժամանակ «Անտիոքոս»-ը հարկադրում եր թողնել հայ-
րենի կրօնը, իսկ «Մատաթիա»-ն չեր դիմադրում:

Կրօնական այս հալածանքները և բարոյալքումը չոր բոլորովին անհասկանալի յեն ութերորդ դարի յերկրորդ կիսում, իմաստ են ստանում, յերբ ի նկատի յենք առնում այն անցքերը, վոր տեղի եյին ունեցել Բուղայի արշավանքների ընթացքում և նրանից հետո:

Արաբական խալիֆայությունը, ինչպես հայտնի յե, կրօնական մոլեռանդ քաղաքականություն եր վարում Մուտավակկիլ ամիրապետի ժամանակ (847—861 թ.), վորին հայկական աղբյուրներն անվանում են նաև Զափըր: Հենց այս Զափրն է ըստ իս այն «Անտիոքոս»-ը, վորը ստիպել եր հայերին ուրանալ իրանց հավատը:

Հայտնի յե նույնպես, վոր «Իշխանաց իշխան» Բագարատը մյուս իշխանների հետ միասին վոչ միայն չեյին «ընդդիմակայել», այլ գրեթե բոլորն ընդունել և յին մահմետականություն իրանց կյանքը փրկելու համար: Հասկանալի յե, ուրեմն, թե ինչո՞ւ «Ողբ»-ի հեղինակն առանձնապես շեշտել է հավատի վաճառումն «ընդ սնոտի կենցաղոյս» և «սկնկալութիւն»-ը «գեհենի»:

Արաբական սիրապետության միայն այս շրջանին կարող են վերաբերվել նաև «Ողբ»-ի հետևյալ ակնարկները՝ «հէնք եկեալ անհատք և յոլովից կողմանց. գերփումն տանց... կապումն գլխաւորաց և բանտք յայտնեաց»:

Բուղայի արշավանքի ժամանակ, ինչպես դիտենք, ավերածության եյին մատնվել նախարարական Հայաստանի դրեթե բոլոր շրջանները. կալանավորվել ու Սամառա եյին ուղարկվել Հայաստանի «գլխաւոր»-ներն իրանց ընտանիքներով և բանտարկվել եյին նաև «Իշխանաց իշխան» Բագարատը և Սմբատ սպարապետը:

Վոր «Ողբ»-ի հեղինակն ի նկատի յե ունեցել այս «գերսիտա»-ները, «կապում»-ները և բանտարկությունները՝ այդ ալիլի քան հավանական է, վորովհետև նախարարների բանտարկություններն արաբական տիրապետության նախորդ շրջաններում ունեցել են յեղակի ու բացառիկ բնույթ:

«Ողբ»-ի մեջ հիշատակված են, ինչպես տեսանք, Հայաստանում տեղի ունեցած յերկրաշարժները՝ «սասամունք և դրդմունք»:

Ալիսյանը կարծում է, վոր այս շարժերը տեղի են ին ունեցել Հայաստանում ութերորդ դարի յերկրորդ կիսում: Իբրև ապացույց՝ նա մատնացույց է արել Սուտ-Տիոնիսիոս Տել-Մահրեցու հիշած յերկրաշարժը, վոր տեղի յեր ունեցել 755 թվին Միջագետքում (տես Chronique de Denys de Tell-Mahré, publ. par Chabot, Paris 1895, էջ 63), և Միքայել Ասորու հիշատակած յերկու մեծ յերկրաշարժը՝ 764/765 թվին Խորասանում և 768/769 թվին (տես Chronique de Michel le Syrien, éd. Chabot, II, էջ 524):

Ալիսյանի այս հիմնավորումը, անշուշտ, թույլ է, վորովհետև Խորասանում և Միջագետքում տեղի ունեցած յերկրաշարժները չեն կարող ապացույց ծառայել, վոր նման աղետներ պատահած պիտի լինեյին նաև Հայաստանում: Յեթե ճիշտ լիներ Ալիսյանի կարծիքը, ինձ թվում է, այդ մասին վորևե հիշատակություն կըլիներ Ղևոնդի պատմության մեջ, վորը ժամանակակից եր ութերորդ դարի յերկրորդ կիսի անցքերին:

Ահավոր և աղետալի շարժերը Հայաստանում հիշված են հայկական աղբյուրների մեջ վոչ թե այդ ժամանակներում, այլ իններորդ դարի յերկրորդ կիսում: Բուղայի՝

արշավանքից հետո: «Ողբ»-ի վերոհիշյալ ակնարկը վերաբերում է ըստ իս հենց այս շարժերին, վոր մատնանշված են հետևյալ վկայություններում:

ա. «Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ, Պատմութիւն Հայոց», Թիֆլիս 1912, եջ 133՝

«Բայց զայսու ժամանակաւ ահագին իմն շարժմանց եղելոց ի Դվին քաղաքի, բազում սասանութիւնս և փլուզմունս տանց և պարսպաց և ապարանից լինէր, և առհասարակ քանդումն և դլըրդումն առնոյր քաղաքն. այլ և մահ յոլովից մարդկան ի վերայ հասանէր. և այնպէս ահագին իմն լինէր վտանգ տագնապին՝ մինչև ոչ ոք մնալ ընդ յարկաւ, այլ ի հրապարակս և ի փողոցս ելեալ հաշեալ հառաչէին: Իսկ ցրտաշունչ սառնամանիք ձմեռայնւոյն առաւել ըրէր զլքացումն հեծութեան, զի յոլովք մսեալք և ծայրատեալք լինէին: Իսկ սուրբ հայրապետն Զաքարիա ուժգին աղօթիւք և պաղատանօք մշտնջենամուռնչ և աղերսալի աղօթս առ բարեգութն Աստուած մատուցանէր եւն»:

Համտե նաե Թովմա Արծրունի, III, ԻԲ, եջ 231՝ «եղև յամս Զաքարիայի Հայոց Կաթողիկոսի, յետ է ամի գերութեանն Հայոց»:

բ. «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական», Պետերբուրգ, 1885, II, 2, եջ 110՝

«Ի սորա աւուրս [Աշոտի որդւոյ Սմբատայ], յԾԺԲ Թուականին ի քառասնորդս պահոց ի փոքրիկ շարաթուն եղև շարժումն ահագին և զբազումս կոտորեաց և զգեղեցիկ շինուածս տապալեաց. և տեեաց մինչև ի ժամանակս երից ամսոց»:

Համտե «Սամուէլի քահանայի Անեցւոյ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ 1893, եջ 95:

գ. «Մովսեսի Կաղանկատուացւոյ, Պատմութիւն Աղուանից աշխարհի», Մոսկվա, 1860, III, 21, եջ 267:

«Եւ ի յերեք հարիւր յութ և տասն թուականին Հայոց (ամ տեառն 869) եղև անհնարին և հիացուցանող շարժն Դուռնայ, որ զամ մի ողջոյն դողացեալ խորասուզեաց յանդուռնդս անձինս իբրև երկոտասան բիւր մարդկան»:

Համտե Մխիթար Այրիվանեցի, «Պատմութիւն Հայոց», Մոսկվա 1860, եջ 55:

Այս վկայություններէց մենք տեսնում ենք, վոր իններորդ դարի յերրորդ քառորդը յեղել ե բացառիկ մի ժամանակաշրջան ահաւոր ու աղետալի շարժերի, վորոնք ալնարկված են Խորենացու «Ողբ»-ի մեջ:

Վոր մեր դիտողությունները և «Ողբ»-ի վերոհիշյալ հատվածների նոր մեկնությունն արժանի յեն ուշադրության՝ այդ կըտեսնենք ներքև նաև ուրիշ՝ ավելի պարզ ու համոզիչ ապացույցներից, վորոնք հաստատում են նույնպես, վոր Խորենացու պատմությունը գրված ե Բուդայի արշավանքից հետո:

18. «Ողբ»-ի մեջ հիշված «հովիւ»-ը, հավանորեն, Ովայեցի Հովհաննես Ե. կաթողիկոսն ե: — «Ողբ»-ի ընդարձակագույն մասը նվիրված ե, ինչպես հայանի յե, յեկեղեցու «հովուի» ու քահանայապետի մահվան, վորի «հայրենի վերակացութենէն» զրկվել եր վողբերգուն: Յեկեղեցու դրության և քահանայապետի մահվան մասին «Ողբ»-ի սկզբում հռետորական վոճով տրված են հետևյալ տեղեկությունները.

Նորենացի III, 68, Էջ 359 (Տփղիս 1913)՝

«Երանի՛ առաջնոյ և երկրորդի փոփոխմանն. զի էր ինչ ժամանակ հեռանալոյ փեսային և փեսաւիրին, և հարսնդ համրերեցեր՝ ողջախոհութեամբ զամուսնութիւն պահելով, որպէս ոմն նախ քան զմեզ իմաստասիրեաց: Դարձեալ մինչ երբեմն ոմն սեղեխաբարյան գաւառի՝ և հարսնդ ոչ աղտեղացար. թէպէտ և բռնութիւնն զփեսայն ի բաց վարեաց, որդւոցն բարձրացելոց անարգելով զծնողն, համայն և խորթոցն ըստ արժանեացն զօտար հայրն և զեկամուտ յօրայն. սակայն դու և ոչ յանմ զքեզ ամայի բոլորիցն ցուցեր. զանդրէն քոյոյն յուսալով դարձ հովուակցաւն, ոչ որպէս տայգերբ, այլ որպէս նոյնազաւակ զուգահարր, զմանկունսն փայփայեցեր: Իսկ յերրորդ հեռանալս ոչ է ակնկալութիւն դարձի, լուծեալ ի մարմնոյս ընկերաւն և գործակցաւն»:

Համարելով Նորենացու պատմութիւնը հինգերորդ դարի աշխատութիւն՝ բանասերները յեղել են սովորաբար այն կարծիքին, վոր այս հատվածը վերաբերվում է Սահակ-Մաշտոցին և հակաթոռ կաթողիկոսներին (տես Կ. Բասմաջյան, «Քննութիւն Ողբոյն Մովսիսի Նորենացւոյ», Հանդ. Ամս. 1891 և Նորայր Բյուզանգացի, «Քննասէր», Պրակ Բ., 1888):

Մենք տեսանք սակայն, վոր «Ողբ»-ի մեջ ակնարկված են, իրապես, իններորդ դարի քաղաքական դեպքերը և ընդհանուր բարոյալքումը Բուղայի արշավանքից հետո: Ուստի և անհավանական չի լինի յենթա-

դրել, վոր մեջ բերված հատվածում, վորը գրված է
իրը Սահակ-Մաշտոցի մահվան առիթով, կարող է նաև
ակնարկված լինել խորենացու ժամանակակից Ովայեցի
Հովհաննես Ն. կաթողիկոսը, վորը վախճանվել էր 855
թվին՝ Սմբատ սպարապետի Սամառա ուղարկվելուց
առաջ։

Նման ակնարկումները, ինչպես ցույց է տվել Մարկ-
վարտը, հատուկ ու սովորական մի ձև են խորենացու
պատմագրական շարադրության (տես «Die Genealogie
der Bagratiden», եջ 64, 65, 67)։

Վոր այս յենթադրությունը հավանական է, այդ
յերեւում է Հովհաննես Դրասխանակերտցու ուշագրավ
մի վկայությունից, վոր ուշադրության չէ առնվել։

«Ողբ»-ի վերոհիշյալ խոսքերը՝ «ո՞նք սեղեխաբար
յանդգնեալ յարձակեցաւ յանարատ առագաստդ... և
բռնութիւնն զփեսայն ի բաց վարեաց» ինչպես յերե-
վում է Դրասխանակերտցու վկայությունից, կարող են
իրրև ակնարկ վերաբերվել, իրոք, նաև «իշխանաց
իշխան» Բագարատին, վորի հատուկ կարգադրության
ու «բռնութեան» պատճառով Հովհաննես Ովայեցին
հրաժարվել էր կաթողիկոսական իր պաշտոնից։

Յեկեղեցու յերերուն ու խառնաշփոթ այս վիճակը
մանրամասն նկարագրված է Հովհաննես Դրասխանա-
կերտցու պատմության հետևյալ հատվածում՝

«Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ,
Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, եջ 115—117՝

«Իսկ զկնի նորա [Դաւթի] յաջորդէ զաթու
նորա Յովհաննէս ի գաւառէն Կոտայից ի գեղջէ
Ովայից։ Բայց յետ սկզբան ձեռնադրութեան նո-
րա իրրև անցին ամք ութ, քիւք ոմանք չարա-

րանք ի նոյն ինքն յընտանեաց տան կաթողի-
կոսարանին լեզուօք նենգաւորօք բանս ապիրատս
բամբասանաց ի վերայ յօղէին սրբոյ հայրապե-
տին Յովհաննու... Եւ վասն զի ի ժամանակին
Բագարատ Բագրատունի հրամանատար և իշխան
իշխանացս Հայոց գտանէր առ նմա, ապա դիմեալ
երթեալ չուէին չանարդագուրդ նանրալեզու հայ-
հոյիչք առնն Աստուծոյ՝ զերկրաւ զլեզուս իւ-
րեանց ածեալ և ղօղանջեալ առաջի նորա: Իսկ
նորա ի սատանայական պարթոխաթափ լեզուացն
հրապուրեալ՝ և ախորժակս յիւր լսելիսն զպիղծ
հայհոյութիւնսն ամբարեալ՝ զրէ հրովարտակ առ
ամենեան, ի բաց կալ յընդունելոյ զհօտապետն..
Ի մտի եղեալ այլ ևս կացուցանել հայրապետ ըստ
իւրումն ձեռներիցութեան: Իսկ մեծի առնն Յով-
հաննու իմացեալ զլլկանս սատանայականս իշ-
խանին և հոգեւոր հատողական սրով զնա պաշար-
մամբ կապեալ, ինքն յարուցեալ գնաց ի րանա-
կետղ սրբոյն Սահակայ ի վանս այրից ղօղեալ և
լռիկ իմն անդ մշտնջենաւոր աղօթից պարապեալ:
Ջայն ապա իմացեալ սպարապետին մեծի Սմբա-
տայ և Գրիգորի Սիւնեաց տեառնն և այլ ևս
նախարարացն Հայոց, և համագունդ ի միասին
եկեալք և ժողով եպիսկոպոսաց արարեալ և ստու-
գագէտ իմացուածիւ իմացեալ զի նանիր իժա-
թոյն շրթանց չար հայհոյչացն ստութիւն՝ հաս-
ատեն դարձեալ յաթոռն սրբութեան զայրն
Աստուծոյ: Իսկ ապա այնուհետե եկեղեցիք Քրիս-
տոսի, որ երբեմն խրթնացեալն էր ի վա-
րատմանէ փեսային՝ դարձեալ յինքն

զ փ ե ս ա յ ն ա ռ ա գ ա ս տ ա լ ո Ր նորոգապէս պայ-
ծառանայր: Բայց իշխանն Բագարատ ևս առաւել
վասն այնորիկ զշարեալ լինէր, զի առանց կա-
մաց նորա եղև հայրապետին հաստատութիւն և
ուր ոչ ընկալեալ զնա, խնդրէր ժամ դիպող՝ զայլ
փոխանակ նորա կացուցանել:

Ամենից ուշագրաւը և կարևորն այս վկայության
մեջ այն է, վոր Հովհաննես Դրասխանակերտցին, ինչ-
պես յերևում է վերև ընդգծված բառերից, «Ողբ»-ի
խոսքերով հիշում է «խրթնացեալն ի վարատմանէ փե-
սային» յեկեղեցին և այդ «փեսայի» մասին իր վկա-
յությունը վերագրում պարզապես Ովայեցի Հովհաննես
ն. Կաթողիկոսին:

Այս զուգադիպումն ըստ իս պատահական չե, այլ
հավանական մի ապացույց է, վոր Խորենացու «Ողբ»-ի
մեջ ակնարկված են վոչ միայն քաղաքական, այլ և
յեկեղեցական այն իրական անցքերը, վոր տեղի եյին
ունեցել Հայաստանում իններորդ դարում Խորենացու
հենց ժամանակ:

Ավելի քան հավանական է թվում ինձ, բացի այդ,
վոր Հովհաննես Դրասխանակերտցին Խորենացու պատ-
մությունը, նաև «Ողբ»-ը, համարել է, ըստ յերևույ-
թին, վոչ թե հինգերորդ, այլ իններորդ դարի աշխա-
տություն՝ զրված Բուդայի արշավանքից հետո:

Վոր նոր այս կռահումը հիմնավոր է՝ այդ յերևում
է ըստ իս Դրասխանակերտցու պատմության այն վկա-
յություններից, վորոնք վերաբերվում են Խորենացու
պատմության:

Ինչպես հայտնի յի, տասներորդ և տասնութներորդ
դարի հայ պատմագիրները Խորենացուն յենթադրել են

Սահակ-Մաշտոցի աշակերտ և առանձին պատկառանքով են հիշել նրա հռչակավոր պատմությունը: Նրանց յերկերում խորենացին անվանվում ե՛ր «մեծ քերթողն Մովսէս» (Թովմա Արծրունի, 1887, I, Բ., եջ 24), «տիեզերահռչակեալ վարդապետ և քերթող» (Թովմա Արծր., I, Ժ, եջ 58), «մեծ վարդապետն Մովսէս տիեզերահռչակեալ քերթողն» (Թովմա Արծր., I, ԺԱ, եջ 75), «քերթողահայրն Մովսէս» (Մովսես Կաղանկատվացի, 1860, I, Ը, եջ 10), «մեծն Մովսէս, հանգոյն Եւսեբեայ, որ քերթողացն անուանի հայր» (Ասողիկ, 1885, I, Ա, եջ 7), «մեծ պատմագիր Մովսէս Տարօնեցի» (Ասողիկ I, Ե, եջ 53), «մեծ վարդապետն Մովսէս քերթողահայրն» (Ասողիկ II, Ա, եջ 77) ևն:

Հետաքրքիր և սակայն և ուշադրության արժանի, վոր խորենացու հանդեպ այս պատկառանքն ու ակնածությունը բացակայում են Դրասխանակերտցու մոտ: Այս պատմագիրն իր պատմության առաջին գլուխներում, վոր քաղված են, գլխավորապես, խորենացու պատմությունից, կարևոր չեն համարել անգամ հիշելու «տիեզերահռչակեալ» քերթողահոր անունը, այլ անորոշ կերպով ակնարկել և իր աղբյուրը հետևյալ հատվածներում.

ա. «Սորա [Արամայիսի] արիական քաջամասնութեան հանդէսք բաւական քեզ յառաջնոցն քան զիս մատենագրացն պատմի» (Թիֆլիս 1912, եջ 16).

բ. «Իսկ ես յայսմհետէ սակաւուք ինչ զթագաւորելն Վաղարշակայ ի վերա մեր շարայարեցից և որք յետ նորա ի նորին սերմանէ փոխանորդեցին զթագաւորութիւն, որք և Արշակունիք

անուանեցան. և զաւելորդն՝ որ յայլոց ոմանց
եղև պատմեալ ի նոսա հրաւիրեցից գիտել,
թէ պիտոյ է քեզ» (Թիֆլիս 1912, էջ 23):

Խորենացու պատմությունը ծայրե ի ծայր ոգտա-
գործելուց հետո՝ Դրասխանակերտցին միայն անցո
ղակի կերպով հիշում ե նրա անունը՝ առանց նրան
անվանելու «քերթողահայր» կամ «մեծ պատմիչ»:

«Այլ երկոցունց սոցա [Խոսրովի և Արշակի]
զվարս և զկարգս և զարութիւնս և զանարու-
թիւնս և զպատերաղմունս՝ թէ պիտոյ է քեզ,—
ասում ե Դրասխանակերտցին,— բովանդակաբար
ցուցցէ քեզ Պատմութիւնն Մովսեսի Խո-
րենացւոյն» (Թիֆլիս 1912, էջ 52—53):

Թե ինչո՞ւ վերահիշյալ պատմիչներից Հովհաննես
Կաթողիկոսին են միայն հայտնի յեղել Խորենացու
պատմության ճիշտ ժամանակը և նրա «Ողբ»-ի ակ-
նարկները՝ այդ ևս հասկանալի չե:

Հովհաննես Դրասխանակերտցին ևս, ինչպես և Մով-
սես Խորենացին, Շիրակի Բագրատունիների պատմա-
գիր եր և մոտ շփում եր ունեցել Բագրատունի ար-
քունիքի հետ: Լինելով ժամանակով Խորենացուն խիստ
մոտ՝ նա սնվել ու դաստիարակվել եր մեկնույն մի-
ջավայրում և ապրել իններորդ դարի յերկրորդ կի-
սում, յերբ դեռ նոր եր հրապարակվել Խորենացու
պատմությունը:

Միանգամայն բնական ե ըստ իս, վոր Խորենացու
ժամանակն ավելի շուտ նրան կարող եր հայտնի լի-
նել, քան Թովմա Արծրունուն, Մովսես Կաղանկատ-
վացուն և Ասողիկին:

Իմ այս դիտողությունների դեմ կրկինեն, անշուշտ

առարկուեթյուններ, սակայն, թվում է ինձ, վոր այդ առարկուեթյունները չեն կարողանալու խախտել ընդհանուր իմ յեղրակացուեթյունը, վորովհետև Խորենացու ժամանակի վորոշման համար կան նաև ուրիշ հենարաններ, վորոնք նեցուկ են ծառայելու վերոհիշյալ կարևոր յենթադրության:

19. Խորենացու հունասիրությունը հասկանալի յետաքրքիր օրինակներով ցուցանում է այս շրջանում: — Մովսես Խորենացին՝ վոր իր պատմությունը գրել է Բուզայի արշավանքից և Հովհաննես Ովայեցու մահվանից հետո, ինչպես կրտսերները, յեղել է այդ շրջանում ականավոր քերթող և հեղինակավոր հետևորդ հունաբան դպրոցի:

Նա համակրող է հունական գիտության և քաղաքակրթության և նրա պատմության մեջ առանձնապես շեշտված է նրա հունասիրությունը: Նա իր պատմության հենց սկզբում ասում է, վոր ոգտվելու յե, դիխավորապես, հույն պատմագիրներին և անտես է առնելու պարսկական ու քաղդեական ազգյուրները (տես I, 2, եջ 7): Նույն այս դիխում ճշգրտոր իսկ յոյններին նա անվանում է «մայր կամ դայեակ իմաստից» (I, 2, եջ 9): Պարսից առաջապետները Բյուրասպ Աթահակի մասին համարում է «վիժուն, անճոռնի և սուտ»՝ «անմիտ և անհանճար բանից յարմարանք» (աես I, հավելված Ա, եջ 89), իսկ հունաց առաջապետները՝ «պերճ եւ ողորկ», «հանդերձ պատճառաւ»՝ «որք զճշմարտութիւն իրաց այլաբանաբար յինքեանս ունին թաքուցեալ» (եջ 90):

Խորենացու այս հունասիրությունը ցայտուն կերպով յերևում է և ուրիշ նրա վկայություններում: Իսկ այս փաստը, ինչպես շատ ճիշտ նկատել են բանա-

սերները, ունի վորոշ նշանակութիւն և կարող է կըր-
վան ծառայել Խորենացու ժամանակի վորոշման:

Այդ մասին ունի, որինակ, ակադեմիկոս Մառն իր
«Арабское извлечение из сирийской хроники Мар-
наса» ուսումնասիրութեան մեջ (տես ЗВО, XIV, 1902,
էջ 81) հետևյալ ուղիղ դիտողութիւնը.

«Խորենացու ժամանակի վորոշման համար —
ասում է նա — լավագույն հիմքերն են նախ՝ նրա
պատմութեան ընդհանուր վոգին, վոր պարզ ազ-
գային է, յերկրորդ՝ վոր հեղինակը խորապես
համակրում է հունական կրթութիւնը, և յեր-
րորդ՝ վոր նա ընտրում է ասորական ծագում և
ասորական մշակում ունեցող պատմական աղ-
բյուրներ, վորոնք մեծ չափով հիմք են կազմում
նրա պատմութեան: Այդպիսի յերկը, հասկանա-
լի յե, չէ կարող վերաբերվել հինգերորդ դարին,
վոր հայոց քրիստոնեական գրականութեան առա-
ջին դարն էր, այլ վերագրվելու յե ավելի ուշ
ժամանակի, յերբ միակ ասորական ուղղութիւնը
հին ավանդութեան կարգն էր անցել, իսկ նրան
փոխարինող կուլտուրական հելլենասիրութիւնը
կարողացել էր գրականութեան մեջ առաջ բերել
ազգային ուղղութիւնն:

Ակադեմիկոս Մառի ընդհանուր այս դիտողութիւն-
նը, ինչպես տեսնում ենք, կատարելապես հաստատ-
վում է մեր այս ուսումնասիրութեամբ:

Խորենացու պատմութեան թե ազգային վոգին և
թե նրա հունաբան ու հունասեր ուղղութիւնը միան-
գամայն բնական են ու հասկանալի Հայաստանի վերա-
կենդանացման հետագա այս շրջանում:

Խորենացու հունասիրությունը, վոր այնքան վառ կերպով նկատվում ե նրա պատմության մեջ, հետևանք ե ըստ իս իշխող դասի ու Բագրատունիների ընդհանուր մտայնության և, հատկապես, այն քաղաքական ըյուզանդասեր հակումների, վոր սկսել եյին ուժեղանալ 775 թվի նախարարական ապստամբությունից և, մանավանդ, Բուղայի արշավանքից հետո:

Խալիֆայության հարձակողական քաղաքականությունը հայ իշխանությունների հանդեպ և մեծ աղետներն ու ավերածությունները, վորոնց յենթարկվել եր Հայաստանը 775 և 852 — 855 թվականներին, ծայրաստիճան հուզելու և գրգռելու եյին, ընականաբար, հայ նախարարներին ու, մասնավորապես, Բագրատունիներին՝ արաբական խալիֆայության դեմ: Հալածված ու լքված հայ ազնվականությունը, աեղահանված մասամբ իր յերկրից, ապաստան եր գտնում միշտ կամ հարևան Բյուզանդիայում և կամ կայսրության սահմանամերձ՝ Հայաստանի արևմտյան լեռնային շրջաններում: Բյուզանդական կայսրությունը, վոր նորից սկսել եր զորեղանալ իններորդ դարում, քաղաքական նկատառումներով կարևոր եր համարում նախարարական Հայաստանի պաշտպանությունը. և վարում եր նախարարական իշխանությունների հանդեպ բարեհաճ ու խնամատար քաղաքականություն:

Հենց այս իններորդ դարումն ե, վոր կայսրությունը սերտ ու բարեկամական հարաբերություններ ուներ Բագրատունիների և Արծրունիների հետ և առատ կերպով բաշխում եր նրանց զանազան բարձր տիտղոսներ և անգամ կալվածներ:

Այդ մասին ուշագրավ են, որինակ, նայ պատմագիրներին հետևյալ վկայութիւնները.

1. Ղևոնդ, գլ. 42, եջ 168—169 (Պետերբ. 1887)՝

«Իսկ ապա իբրև այնպէս թափուրք ի ստացուածոց ֆնային, մերկք և բոկք և սովամահք, և ոչ գտանէին ապրուստ անձանց՝ դէմ եղեալ տարադէմ գնացին փախստեայ յաշխարհն Յունաց. զորոց ասեն լինել զթիւ մարդկանն աւելի քան ԺԲԽ արանց հանդերձ կանամբք և մանկտեաւ. որոց առաջնորդք Շապուհ ի տոհմէ Ամատունեաց և Համամ որդի նորա և այլք ի նախարարաց Հայոց և նոցին հեծելոց: Եւ իբրև անցին ընդ գետն [Ակամսիս]՝ վաղվաղակի ազդեցեալ արքային Յունաց Կոստանդինի: Եւ կոչեցեալ զնոսա առ ինքն՝ տայր պատիւ նախարարացն և նոցին հեծելոցն. և զայլ խառնիճաղանճսն բնակեցուցանէր ի բարւոք և յարգաւանդ երկրի»:

2. Ասողիկ, II, գլ. 6, եջ 144 (Պետերբ. 1885)՝

«Իսկ Թէովփիլոս [829 — 842 թ.] ... տուեալ զհիւպատաւորութեան պատիւն, այսինքն՝ ապուհիւպատ պատրկութիւն՝ Աշոտոյ որդւոյ Շապհոյ և թողու ի Սպեր գաւառի»:

3. Թովմա Արծրունի, III, գլ. 13, եջ 194 (Պետերբ. 1887)՝

«Իսկ Թագաւորն [Միքայէլ, 842—867 թ.] գրէ առ զօրավարն Թերևս կարասցէ հաւանեցուցանել զԳուրգէն՝ երթալ ի Թագաւորական քաղաքն առ կայսր, և մեծաց պարգևաց և պատուի և գահու յառաջածգութեամբ ընկալցի պարգև ի Թագաւորէն»:

4. Թովմա Արժրունի, II), գլ. 14, եջ 203՝

«Եւ ի հասանելն նորա [Գուրգէնի] ի Թէոդոսի քաղաքն ի Կարին դաւառ՝ եհաս լուր նորա առ կայսր Միքայէլ Թագաւոր Յունաց. և փուլ Թացոյց վասն նորա զի անյապաղ առ նա հասցէ, և ի մեծ պատիւս հիւպատուութեան հասուացէ զնա, և խաչանշան դրօշիւք ճոխասցին»:

5. «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ 1862, եջ 77՝

«Յայնմ ժամանակի աղմկեալ Իսմայելի ընդ միմեանս, հանգչէր երկիրս Հայոց, և սկսան զօրանալ իշխանքն մեր յիւրաքանչիւր իւր տեղիս: Եւ տայր իշխանն Իսմայելի Աշոտի որդւոյ Ատրնեբսեհի որդւոյ Վասակայ, որդւոյ Աշոտոյ Հայոց իշխանի՝ զերկիրն Վրաց. որոյ երթեալ հնազանդեցուցանէ ինքեան. և կայսրն [Լևոն V, 813—820 թ.] առաքէ նմա պատիւ կիւրապաղատութեան»:

Թե այս և թե նման ուրիշ փաստերը ցույց են տալիս, Վոր իննբորդ դարում և, գլխավորապես, Բուղայի արշավանքից հետո՝ նախարարական Հայաստանի և Բագրատունիների հարաբերությունները Բյուզանդիայի հետ մտերիմ ելին ու բարեկամական: Մերձեցումը կայսրութեան հետ առանձին կարևորություն էր ստանում, հատկապես այս շրջանում, Վորովհետև Բյուզանդիայի քաղաքական աջակցությունն ամենազորեղ գործոններից մեկն էր նախարարական Հայաստանի ինքնապաշտպանութեան:

Շատ բնական է, Վոր հայ ազնվականութեան քաղաքական հունասեր տրամադրություններն ունենալու

եյին իրենց արտահայտութիւնը նաև հայոց մատենադրութեան մեջ: Ուստի և իններորդ դարի հենց յերկրորդ կիսում միանգամայն հասկանալի յեն խորենացու հունասիրութիւնը և նրա հարգանքն ու սերը դեպի հունական կրթութիւնն ու ուսումը:

Բացի հունասիրութիւնից խորենացու պատմութեան մեջ, ինչպես մատնացույց են արել բանասերները, աչքի յե ընկնում և այն, վոր նրա մեջ վոչ մի հետք և վոչ մի ակնարկ չկա կրոնական-դավանական այն տարածայնութիւնների ու վեճերի մասին, վորոնք մշտական առիթ եյին հակաքաղկեդոնական հայերի ու քաղկեդոնական հույների մոլեռանդ ու անհաշտ թշնամութեան: Կրոնական նման խնդիրների նկատմամբ խորենացու լուռ և մունջ լինելը հասկանալի յե դարձյալ նույն այս ժամանակաշրջանում:

Վոր քաղաքական հունասեր այս շրջանում կրոնական հակամարտութիւնը և ատելութիւնը պետք ե բավականաչափ մեղմացած ու զսպված լինեյին, այդ ինքն ըստ ինքեյան հասկանալի յե:

Ուշագրավ ե առանձնապես, վոր հենց այս ժամանակները, Բուլղայի արշավանքից հետո, հատուկ բանակցութիւններ եյին սկսվել, վորոնց նպատակն եր վերականգնել Հունաց և Հայոց մեջ կրոնական նախկին միութիւնը: Այս բանակցութիւնները հայտնի յեն մեզ վոչ միայն բյուզանդական և հայկական մատենադրական աղբյուրներից, այլ և Փոտ պատրիարքի և «Իշխանաց Իշխան» Աշոտի միջև փոխանակված բարեկամական այն թղթակցութիւնից, վոր պահպանվել ե «Գիրք Թղթոց»-ում (Թիֆլիս 1901, եջ 279 — 282՝ «Պատճէն թղթոյն հայրապետին Կոստանդնուպալսի

Փոտայ առ Աշոտ իշխանաց իշխան», նաև եջ 283—294՝ «Պատասխանի թղթոյն Փոտայ, գրեալ Սահակայ Հայոց վարդապետի հրամանաւ Աշոտայ Հայոց իշխանաց իշխանին»)։ Հայտնի յե նույնպես, վոր հենց այս բանակցություններէ ժամանակ՝ իններորդ դարի վաթսուական թվականներին՝ տեղի յեր ունեցել Շիրակականի ժողովը, վորը գումարվել եր Աշոտի հրամանով և քննության եր առել բաժանված յեկեղեցիների միացման խնդիրը։

Միանգամայն պարզ և հասկանալի յե, ուրեմն, թե ինչո՞ւ խորենացու պատմությունը, վոր գրված ե Բուղայի արշավանքից հետո, չունի վորևե ակնարկ գաւանարանական վեճերի մասին։

20. Խորենացու ժամանակ Հայաստանում նշանավոր կենսոգնավայր ե յեղել «Շիրակաբան տաճն»-ը, իսկ կարեւոր ուսումնավայր՝ Գեղարքունի գավառը։ — Խորենացին իր «Աշխարհացոյց»-ի մեջ հիշում ե «Շիրակաշատ աւան»-ը հետևյալ հատվածում (Տ. եջ 34)՝

«յորոց [ի Շիրակայ և ի Վանանդայ] եկեալ գետն Ախուրէն՝ հանդերձ Մեծագետոյն, անցանելով յելից կուսէ Մաւրիկոպաւսի, այսինքն Շիրակաշատ աւանի եւ Մրենոյ եւ Երուանդաշատ քաղաքի, իջանէ յԵրասխա։

Այս վկայության մեջ ուշագրաւ ե այն, վոր «Շիրակաշատ աւան»-ը կոչված ե «Մաւրիկոպաւսի»։ Շատ պարզ ե, ուրեմն, վոր այդ ավանը Խորենացու ժամանակ յեղել ե նշանավոր կենարոնավայր։ Իսկ այս կարևոր մի ակնարկ ե դարձյալ, վոր Խորենացու թե «Աշխարհացոյց»-ը և թե պատմությունը գրված են Բագրատունիների իշխանության այն շրջանում, յերբ «Երազդաւորք-Շիրակաւան»-ը գահանիստ կենտրոն եր դառել Շիրակի Բագրատունիների։

Ինչպես հայտնի յե, 775 թվի նախարարական ապստամբութիւնից հետո Աշոտ Մսակերն իր յեղըոր Շապուհի հետ կարողացել եյին մասամբ դրամով և մասամբ զենքով տիրանալ Տայքի, Արշարունիքի, Շիրակի և Աշոցքի:

Իններորդ դարի սկզբներին, Աշոտ Մսակերի ժամանակ, նոր գրավված այս յերկրում Բագրատունիներ յայս ճյուղի աթոռանիստ կենտրոնն եր Բագարանը, իսկ Սմբատ սպարապետի և նրա վորդու «Իշխանաց իշխան» Աշոտի ժամանակ, գլխավորապես, «Երազգաւորք-Շիրակաւան»-ը:

Կիրակոս Գանձակեցու վկայությամբ (Թիֆլիս 1910, եջ 72)՝ Սմբատ սպարապետը, վորին նա անվանում և Աբլապաս, շինէ զսուրբ քաւարանն մեծապայծառ զարդու յԵրազգաւորս, որ արդ՝ Շիրակաւանն կոչի»: Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում և (Թիֆլիս 1912, եջ 127), վոր այս Սմբատ սպարապետը «հրամայեալ ժողով եպիսկոպոսաց լինել ի քաղաքագիւղն Երազդաւորս՝ ձեռնադրեն ի հայրապետութիւն զՋաքարիայ ի Կոտայս գաւառէ ի գեղջէ Ջագայ»: Նույն այս կենտրոնում, Վարդան պատմիչի ասելով (Վենետիկ 1862, եջ 82), իններորդ դարի վաթսուհակն թվականների սկզբներին, «Իշխանաց իշխան» Աշոտի ժամանակ, նորից ժողով եր գումարվել, վորը քննելու յեր Փոտ պատրիարքի թուղթը ու հույն և հայ յեկեղեցիների կրօնա-դավանական միության խնդիրը:

Ուշագրավ և նաև, վոր Հովհաննես Դրասխանակերտցին «Երազգաւորք-Շիրակաւանն» անվանում և «քաղաքագիւղն մեծ» (եջ 183), «սեպհական կալուած» Բագրատունիների տերության (եջ 144 և 218), և հի-

շում և «Երազգաւորքում» «արքունական ապարանք-ները» (եջ 197 և 207):

Դժվար չէ, ուրեմն, կռահել, թե ինչո՞ւ Խորենացին Արտաշատի ու Յերվանդաշատի նմանությամբ «Երազգաւորք-Շիրակաւանն» անվանում և «Շիրակաշատ աւան» և «Մաւրիկոպաւիս»:

Առանձնապէս հետաքրքիր և Խորենացու «Աշխարհացոյց»-ի մեջ «Երազգաւորք-Շիրակաւան»-ի «Մաւրիկոպաւիս» անունը, վոր ուշադրության չե առնված բանասիրական ուղղութեամբ յուններում:

Վոր «Շիրակաշատ աւան»-ը կարող եր Մաւրիկիոս կայսեր անունով կոչված լինել «Մաւրիկոպաւիս», այդ միանգամայն հնարավոր և և հավանական: «Աշխարհացոյց»-ի վկայութիւնից, վորը դժվար և շինովի և անհիմն համարել, կարելի չե ըստ իս կռահել, վոր այդ ամանը յեղել և կենտրոնավայր նաև ձեցերորդ դարի վերջերում և յոթերորդ դարի սկզբներում Մաւրիկիոս կայսեր ժամանակ (582—602 թ.):

Հենց այս ժամանակաշրջանում «Շիրակաւան»-ը հիշատակված և Սեբեոսի մոտ հետևյալ վկայութիւններում.

1. «Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլին», Թիֆլիս 1913, գլ. Բ, ևջ 53՝

«Ապա եկն ասպետն մեծ Պարթեն և Պահլաւն, և արար կռիւ մի ի Շիրակ աւանին և յաղթեաց».

2. Նույնը, գլ. ԻԲ, եջ 116—117՝

«Եւ եղև ի գալ ամին միւսոյ մինչդեռ արքայ Խոսրով մարտնչէր ընդ Դարա քաղաքի, դամա-րեցաւ այլ զաւր Պարսից ի կողմանս Հայոց, և Դատոյեան զաւրագլուխ նոցա: Եւ զաւրն Յունաց

գումարեցան ի դաշտն Շիրակ և ի գեւղն՝ որ կոչի Շիրակաւան»:

Այս վկայություններէց կարևոր ե յերկրորդը, վորից յերևում ե, վոր 604 605 թվին «Շիրակաւան»-ը յեղել ե կայան ու բանակատեղի հունական զորքերի: Ըստ յերևութիւն, 591 թվի Հայաստանի բաժանումից հետո, «Շիրակաւան»-ը համարվել ե Հունահայաստանի գլխավոր կենտրոնավայրերից մեկը, և հենց այս ժամանակաշրջանում նա անվանվել ե, հավանորեն, «Մաւրիկոպոլիս»:

Իբրև նշանավոր ուսումնավայր ցույց ե տրված Խորենացու պատմության մեջ Դեղարքունի գավառը հետևյալ հատվածում.

Խորենացի II, Ժ, եջ 120 (Տփղիս 1913)՝

«Եւ վկայ քեզ ի մօտոյ երաշխաւորեսցէ նկլէսիաստէ գիրք Եւսերի Կեսարացոյ, զոր ետ թարգմանել երանելի վարդապետն մեր Մաշտոց ի հայ լեզու: Խնդիր արասցես ի Դեղարքունի, ի գաւառին Սիւնեաց, և գտցես յառաջին հագներգութեանն յերեքտասներորդ թուին, զի վկայէ յնդեսիայ դիւանին լինել ամենայն գործոց առաջնոց թագաւորացն մերոց մինչև ցԱբգար, և զկնի Աբգարու մինչև ցՆրուանդ»:

Հիմնվելով այս վկայության վրա՝ Ակինյանը յենթադրում ե, վոր Խորենացին Նվսերիոսի յեկեղեցական պատմութիւնը կարդացել ե Դեղարքունիքում, և կարծում ե, վոր նրա դաստիարակության առաջին շրջանը պետք ե յենթադրել այս կողմերը, հավանորեն, «ի Մաքենիս» (տես ՃՄատենագրական Հետազոտութիւններ», հատ. Գ, եջ 185, ծանոթ. 3):

Ակիրնյանի այս յենթադրությունը, վոր ինձ ևս թվում է հավանական, խիստ կարևոր է դարձյալ խորենացու ժամանակի վորոշման համար:

Մաքենացոց վանքը, ինչպես հայտնի յե Մովսես Կաղանկատվացու վկայությունից, այրված ու վռչնշացված է յեղել Բաբելի արշավանքի ժամանակ 827 թվին:

«Եւ անտի ի միւս տարին — վկայում է Կաղանկատվացին — էանց Բարան ի գաւառն Գեղարքունի և էարկ ի սուր զբնակիչսն ոգիս իբրև տասն և հինգ հազարս. և զմեծ Մաքենացւոց մայրաքաղաքն այրեաց, մնաց միայն ջրաղացն և այլ ոչ ինչ. և էր թիւն Հայոց երկուհարիւր եօթանասուն և վեց» (III, գլ. Ի, եջ 263, Մոսկվա 1860).

Համտե նաև Ստեփ. Որբել., Թիֆլիս 1911, ԼԳ, եջ 159:

Մաքենիսն այնուհետև վերակառուցվել է Գեղարքունի գավառի իշխան Գրիգոր Ա. Սուփանի ժամանակ († 852):

«Եւ տեղին անբնակ մնայր, — հաղորդում է Որբելյանը, — ապա յաւուրս Գրիգորի՝ Սիւնեաց տեառն, որ Սուփան կոչեցաւ, վերստին նորոգեցաւ և շինեցաւ մեծ եկեղեցին. և պայծառացոյց առաւել քան զառաւել» (տես Ստեփ. Որբել., Թիֆլիս 1911, ԼԳ, եջ 159):

Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ՝ «ի մեծ ուխտի կրօնաւորական կայանին Մաքենացւոց» վախճանվել ու թաղվել է Հովհաննես Ովայեցի կաթողիկոսը (834 — 855 թ.):

«Աստանօր ապա — վկայում ե Գրասխանա-
կերտցին — մեծ հայրապետն Յովհաննէս, վասն
դի շրջէր ընդ վիճակեալ կողմանս գաւառին Գե-
ղարքունոյ, լցեալ զկէտ կենաց իւրոց՝ վախճա-
նի ի մեծ ուխտի կրօնաւորական կայանին Մա-
քենացոց, եւ ի նմին ուխտի սրբոյ ի հանգիստ
զնա փոխէին» (Թիֆլիս 1912, եջ 126 — 127)։

Վոր Մաքենացոց այս «կրօնաւորական կայան»-ը
յեղել ե իններորդ դարում նշանավոր ուսումնավայր ե
ունեցել ե, անշուշտ, մեծ գրադարան՝ այդ յերևում ե Ստե-
փանոս Որբելյանի մի այլ վկայութիւնից, վորի մեջ
նա հաղորդում ե, վոր այս վանքում ստացել եր իր
ուսումը Մաշտոց կաթողիկոսը (898-899 թ.)։

«Յայսմ ժամանակի — ասում ե Որբելյանը —
պայծառանայր երանելին Մաշտոց ի Սեան կրդ-
դին մեծահանդէս առաքինութեամբ. որ էր որդի
աշխարհիկ երիցու մի Գրիգոր անուն Նղիվար-
դեցի. ե եկեալ էր ի Սոթք գաւառ ե պանդխտա-
նայր անդ. որ ե ետ զՄաշտոց յաշակերտութիւն
սուրբ հօրն Մաքենոցաց Ստեփաննոսի» (լէ, եջ
173)։

Այս ցուցմունքները, ինչպես տեսնում ենք, հաճա-
նական կովաններ են, վոր Ոորենացու վերոհիշյալ
վկայության մեջ ակնարկված ե Մաքենացոց վանքը,
վորը գտնվում եր Գեղարքունի գավառում ե կրօնա-
կան նշանավոր կենտրոն եր իններորդ դարում։

Արդ՝ պատահական ե միթե, վոր Ոորենացու «Աշ-
խարհացոյց»-ի ու պատմության մեջ մատնանշված են
իբրեւ քաղաքական ու յեկեղեցական կարևոր վայրեր
«Մաւրիկոպաւլիս-Շիրակաշատ»-ը ե Գեղարքունի գա-

վառու, հավաճորեն, Մաքենիսը, վորոնք կենտրոն-
ներ եյին, իրոք, Շիրակի Բագրատունիների զորեղաց-
ման ժամանակ:

Ինձ թվում է, վոր այդ վոչ միայն պատահական
չէ, այլ, ընդհակառակը, ուշագրավ մի նոր ապացույց
է, վոր Խորենացու ժամանակը դրվելու յե Բագրատու-
նիների իշխանության նույն այս շրջանում:

21. Խորենացիին, հավանորեն, այն «Մովսէս քերթող»-ն
է, վորք Ջափարիա կաթողիկոսի հետ միասին գրել է «Ի
փոխումն Աստուածամաւուրն եւ պատկերի նորին» նաոք: —
Յերուսաղեմի մատենադարանի թիվ 413 ձեռագրում
գտնվում է «Ջաքարիայ կաթողիկոսի և Մովսեսի քեր-
թողի ի փոխումն Աստուածամաւուրն և պատկերի նո-
րին» ճառը (տես Գ. Ջարբանալյան, «Հայկական հին
դպրութեան պատմութիւն», Վենետիկ 1897, էջ 503):
Այս «Մովսէս քերթող»-ը, վորը Ջաքարիա կաթողի-
կոսի (855 — 875 թ.) հետ միասին գրել եր այդ ճառը,
հավանորեն, հենց հուշակավոր «քերթողահայր» Մովսես
Խորենացին է, վորի պատմությունը հորինված է, ինչ-
պես վերև տեսանք, նույն այս ժամանակաշրջանում՝
Բուղայի արշավանքից հետո:

Հետաքրքիր է ու հատուկ ուշադրության արժանի,
վոր «վասն փոխման Աստուածածնի» մի գրվածք հայտ-
նի յե նաև Խորենացու անունով և տպագրված է Խո-
րենացուն վերագրված «Մատենադրութեանց» մեջ (Վե-
նետիկ 1843, էջ 283—296) հետևյալ վերնագրով՝ «Պա-
տասխանի թղթոյն Սահակայ, յորում և բանք մարգա-
րէականք եւ վասն փոխման Աստուածածնին թէ որպէս
եղև կամ որպէս շնորհեցաւ անարատ տիպ պատկերին
ի փայտն եւ թէ յոյր ձեռն եւ զինչ եղև պատճառք
խնդրոյն կամ թէ յումմէ բերաւ ի Հայս»:

Խորենացու նույն այս յերկասիրոպէյան մասին, ինչպէս հաղորդում է Զարբանալյանը («Հայկական հին դպրութեան պատմութիւն», եջ 384), տասնութներորդ դարի մի գրչագիր աալիս է հետևյալ կարևոր տեղեկությունը՝

«Ձայս ցանկալի պատմութիւնս՝ բազում ըդձիւ և ցանկալի յուզմամբ գտեալ մեծ հռետորն Մովսէս՝ որ կոչի Խորենացի՝ գրեաց ըստուգիւ հաւաստեաւ. և քանզի էր աղօտացեալ յաւազաց մերոց, և ուր ուրեք գտանէին. մինչև ի ձեռն կրօնաւորի միով գտեալ՝ որ էր յերկրէն Խոր Հայոց, ի գաւառէն որ կոչի Զորոյ գետ, ի համբաւեալ ուխտէն Սանահին անուանեալ, պատահումն բարի իմն եղև. և հրամայեաց մեծն և բնաւն ի լաւ՝ Ատովմ, որդի Սենեքարիմայ, Հայոց նահանգի Վասպուրական կոչեցեալ. որոյ մասն փրկութեան հաւատացեալ էր Ատովմայ՝ պատկեր մօր տեառն ի բաժին Անձաւացեաց. հրամայեաց գրել մեծաւ յուսով և խնդութեամբ բազմաւ. որոյ անուամբ պարսպեալ եղիցի մեծաշուք իշխանութիւն նոցա, չորից հարազատ եղբարց՝ Դաւթի և Ատովմայ, Կոստանդիոյ և Համազասպայ, գեղեցիկ և շքեղազարդ Բագրատունեաց»:

Խորենացուն վերագրված վերահիշյալ գրվածքը, իրբև Սահակ Արծրունու թղթի պատասխան, ինչպես ուղիղ նկատել է գերմանական գիտնական Ֆետտերը, անվավերական է և գրված է, հավանորեն, տասներորդ կամ տասնութներորդ դարում (տես «Հայկական աշխատասիրութիւնք հայագէտ Պ. Ֆէթթէրի», Թարգմ. Հակ. Տաշյանի, Վիեննա 1895, եջ 98 — 101)։

Միանգամայն սակայն հավանական է, վոր այդ թղթում մեջ բերված Աստվածածնի պատկերի մասին տեղեկությունները քաղված են, իրոք, «Մովսես քերթող»-ի, այսինքն՝ խորենացու համապատասխան գրվածքից, վորը նա գրել էր Ջաքարիա կաթողիկոսի հետ միասին և վորը հիշատակված է Յերուսաղեմի թիվ 413 ձեռագրում:

Այս խնդիրը վերջնականապես պարզելու համար անհրաժեշտ է, իհարկե, համեմատել «Պատասխանի թղթոյն Սահակայ» գրվածքը «Ի փոխումն Աստուածամաւրն և պատկերի նորին» վերոհիշյալ յերկի հետ, վորը գտնվում է Յերուսաղեմի մատենադարանում:

Խորենացու ժամանակի վորոշման համար՝ նոր այս դիտողությունները, ինչպես տեսնում ենք, բավականաչափ հիմնավոր են ու համոզիչ:

Յեթե Մովսես խորենացին և «Մովսէս քերթող»-ը ապրել են միևնույն ժամանակաշրջանում, յերկուսն էլ ականավոր քերթողներ են, յերկուսն էլ Մովսես են, յերկուսն էլ ունեն գրվածքներ Հոգյաց վանքում գրտնրվող Աստվածածնի պատկերի մասին՝ ավելի քան հավանական է ըստ իս, վոր նրանք պետք է լինեն միևնույն անձը:

Այսպիսով մեր քննության բոլոր յեզրակացությունները հաստատվում են նաև կարևոր այս նոր դիտողությամբ: Խորենացու առեղծվածը լուծվում է միանգամայն բավարար կերպով: Նրա պատմության ժամանակը, վոր վերև մենք յենթադրել էինք Բուդայի արշավանքից հետո, վորոշվում է ըստ այսմ ինքնբերող դարի յերրորդ քառորդում՝ Ջաքարիա կաթողիկոսի ժամանակ (855 — 875 թ.), հավանորեն, սրա կաթողիկոսության սկզբնական տարիներում:

22. Պիտոյից գրքի վերջաբանը ճավանակաւն ե վերագրել Մովսէս Խաչենացուն: — Պիտոյից գիրքը, ինչպես հայտնի յե, թե հայ և թե ոտար բանասերները համարել են Խորենացու աշխատութիւն: Նրանք չիմնվել են, գլխավորապէս, Կիրակոս Գանձակեցու (Թիֆլիս 1910, էջ 31) և Ասողիկի (Պետերբ. 1885, II, Բ, էջ 79) վկայութիւնների, նաև Բառագարտների ուսումնասիրութեան վրա («Ueber das Buch «die Chrie», տես ZDMG, XL, 1886, էջ 457 — 515): Բացի այդ՝ նրանք ի նկատի յեն ունեցել նաև Պիտոյից գրքի վերջաբանը, վոր ունի հետևյալ վերնագիրը՝ «Մովսէսի քերդողի, արարողի պիտոյիցս տառի, իմաստաբանութիւն յորդորակսն առ Թէոդորոս ոմն աշակերտ իւր՝ ներակրթիլ քաջուշիմն վարժիւք յիմաստս ճարտասանականս արհեստիս» (տես «Մովսէսի Խորենացույ մատենագրութիւնք», Վենետիկ 1843, էջ 580):

«Յունարան դպրոցը ե նրա զարգացման շրջանները» իմ ուսումնասիրութեան մեջ (Վիեննա 1928, էջ 105 — 115) յես մանրամասն քննել եյի Պիտոյից գրքի յունարան լեզուն և հանգել եյի ուշագրաւ յեզրակացութեան, վոր այդ յերկը, վորի մեծագույն մասը թարգմանութիւնն ե հունարենից, իր բառամթերքով ու լեզվական առանձնահատկութիւններով խմբակից ե Փիլոնի, Իրենեոսի և Թրակացու քերականութեան թարգմանութիւնների և թարգմանված ե վեցերորդ դարի առաջին կիսում:

Շատ պարզ ե ուրեմն, վոր Պիտոյից գիրքը չե կարող վերագրվել Խորենացուն, վորը, ինչպես տեսանք, ապրել ե իններորդ դարում և իր պատմութիւնը գրել Բուդայի արշավանքից հետո:

Անժխտելի յե սակայն, վոր «Հայոց պատմութիւն»-ը և Պիտոյից գիրքը սերտ կապ ունեն իրար հետ և խորենացին մեծ չափով ոգտվել ե, գլխավորապես, Պիտոյից գրքից: Յեւ այդ հասկանալի յե, վորովհետև խորենացին հետևող ե պատմագրության հետտորական ուղղության և նրա պատմության մեջ նամակները, ներբողները, պարսափները գրված են Պիտոյից գրքի կանոններով:

Մ. Արեղյանն իր «Հայ ժողովրդական առասպելները» (Վաղարշապատ 1901) աշխատության մեջ մատնացուց ե արել, որինակ, վոր խորենացին Տիգրան Ա-ի ներբողը գրել ե, հետևելով «հիւսուսն Պիտոյից» աղբյուրի ճարտասանական պահանջներին:

Հայտնի յե նույնպես, վոր խորենացու պատմության բառապաշարի մեջ անչափ շատ են այն հազվագյուտ կամ հունաբան բառերը, վոր գործ են ածված Պիտոյից գրքի և Փիլոնի թարգմանություններում:

Վոր Պիտոյից գիրքն ե այն հետտորական ձեռնարկը, վորից ոգտվել ե խորենացին՝ այդ յերևում ե հենց իրա խորենացու հետևյալ վկայություններից.

1. «Եւ վասն առ ի Յունաց զրուցաբանսն զակնարկութիւն մերոյ պիտոյիցս առնելոյ՝ բաւական է այսչափ» (I, Բ, եջ 9).

2. «Եւ այսոցիկ այսպէս կարգելոց, կամ հաւաստի և կամ դոյզն ինչ կասեալ յարգարոյն՝ սկսայց քեզ և որ ինչ զկնի այսոցիկ ի Հիւսման պատմութենէ Պիտոյից» (I, ԺԹ, եջ 57):

Պետք ե ասել, վոր իններորդ դարը ե, մասնավորապես, նրա յերկրորդ կեսը, վոր մի նոր դարագլուխ եր նախարարական Հայաստանի տնտեսական, քաղա-

քական ու կուլտուրական վերակենդանացման՝ կարևոր մի շրջան եր նաև հին հունաբան դպրոցի վերածնունթյան։ Պիտոյից գրքը, ինչպես և հունաբան դպրոցի իմաստասիրական ու քերականական հնագույն յերկերը, ծառայել են՝ այս շրջանում իբրև դպրոցական դասավանդման ձեռնարկներ։ Յեվ Պորենացու մատնանշած «արուեստ»-ը, վոր նա ավելի բարձր եր գնահատում, քան Սահակ-Մեսրոպի Թարգմանչական հրատուրթյունը (տես III, ԿԱ, եջ 343), պետք ե հասկանալ այն իմաստով, վոր նա իբրև «քերթող» մոտ ծանոթ ե յեղել հունաբան դպրոցի ուսմունքներին։

Պիտոյից գրքի մեջ, վոր դարերի ընթացքում գործ եր ածվում իբրև դասագիրք, ինչպես հայտնի յե, բացի բուն տեսություններից և հնագույն վարժություններից կան նաև հետագայում ավելացված վարժություններ, վոր գրել են Դավիթ Հարքացին, Պոսրովիկը և ուրիշները։

Ըստ յերևույթին, այդ ձեռնարկը վերստին խմբագրվել ու վորոշ փոփոխությունների յե յենթարկվել նաև իններորդ դարում։

Մի նոր հավելում ե նրա մեջ, իմ կարծիքով, այն վերջաբանը, վոր բանասերները վերագրում են բուն Թարգմանչին։

Ուշագրավ ե ամենից առաջ, վոր ձեռագիրների մի մասը չունեն այդ վերջաբանը. որինակ՝ Եջմիածնի մատենադարանի Թ. 1807 (= Կար. Յուլ. Թ. 1764), 1810 (= Կար. Յուլ. 1767) և 1820 (= Կար. Յուլ. 1777) ձեռագիրները։ Բացի այդ՝ միանգամայն անհավանական ե ըստ իս, վոր գրքի սկզբնական վերնա-

դիրը լինելը «Պիտոյից տառ», ինչպես այդ ունի Մովսես քերզողի վերջարանը:

Ինչպես հայտնի յե, Պիտոյից գիրքը հոետորական արվեստի ընդարձակ մի ձեռնարկ ե, վորը պարունակում ե իր մեջ տեսություններ և վարժություններ վոչ միայն «պիտոյից», այլ և հոետորական ուրիշ ձեերի մասին: Դննության առնված մյուս ձեերն են բացի «պէտք»-ից՝ «խրատ», «եղծումն», «հասարակ տեղի», «ներբողեան», «պարսաւ», «բաղդատութիւն», «բարանութիւն», «արտասանութիւն» և «գրութիւն»:

Ավելի քան հավանական ե, վոր այս ընդարձակ գրքի նախնական թարգմանությունն ունեցել ե տարբեր վերնադիր և հետին դարերում միայն նա անվանվել ե «Պէտք» կամ Պիտոյից գիրք՝ առաջին զլխի «յաղագս պիտոյից» վերնադրի համաձայն:

Վիճելի յե թվում ինձ նաև Պիտոյից գրքի թարգմանչի «քերզող» մակդիրը:

Այս մակդիրը, վոր հունարեն ποιετης բառի թարգմանությունն ե, թեև գործ ե ածվել հունաբան առաջին շերտի թարգմանություններում (տես Թր. քեր., հրատար. Ադոնցի, եջ 1. Պիտ., եջ 359. Փիլ. նախ. Բ, եջ 153. Փիլ. տես.), սակայն հնագույն այս շրջանում նոր կերտված «քերզող» բառը պետք ե լինել խիստ անսովոր ու ոտարոտի: Թրաքացու քերականության մի ուրիշ հատվածում հունարեն նույն ποιετης բառը թարգմանված ե նաև «արարող» (եջ 27):

Հունաբան մատենագրության ավելի ուշ շրջանում միայն խորթ ու շինծու «քերթող» բառը հարազատ եր դառել և դործածվում եր հետզհետե վոչ միայն բանաստեղծի, այլ և հեղինակավոր գիտնականի, քերա-

կանի, Թարգմանչի և, ընդհանրապես, մատենագրի իմաստով:

Պիտոյից գրքի Թարգմանիչը, վոր հունաբան առաջին շերտի մատենագիրներից եր, չեր կարող ըստ իս անվանվել «քերգող» նոր ու անսովոր այս բառի կերաման շրջանում:

Վոր վերահիշյալ մեր դիտողությունները հավանական են և վոր Պիտոյից գրքի Թարգմանությունն անկարելի յե վերագրել վերջաբանի հեղինակ «Մովսէս քերգող»-ին՝ այդ յերևում ե նաև վերջաբանի լեզվից, վորը զգալի չափով տարբեր ե հունաբան հնագույն Թարգմանությունների լեզվից:

Պիտոյից գրքի վերջաբանը յերկու եջ ե, ընդամենը՝ 69 տող:

Արդ՝ լեզվական ուշադիր քննությամբ այդ յերկու եջի մեջ կարելի յե մատնացույց անել բազմաթիվ բառեր, վորոնք բնավ չեն հանդիպում Պիտոյից-Փիլոնյան խմբի Թարգմանություններում և վորոնք առաջին անգամ գործ են ածվել կամ Հունաբան գպրոցի յերկրորդ և յերրորդ խմբերի և կամ ավելի ուշ շրջանի յերկերում:

Նոր այս յեզրակացությունը հիմնավորելու համար կարևոր են թվում ինձ լեզվական հետևյալ դիտողությունները:

ա. «Մովսէս քերգող»-ը չե կարող լինել Պիտոյից գրքի Թարգմանիչը, վորովհետև նա, բացի Պիտոյից-Փիլոնյան խմբի բառերից (տառ, խրատաբանութիւն, ներակրթիլ, գեղապարեմ, պարերգակ, ճեմարան, ճարտասանեմ, սարաս, երկասիրաբար ևն), ունի նաև հունաբան մյուս յերկու խմբերի բառերը: Ուշագրավ ե

նաև, վոր այդ բառապաշարի մեծագույն մասը սովորական եր Խորենացու ժառանգակ Բագրատունյաց շէր-ջանի մատենագրական յերկերում:

Այդպիսի բառեր են կամ դարձվածքներ՝

1. «ի ներ անձինդ», «ներանձիցն» 580,32 և 581,13. հմմտե «արդ են ներ ձայնոջն ներ անձինցն ախտիցն նշանակք» Պէր. 462. ներանձնական ԴՊորփ., եջ 258. Տիմ., եջ 62. ներանձնաւոր Յամրլ. Պէր. 514. Վերլ. 568. Տիմ. 31. Թէոդոր. ի խաչն, եջ 161. ներանձնեան Թէոդ. ի կոյսն, եջ 172¹.

2. «ենթակայս իրի» 580,27—28. հմմտե «սահման զբնութիւն ենթակայ իրին յայանէ» ԴՊորփ. 260. «սահման է բան կարճառօտ՝ յայտնիչ բնութեան ենթակայ իրի» Սահմ. 136.

3. վերաթեւեմ — «աստուտ ի բարձրագոյնս վերաթեւելով» 580,7. «և տեսանէ զինքն ոչ երբէք ի լաւագոյնսն վերաթեւել» Սահմ. 167. տես նաև Յհ. իմ. աա. և երև. 2աք. կաթ. Յովհ. կաթ., եջ 35 ևն.

4. երգաբանեմ 580,9. Տիմ. 160. 240. Յհ. իմ. ատ., երգաբանութիւն Թէոդոր. ի կոյսն 172.

5. գովասանական 580,17. Շար. Կիւրդ. խչ. ևն, գովասանութիւն Նոննոս 16, Ստեփ. մեկն.

¹ Ներքև մենք կրտսնենք, վոր «Ներբողեան ի սբ. խաչն» և «Գովեստ ի սբ. Աստուածածինն» ճառերը (տես «Մատենագրութիւնք նախնեաց. Յոհան իմաստասէր ևն», Վենետիկ 1833, եջ 159—171 և 172—182), վոր վերագրվել են Թեոդորոս Քոթենավորին, պատկանում են, իրոք, Թեոդորոս միայնակեցին, վոր «Մովսէս քերդօղա»-ի աշակերտն եր:

քեր., եջ 185. Արծր. Գ. 13, եջ 193 և Դ. 2, եջ 273:
6. ներագրեմ 580,21. էլ. Ստ. 20, ներագրա-
ւոր էլ. Ստ. 30.

7. արտադատեմ 580,22. Տիմ. 20. Սհմ. 130.
ԴՊորփ. 316. էլ. Ստ. 86. արտադատութիւն Խոր.
Բ. 70, եջ 206.

8. առադրեմ 580,33. Յամբլ. Ստ. 427. Յամբլ.
Պէր. 497. Վերլ. 582. ԴՊորփ. 271. Սահմ. 164,
նաև Թէոդոր. ի խաչն 168 ևն.

9. հրատարակեմ 581,3. Նոննոս 26. Անյ. բարձ.
Թէոդ. ի խաչն 159. 165 ևն.

10. համատոհմեայք 580,24. Պիտ. 393 (կասկա-
ծելի հատվածներից մեկում). Խոր. Բ. 67, եջ 202,
Վոչ վոսկեդարյան յերկերում և Վոչ էլ Պիտոյից-
Փիլոնյան խմբի Թարգմանություններում չկան նաև
հետևյալ բառերը, վոր հանդիպում են միմիայն վեր-
ջաբանում՝

իմաստաճեմն 580,11. բենազն 580,15. քահանայա-
զարդ 580,19. ազատերամ 580,19. իրախոյզ 580,22.
պետաւոր 581,4. համաչուեմ 581,8. Թեահերձ 581,9.
հոմերամ 581,9. բոլորակամ 581,14. արտաքաղեմ
581,17. հոմազն 581,29. իւրեանցասարաս 581,31.
մօտազգաց 581,32. իրադիտող 581,32. արտուստ
581,34:

Ընդունելով անգամ, վոր այս բառերի մի մասը
կարող ե թերևս գտնվել հնագուշն յերկերում՝ կար-
ծում եմ, այնուամենայնիվ, վոր սրանց մեծագուշն
մասը մատենագրական հետին շրջանի բառեր են:

Բ. Վոր վերջաբանը չե կարող գրված լինել Պիտո-
յից գրքի և կամ հունաբան մյուս յերկու խմբերի

Թարգմանության շրջանում, այլ նա հորինված պիտի լինի խորենացու ժամանակ իններորդ դարում՝ այդ ևս հաստատվում է ըստ իս նրա լեզվի քննությամբ։ Բացի հունարան յերեք խումբ Թարգմանությունների նախկին բառապաշարից՝ կան նրա մեջ և այնպիսի բառեր, վորոնք գործածական ու սովորական էին ավելի ուշ ժամանակի, գլխավորապես, Բագրատունյաց շրջանի մատենագրական յերկերում։

Այդպիսի բառեր են թվում ինձ.

1. Երաստ — «ի բոլոր ազատերամե երաստից երանաւէտ ձայնիւ բարբերանեսցիս» 580, 19–20. այս բառը, վոր նշանակում է «դաս, կարգ, համախմբութիւն, ժողով, ատեան», բացի վերջաբանից հանդիպում է միմիայն Ղևոնդի և Հովհաննես կաթողիկոսի մոտ. տես Յհ. կաթ. (Թիֆլիս 1912), էջ 26՝ «որոշէ [Վաղարշակ] և ժամս յարքունիս մտանելու, և ժամանակս խորհրդոց և երաստից և խրախճանութեանց պատրաստէ». Ղևոնդ է, էջ 20՝ «տեսին և զկարգաւորութիւն հրեշտակակերպ դասուց քահանայական երաստուց». վերջաբանն ունի նաև «ծաղրերաստ» 581, 35.

2. սաղապեմ 581, 2. Տիմոթեոս Կուզի հակաճառությունը, թեև ունի մեկ անգամ «առսաղապել» (էջ 108, 34. տես Աճառյան, Արմատ. Բառար.), սակայն «սաղապ» և «սաղապեմ» հազվագյուտ բառերը գործ են ածվել այնուհետև, գլխավորապես, Բագրատունեաց շրջանի մատենագրական յերկերում. սաղապ Յհ. կաթ., էջ 121. 180. 216. Ոսկ. Յհ. Բ. յիշ., էջ 960. սաղապեցուցանեմ խոր.

Գ. 55, եջ 330. սաղապաճեմ խոր. Գ, 62, եջ 344. անսաղապ Յհ. կաթ. 291.

3. բանապաճոյճ 580,10. ունի նաև Յհ. կաթ. 3. «պաճոյճ» արմաար թեև վոսկեգարյան ե, սակայն նրանից կազմված բաղադրություններն անչափ շատ են Բագրատունյաց շրջանի յերկերում. որինակ՝ գեղապաճոյճ Յհ. կաթ., եջ 111 և Արծր. Դ, 7, եջ 295. պճնապաճոյճ, ճոխապաճոյճ, պերճապաճոյճ, պայծառապաճոյճ Յհ. կաթ. 103. 252. 336. 91 ևն.

4. կրթականութիւն 580,13. կրթարան 580,27 և 581,1. «կիրթ», «կրթել», «կրթութիւն», անշուշտ, վոսկեգարյան են, սակայն «կրթական», «կրթականութիւն» և «կրթարան», վոր չեն հանդիպում հնագույն յերկերում, կարող են լինել Բագրատունյաց շրջանի նոր ռառակազմություններ. կրթական Նիւա. բն. Յհ. կաթ., եջ 101 և 334. Արծր. Ա. 10, եջ 58. կրթականութիւն Նար., իսկ էլ. Սա., եջ 32՝ կրթելութիւն. կրթարան Արծր. Գ. 26, եջ 243 և Դ. 11, եջ 304.

5. ընթերցասէր 580,13. խոր. Ա. 5, եջ 17 և 20. Սոկր. 494. Արծր. Ա. 6, եջ 44. ընթերցասիրեմ խոր. Ա. 3, եջ 10. Յհ. կաթ., եջ 12.

6. հոգեծաղիկ 580,31. Յհ. կաթ., եջ 182. Անան. եկեղ.

7. օղապար 581,3. օղապարիկ Յհ. կաթ., եջ 147. 198. 211. 244. 321. Շար. ևն.

8. լոգարան 581,10. «լոգացուցանեմ» ունի Բիւզ. Ե. 7, եջ 212, սակայն «լոգարան» հնագույն «րաղանիք»-ի կամ «լուալիք»-ի իմաստ

տով, հավանաբար, նոր ըստ է. նույն այս բառն ունեն նաև Պտմ. Աղեքս., եջ 69 և 88, վորի թարգմանությունը վերև մենք վերագրեցինք խորենացուն, նաև Անան. եկեղ. և Նրզն. Մաթ.

9. բիւրակերպ 581,19. Ոսկ. Յհ. ա. 28. Նար. ևն. բիւրակերպեան խոր. վաղվ., եջ 327 (հրատ. 1843 թվի).

10. բոցափայլիմ 581,22. խոր. Հռիփս. բոցափայլ Անան. եկեղ.:

Յեթե ցույց տրվի անգամ, վոր այս բառերից մի քանիսը հին են, այնուամենայնիվ, հավանական կարելի չե համարել, վոր սրանց մեծագույն մասը առանձնահատուկ են յեղել, ըստ յերևույթին, Բագրատունյաց շրջանի մատենագրության:

Արգ՝ ընդունելով վոր «Մովսէս քերդող»-ի վերջաբանը գրված ե իններորդ դարում՝ կարող ենք նաև յենթադրել, վոր ինքը Պիտոյից գիրքը, վորը պարունակում ե իր մեջ յոթերորդ ու ութերորդ դարերում գրված Դավիթ Հարքացու «յաղագս շան», խոսրովիկի «արտասանութիւն միայնամարտութեան Դաւթի և Դողիաթու» և զանազան այլ նորագույն վարժություններ, վերստին խմբագրված պիտի լինի նույն այդ իններորդ դարում և նրա խմբագրողն ե վերջաբանի հեղինակ «Մովսէս քերդող»-ը:

Վերջաբանի վերնագրում «արարողի պիտոյիցս տառի» խոսքերը պետք ե հասկանալ, հավանորեն, այն իմաստով, վոր Պիտոյից գրքում մի քանի վարժություններ գրել ե ինքը «Մովսէս քերդող»-ը: Դժվար չե նաև յեղրակացնել, վոր այս հեղինակն այն «Մովսէս քերթողն» ե, վորը Զաքարիա կաթողիկոսի հետ

միասին գրել եր «ի փոխումն Աստուածամաւրն» ճառը:

Իսկ այս «Մովսէս քերթող»-ը, ինչպես վերև տեսանք, հաւանորեն, հենց այն հռչակավոր «քերդողահայր» Մովսէս Խորենացին է, վորի պատմությունը հորինված եր նույն այս ժամանակաշրջանում Բուդայի արշավանքից հետո:

Վերջաբանի հեղինակի մասին վերոհիշյալ դիտողությունները պետք է ճիշտ լինեն, վորովհետև մեր այգ նոր լուսաբանությամբ վորոշվում է նաև, թե ով եր Մովսէս քերդողի Թեոդորոս աշակերտը, վորի համար Նարադրված եր վերջաբանը իբրև «խրատաբանութիւն յորդորական»:

Միանգամայն պարզ է ու ավելի քան հաւանական, վոր «Մովսէս քերդող»-ի աշակերտը «Մաքենոցք կրօնաստանին մէջ գտնուող» այն «Թէոդորոս անունով միանձն» է, վորը հիշատակված է Զաբբանալյանի մոտ և վորին նա համարում է Մաշտոց կաթողիկոսի ուսուցիչ (տես «Հայկական հին դպրութեան պատմութիւն», Վենետիկ 1897, եջ 506):

Թովմա Արծրունու ասելով՝ Մաշտոց կաթողիկոսը «ուսումնական բանգիտութեանն քաջահմտագոյն» եր (III, ԻԶ, եջ 243) և, ինչպես հայտնի յե, սա ես իր հերթին ուսուցիչն եր Հովհաննէս Դրասխանակերտցու, վորին հին հայ պատմագիրներն անվանում են «ճարտասան» և «մեծ հռետոր»:

Կարելի՞ յե միթե պատահական համարել կարևոր այն փաստը, վոր «Մովսէս քերդող»-ի աշակերտին մենք գտնում ենք նույն այն Գեղարքունի գավառում, վոր Խորենացու պատմության մեջ մատնացույց է ար-

ված իբրև նշանավոր ուսումնավայր, ուր աշակերտել
եր, հավանորեն, խորենացին և կարդացել Նվսեբիոսի
յեկեղեցական պատմությունը:

Վերոհիշյալ Թեոդորոսը, վորին յես համարում եմ
Մովսես խորենացու աշակերտ, հունարան «քերդող»
եր և նշանավոր մատենագիր իններորդ դարի յերկրորդ
կիսում:

Բանասերներն ըստ իս աչքաթող են արել, վոր
«Ներքողեան ի սր. խաչն» և «Գովեստ ի սուրբ Աս-
տուածինն» ճառերը, վորոնք տպագրված են Հովհան-
նու իմաստասիրի «մատենագրութեանց» վերջում (Վե-
նետիկ 1833, եջ 159—171 և 172—182) և յենթադրվել
են իբրև Թեոդորոս Քութենավորի յերկեր, վերագրվելու
յեն, իրապես, այս Թեոդորոսին: Հրատարակված յերեք
ճառերից Քութենավորի աշխատությունն ե միմիայն
առաջին ճառը՝ «Նրանելոյն Թեոդորոսի ընդդէմ Մայ-
րագումացոյն» (եջ 148—158): Մյուս յերկու ճառը,
վորոնց վերնագրերի մեջ նրանց հեղինակն անվանված
ե «Թէոդորոս ճգնաւոր միայնակեաց եւ վարդապետ»
և կամ «Թէոդորոս միայնակեաց», հայտնապես տար-
բեր են իրենց լեզվով առաջին ճառից և չեն կարող
լինել Քութենավորի յերկեր:

«Գովեստ ի սուրբ Աստուածինն» ճառի նկատմամբ
հենց հրատարակիչն ինքը նկատել ե լեզվի այդ ան-
հաշտելի տարբերությունը և կարևոր ե համարել ներ-
քեւում դնել հետևյալ ծանոթությունը՝

«Թէպէտ և զառաջիկայս ճառ գտանք մակա-
գրեալ յանուն Թէոդորոսի, բայց երկբայիմք թե
խառնեալ իցէ ընդ ոճ բանից Թադէոսի ուրումն,
որ սիրէ կազմել ստէպ բառս եռաբարդս և քոտ-

ռաբարդս, և ածանցս ծանրալուրս. զի դիւրաւ մարթին շփոթիլ անուանքս Թադէոս և Թէոդորոս»:

Ավելորդ եմ համարում կանգ առնել լեզվական խնդիրներին վրա, վորովհետև հիշյալ ճառերն իններորդ դարի Թեոդորոս միայնակեցին վերագրելու համար կարելի չե բերել ուրիշ բավարար ու համոզիչ ապացույցներ:

Թեոդորոսի «ի սուրբ Աստուածածինն» գովեստը շարադրված է Աստվածածնի անունը կրող նորակառույց մի յեկեղեցու շինության առթիւ:

«Վասն զի այսօր — վկայում ե գովեստի հեղինակը — աւարտագործեալ կատարաշինեցաւ լրուսըն եկեղեցւոյ» (տե՛ս եջ 174):

Արդ՝ Ստեփանոս Որբելյանի կարևոր մի վկայությունից հայտնի չե, վոր 874 թվին Թեոդորոսի աշակերտ Մաշտոցի նախաձեռնությամբ Սևանի կղզում կառուցված էր, իրոք, յեկեղեցի «յանուն տիրուհւոյ Աստուածածնի»:

«Եւ անտի գնայ [Մաշտոց], — վկայում ե Որբելյանը — մտանէ ի Սևան կղզին: Եւ յետ բազում ճգանց հրաման առնու ի տեսլեան շինել եկեղեցի յանուն երկոտասան առաքելոց, և սահմանել միաբանակեացս. յաղագս որոյ և գային առ նա երկոտասանք ի վերայ ծովուն յանուրջս. և նշանակէին զտեղի եկեղեցւոյն»:

Ահա սոյն երևմամբ վերին ազդեցութեամբ շարժեալ մեծ Թադուհին Մարիամ՝ ամուսին Վասակայ Սիւնւոյ, գայ առ սուրբն Մաշտոց. և բազում Թախանձանօք ի հաւան ածեալ գնա ձեռն

ի գործ արկեալ շինեն զգեղապահոյճ եկեղեցիսն՝
յանուն սուրբ առաքելոց, և զմիւսն, յանուն
տիրուհւոյ Աստուածածնին. և զարգա-
րեալ մեծամեծ սպասուք կանգնեն զնա տուն Աս-
տուծոյ և բնակարան աստուածազգեաց արանց
յ323 թուականին Հայոց» («Պատմութիւն նահան-
գին Սիսական», Թիֆլիս 1910, լէ, եջ 173—174):
Հաւանական է, ուրեմն, վոր Թեոդորոս միայնակեցն
«ի սուրբ Աստուածածինն» գովեսար գրել է 874 թվին
հենց այս յեկեղեցու կառուցման առթիւ:

Սանփանոս Որբելյանի վերոհիշյալ վկայության շա-
րունակությունից պարզվում է նաև, վոր «իշխանաց
իշխան» Աշոար նվիրել էր Սեանի նորակառույց յեկե-
ղեցիներին «զփրկական նշանն աստուածընկալ խա-
չին»:

«Բայց Մաշտոց եղիր սահման վանիցն — շա-
րունակում է Որբելյանը — և պայծառացոյց երկ-
նաքատակ կարգօք. յորմէ համբաւոյ միաբանեալ
Աշոտոյ՝ իշխանաց իշխանի, սուրբ ուխտին՝ գայ
ի տեսութիւն սուրբ հօրն. և ընծայէ զփրկա-
կան նշանն աստուածընկալ խաչին»:

Այս նվիրատվության առթիւ է հորինված, ըստ
յերևույթին, նաև Թեոդորոսի «ի սուրբ խաչն» ներ-
բողը, վորը գրված պիտի լինի, ինչպես տեսնում ենք,
վերոհիշյալ գովեստից, այսինքն՝ 874 թվից՝ մի քանի
տարի հետո:

Նոր այս յեզրակացությունները Թեոդորոսի, նրա
գրական յերկերի և անգամ այդ յերկերի ժամանակա-
գրության մասին, արժանի յեն ըստ իս լուրջ ուշա-
դրության:

Յեթե ճիշտ են վերոհիշյալ իմ դիտողությունները, վոր այս Թեոդորոս միայնակեցն աշակերտն եր Պիտոյից գրքի վերջարանի հեզինակ Մովսեսս քերդող Խորենացու, այդ դեպքում՝ Խորենացու ուսուցչական ու գրական գործունեության ժամանակը վորոշվում է, իրոք, իններորդ դարի յոթանասնական թվականներից առաջ, գլխավորապես, Զաքարիա կաթողիկոսի ժամանակ:

Հունաբան դպրոցի հետևորդների վերոհիշյալ հաջորդականությունը՝ Մովսեսս քերդող — Թեոդորոս — Մաշտոց — Հովհաննես Դրասխանակերտցի՝ ինչպես տեսնում ենք, ուշագրավ մի նոր կռվան է դարձյալ մեր այն յեղրակացության, վորի համաձայն Խորենացու պատմության ժամանակը մենք վորոշել եյինք Բուդայի արշավանքից ու մեծ յերկրաշարժից հետո, Զաքարիա կաթողիկոսի ժամանակ:

23. «Հայոց պատմութեան» վերնագրում «Մովսէս Խորենացի» ունուցի հեղինակի իսկական անունն է: — Ահիշյանը, լենթադրելով, վոր «Հայոց պատմութեան» հեղինակը նույնն է Ղևոնդ յերեցի հետ՝ պատմության վերնագրում «Մովսէս Խորենացի» անունը համարում է, բնականաբար, կեղծիք և հավելված «երկրորդ գրչի մը» (տես «Մատենագրական հետազոտութիւններ», հատոր Գ, Վիեննա 1930, եջ 287 — 291):

Իր այս կարծիքը նա հավանական է համարում նաև հետևյալ նկատառումներով՝

«Բայց Մովսէս անունը — ասում է նա — կարող է նկատուիլ կեղծիք, վասնզի կեղծուած է անոր ժամանակն ար, գրութեան ձևն ար. ժամանակակից մը Թ. դարու առաջին տասնեակին պիտի

համարձակէր սեպհական անուամբ լոյս ընծայել պատմութիւն մը, ուր ինքզինքը կրկեղծէր աշակերա Սահակի եւ Մաշտոցի: Եւ որովհետեւ «Մովսէս» իւր գրութեան մէջ նախնաբար դիտում էր ունեցած կեղծելու իր ժամանակը, պիտի ենթադրենք թէ կեղծողը երկրորդ գրիչ մըն է, որ հեղինակին մահուընէն եաքը հաւատալի եւ հեղինակաւոր ընծայելու համար անոր խոսքերը, կարեւոր տեսած ե կեղծել ժամանակն ալ, անունն ալ, այս ճանապարհով Հայոց հնագրական պատմութիւնը իբրեւ նորագիւտ աշխատութիւն պիտի գտնէր ընդունելութիւն եւ պիտի առթէր հետաքրքրութիւն եւ սքանչանք» (եջ 289):

Ակինյանի այս դիտողությունները, թեւ թվում են բավականաչափ հիմնավոր ու համոզիչ, սակայն չեն ճշտվում մեր նոր ուսումնասիրությամբ և չեն կարող ըստ իս համարվել ընդունելի:

Վերեւ մենք տեսանք, վոր «Աշխարհացոյց»-ը Մովսես Խորենացու աշխատությունն է, վոր նույն այս հեղինակը Ձաքարիա կաթողիկոսի աշխատակցությամբ գրել է, հավանորեն, Աստվածածնի պատկերի մասին վերոհիշյալ յերկը և վոր Խորենացուն պետք է վերագրել, հավանորեն, Պիտոյից գրքի վերջաբանը: Խորենացու այս աշխատությունների վերնագրերն են՝

1. «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացու»,

2. «Ձաքարիայի կաթողիկոսի և Մովսեսի քերթողի և փոխումն Աստուածամաւրն և պատկերի նորին» և

3. «Մովսեսի քերթողի արարողի պիտո»

յիցս տառի խրատաբանութիւն յորդորական...»:

Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր այս գըր-վածքների վերնագրերում նրանց հեղինակը և վոչ մի պատճառ չունեն կեղծելու կամ թագցնելու իր անունը: Ուրեմն՝ առանց յերկար ու ձիգ ապացույցների իսկ պարզ ե, վոր «Մովսէս» անունը «Հայոց պատմութեան» հեղինակի իսկական անունն ե:

Արդ՝ ի՞նչպես բացատրել այն փաստը, վոր խո-րենացին՝ իր պատմությունը դրած լինելով սեպ-հական իր անունով՝ նրա մեջ բացահայտ կերպով վկայում ե իր մասին, վոր ինքը Սահակ-Մեսրոպի աշակերտ ե:

Ակինյանի կարծիքով՝ պատմության հեղինակը «նախնարար դիտում չէ ունեցած կեղծելու իր ժամա-նակը», ուստի և նա յենթադրում ե, վոր «կեզծողը երկրորդ գրիչ մըն է»: Ակինյանի այս յենթադրու-թյունը մանրամասն լուսաբանված ե Wiener Zeit-schrift für die Kunde des Morgenlandes հանդիսում (37, 1930, եջ 204 — 217), վորը, դժբախտաբար, չհաջողվեց ինձ ստանալ արտասահմանից:

Ինձ թվում ե սակայն, վոր ընդմիջարկությունների մասին այս յենթադրությունը, ինչ չափով վոր նույն կոահումը մեջ ե բերված նաև «Մատենադրական Հե-տադոտութիւններում» (եջ 171 — 172, 179 — 181 և 289), թեև հետաքրքիր ե ու ուշագրավ, սակայն, վոչ միայն վիճելի յե, այլ և անհավանական:

Յեթե ուղիղ լինեը Ակինյանի յենթադրությունը, այդ դեպքում՝ յերկրորդ գրչի հավելում պետք ե հա-մարվեը նաև խորենացու յերրորդ գրքի «ի վարդա-պետսն, յինքն եւ ի ճանապարհորդութիւն ուսմանն,

օրինակաւ երկնային զարդու՝ ամբողջ գլուխը, վորի հորինման հռետորական ձևը և վոճը հատուկ են և հարազատ խորենացուն։ Այդ վերնագիրը, ինչպես տեսնում ենք, գրած պիտի լինի վոճ թե ինքը ճանապարհորդողը, այլ մի ուրիշ հեղինակ։ Այս վերջին հեղինակը, հավանորեն, հենց ինքը խորենացին է, վորն իր պատմութիւնը հորինել է, թեև իր սեպհական անունով, սակայն հռետորական Քարառնութեան՝ ձեւով, վերագրելով այն Սահակ-Մեսրոպի աշակերտ համանուն «Մովսէս»-ին։

Վերոհիշյալ վերնագիրը, վոր ըստ իս իրա խորենացուն է, հետաքրքիր է այն տեսակետից, վոր խորենացին բնավ իսկ չէ թագցնում, վոր ճանապարհորդութեան հռետորական նկարագրութիւնը չէ պատկանում Սահակ-Մեսրոպի աշակերտին։ Շատ պարզ է, վոր ինքն այդ աշակերտը չէր կարող իր ճանապարհորդութեան վերնագիրը դրած լինել «ի վարդապետսն, յինքն եւ ի ճանապարհորդութիւն ուսմանն, օրինակաւ երկնային զարդու»։

խորենացու պատմութիւնը, վոր այժմ թվում է մեզ կեղծված ու խարդախված, ըստ յերևույթին, գրված է պատմագրութեան հռետորական բացառիկ ու հատուկ ձևով, վորը կարող էր թերևս հանդուրժելի համարվել խորենացու ժամանակ։

Գրութեան այդ ձևը հասկանալի չէ հռետորական սքոլաստիկայի վերածնութեան այս շրջանում՝ ինններորդ և տասներորդ դարերում՝ յերբ մատենագրական սովորական ձևեր եյին Քարառնութիւն»-ները, «դիմառնութիւն»-ները և «կերպարանառնութիւն»-ները, վոր հորինվում եյին Պիտոյից գրքի կանոններով։

Բագրատունյաց իշխանության ժամանակ՝ հունա-
բան նույն դպրոցի հետևողությամբ՝ գրված են, իմ
կարծիքով, նաև այն արվեստական նամակները, վո-
րոնք կեղծ են, անշուշտ, և շինծու. որինակ՝ «Թուղթ
Սահակայ Արծրունեաց իշխանի առ երանելի վարդա-
պետն Մովսէս Խորենացի», «Պատասխանի թղթոյն
Սահակայ» (տես «Մովսէսի Խորենացւոյ մատենագրու-
թիւնք», Վենետիկ 1843, եջ 281 — 282 և 283 — 296),
«Թուղթ Գիւտայ առ Դաւիթ» և Դավթի պատասխանը
(տես «Կորիւն վարդապետի, Մամբրէի Վերծանողի եւ
Դաւթի Անհաղթի մատենագրութիւնք», Վենետիկ 1833,
եջ 101 — 102) և ուրիշ նման գրվածքներ:


Խորենացու քննադատները պետք է ըստ իս նկա-
տի ունենան հունարան սքոլաստիկայի այն միջավայ-
րը, վորի մեջ սնվել ու դաստիարակվել եր Խորենա-
ցին և շարադրել իր պատմությունը: Խորենացու
պատմության ամենախոցելի ու թույլ կողմը հենց այն
պատմագիտական հռետորական ուղղությունն էր և այն
«ամենիմաստ արուեստ»-ը, վորին նա հետևել եր իբրև
ականավոր «քերդող» ու հռետոր-պատմարան:

Պատմագրական նրա այդ ուղղությունը կարևոր մի
խնդիր է սակայն, վորը կարոտ է հատուկ ու ընդար-
ձակ ուսումնասիրության: Խորենացու պատմության
ժամանակի վորոշումը Բուդայի արշավանքից հետո և
Զաքարիայի կաթողիկոսության շրջանում (855 — 875
թվ.), կարծում եմ, մեծապես նպաստելու յե և այս
խնդրի պարզաբանման:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԲԱՌԱՊԱՇԱՐԸ



Պորենացու պատմութեան լեզուն, ինչպես հայտնի
յե, ի նկատի յե առնվել բանասիրական բազմաթիւ
աշխատութեաններում: Այն բանասերները, վորոնք
Պորենացուն յենթադրել են հինգերորդ դարի պատ-
մագիր, բնականաբար, և նրա լեզուն համարել են
«յերկրորդ կարգի թարգմանչաց» լեզու, թեև վնչ ըստ
ամենայնի դասական, սակայն հին և վսեմ: Իսկ այն
բանասերները, վորոնք Պորենացուն յենթադրել են
ավելի ուշ ժամանակի մատենագիր՝ հիմնվել են դար-
ձյալ նաև նրա լեզվի վրա, վորը, նրանց կարծիքով,
հետնադարյան ե և միանգամայն անհարազատ հինգե-
րորդ դարին:

Այս կարծիքները, վոր հիմնավորված չեն փաստա-
կան տվյալներով, արտահայտված են սոսկ իրրե ընդ-
հանուր տպավորութեաններ: Յեւ այդ հասկանալի յե:
Պորենացու լեզուն, անտարակույս, հունաբան լեզու
յե, իսկ հունաբան լեզուն, ինչպես հայտնի յե, մութ
ու խրթին սի խնդիր եր, վորը դեռևս չեր յենթարկ-
վել գիտական մանրակրկիտ ուսումնասիրութեան:

Առաջին անգամ Հունաբան Դպրոցի ծագումը և
հունաբան լեզվով հնագույն թարգմանութեանները
քննութեան են առնված իմ «Յունաբան Դպրոցը և
նրա զարգացման շրջանները» աշխատութեան մեջ
(Վիեննա 1928). ուստի այժմ միայն, հիմնվելով այդ
ուսումնասիրութեան նոր յեզրակացութեանների վրա,

հնարավոր ե լուսաբանել Խորենացու պատմության լեզուն, գլխավորապես, նրա բառապաշարը, և վճռականորեն վորոշել նաև նրա ժամանակը:

Արդ՝ հաստատվում ե արդյոք մեր յեզրակացությունը Խորենացու ժամանակի մասին նրա լեզվի քըննությամբ:

Ըստ իս բանասերներին խիստ դժվար պիտի լինի ինձ առարկել, հիմք ընդունելով Խորենացու լեզուն, վորովհետև այդ լեզվի քննությամբ ևս հաստատվում ե, վոր Խորենացին Բաղրատունյաց շրջանի և ինսերորդ դարի պատմադիր ե: Պետք ե սակայն շեշտել, վոր լեզվական իմ դիտողությունները համոզիչ կըլինեն միայն նրանց համար, վորոնք ուշադիր կերպով կարդացել են իմ «Հունաբան Դպրոցը»:

Այդ ուսումնասիրության մեջ յես արդեն ցույց եմ տվել, վոր հունաբան լեզուն՝ իր բառամթերքով ու քերականական առանձնահատկություններով՝ միևնույնը չե յեղել հունաբան մատենագրության զանազան խմբերում, այլ նա կազմվել ե աստիճանաբար ու հաջորդաբար և հետզհետե կրել ե զգալի փոփոխություններ: Վեցերորդ և յոթերորդ դարերում նա ունեցել ե զարգացման յերեք շրջաններ և բաժանվում ե յերեք խմբերի, վորոնք իբրեից տարբերվում են թե իրանց բառամթերքով և թե քերականական առանձնահատկություններով:

Արդ՝ Խորենացու պատմության լեզվի ուշադիր քըննությունը ցույց ե տալիս, վոր նրա մեջ գործ են ածված վոչ միայն Պիտոյից-Փիլոնյան խմբի թարգմանությունների և հունաբան մյուս յերկու խմբերի հատուկ բառերը, այլ և այնպիսի հետնագույն բառեր,

Վորոնք չեն հանդիպում վոչ սրանց և վոչ ել վոսկե-
դարյան անվանված լեզվի մեջ, բայց սովորական են
ուլթերորդ և իններորդ դարերի մատենագրական յեր-
կերում:

Ոորենացու պատմության հունաբան կամ հետնա-
դարյան այդ բառապաշարը, վորը կարող ե թերևս
նյութ ծառայել հայոց լեզվի պատմական քերականու-
թյան, մեջ ենք բերում ընդարձակ կերպով:

ա. Ոորենացու պատմության մեջ անչափ շատ են,
նախ և առաջ, Պիտոյից-Փիլոնյան խմբի այն առանձ-
նահատուկ բառերը, վորոնք չեն պատահում Հին և
Նոր կտակարանների թարգմանություններում, վոչ ել
վոսկեղեն անվանված հինգերորդ դարի մյուս յերկե-
րում: Յեւ այդ շատ բնական ե, վորովհետև Ոորենա-
ցին իբրև քերդող ու հոետորական ուղղության պատ-
մագիր ուսումնասիրել եր Պիտոյից գիրքը, վոր դպրո-
ցական ձեռնարկ եր ճարտասանության, և, ինչպես
հայտնի յե, ծանոթ եր և ոգտվել եր նաև Փիլոնյան
թարգմանություններից:

Նրա պատմության մեջ Պիտոյից-Փիլոնյան խմբի
հատուկ բառեր են, որինակ՝

1. ընծուիլ Ոոր. Գ. 62, եջ 343 և 344. Փիլ.
եյ. Ա. 22. Բ. 104, եջ 535. Փիլ. քհ. ևն.

2. կաղաղ Բ. 77, եջ 216. Փիլ. նխ. Բ. 113 և
լին. Իր. Ց., եջ 44. կաղաղանալ Փիլ. Լիւս. Տիմ.,
եջ 93.

3. հագներգութիւն Ա. 21, եջ 65. Բ. 10, եջ
120. Բ. 92, եջ 246. Փիլ. Հես., եջ 10. Թրաք. 4
ևն. ԳՊ. 253. Նոննոս 60 և 61. հագներգաբար
Ոոր. Գ. 52, եջ 326.

4. հիկէն Գ. 62, եջ 344. Փիլ. ալլար. Ար. Ստ., եջ 372. Ներ. Պորփ., եջ 229 ևն.

5. ներբողական Ա. 3, եջ 10. Պիտ. 353. 433. 451. Փիլ. Նոն. 24. ներբողեմ Փիլ. իմաստն. Պիտ. 363. 413. Նոն. 14. ներբողեան Փիլ. Սամփս., եջ 554. Փիլ. Յոֆն., եջ 607. Պիտ. 413. Տիմ. 22 ևն.

6. շեշտ Ա. 11, եջ 36. Թր. քեր. 3. Փիլ. ալլար., եջ 106. շեշտումն խոր. Ա. 12, եջ 39. շեշտել Յհ. կաթ. ևն.

7. սաղարթ Ա. 20, եջ 64. Գ. 37, եջ 303. Պիտ. 426. սաղարթաթափ Փիլ. լին. Ա. 9. Պիտ. 424. սաղարթանալ Նոն. 81. ևն.

8. սարաս Գ. 67, եջ 357. Պիտ. 348. 458. սարասել Պիտ. 435. Տիմ. 320.

9. վարկանել Ա. 4, եջ 14. Բ. 8, եջ 118. Բ. 83, եջ 227 ևն. Պիտ. 342. Փիլ. Գիրք Թղթ. 22. 33. Սահմ. 121. Նոննոս 37. Առ որս. Պամ. Աղ. 49. 51 ևն.

10. վաւաշանալ Բ. 63, եջ 195. Փիլ. իմաստն. վաւաշ խոր. Ա. 15. 17, եջ 48 և 55. Պամ. Աղ. 4. վաւաշոտ, վաւաշոտական Պիտ. 566. Փիլ. իմաստն. Նոն. 81 ևն.

11. վրդովիլ Գ. 50, եջ 321 և 68, եջ 358. Պատմ. Աղ. 13. 134. Զքք. կաթ. ևն. վրդովումն, վրդովութիւն Պիտ. 357. Փիլ. բազն. և իմաստն. խոր. Հռիփս. վրդով. Թր. 21 ևն.

12. ամենազան Գ. 62. եջ 344. Պիտ. 343. 387. Պամ. Աղ. 40. Փիլ. ևն.

13. ամենապատիկ Բ. 88, եջ 238. Պիտ. 423. Փիլ. Ած. աղք. Պամ. Աղ. 45 ևն.

14. աշխարհավարի Բ. 80, եջ 220. Փիլ. Ել-
աշխարհավար Պիտ. 390. աշխարհավարութիւն
Պիտ. 553.

15. աստեղաբանութիւն Ա. հալելիլ. Բ, եջ 91.
Շիր. աստեղաբանակ Փիլ. նիւ. Ա.

16. առնապատկեր Բ. 12, եջ 122. Փիլ. նիւ.,
եջ 34. Պտմ. Աղ. 149, բայց անդրի, անդրիանդ
Նոն. 24. 70. 71. այրածն Ներ. Պորփ. 238.

17. առիկողեալ — սակաւ ինչ առիկողեալ ի
հիւսիսոյ» Ա. 16, եջ 51. «ընդկողմանեալ ե զա-
ռիկողեալ» Փիլ. լին. Ա. 99. «բնակութիւն ունի
սա... և յապառաժ զառիկողս» Պիտ. 465. «զառի-
կող տեղիսն հասեալ կալան» Պտմ. Աղքս.

18. ատակել Գ. 1, եջ 257. Փիլ. Յոֆն.

19. արգաւանդահող Բ. 9, եջ 119. Գ. 59,
եջ 338. Պիտ. 351. 452. Փիլ. Ժ. բան և իմաստն.

20. առձեռնպատրաստ Ա. 4, եջ 15. Գ. 53,
եջ 327. Պիտ. 351. Փիլ. նիւ. Բ. 86. Անյ. բարձր.
Առ որս ևն.

21. արդարաբան Ա. 19, եջ 57. արդարաբա-
նութիւն Փիլ. Յոֆն.

22. աւաղ Բ. 13, եջ 124. 125. Պիտ. աւաղա-
կան Թր. քեր. 33. աւաղումն Փիլ. լին. աւաղել
Խոր. Բ. 63, եջ 195. Ոսկ. Յհ. ա. 40 ևն.

23. արփի Գ. 62, եջ 344. Պիտ. 427. Փիլ.
նախ. 11. արփայագնաց լինել Խոր. Գ. 55, եջ
331. արփային Խոր. Գ. 62, եջ 344. Փիլ. Ժ. բան.
լին. և ել.

24. աւելագործ Բ. 68, եջ 205. Փիլ. լին. Դ.
240.

25. բազմաշրջութիւն Ա. 30, եջ 83. Խոր. Աշխ.
589. Սուքր. հրար. 7. բազմաշրջութիւն Փիլ. տեսակ.

26. բարեգարգութիւն Գ. 68, եջ 358. Պիտ.
342. 343. Փիլ. լին. ևն.

27. բարեյարմար Գ. 62, եջ 314. Թր. քեր.
41. Սահմ. 139.

28. բարբախտ, բարբախտիկ, բարբառտիկ
Գ. 29, եջ 291. Գ. 48, եջ 319. Գ. 56, եջ 332.
Պիտ. 343. 349 ևն. Փիլ. Ժ. բան. նախ. Բ. ևն.
Նոննոս 33. Պտմ. Աղք. 50. 137. 160. 167. բա-
րբախտութիւն Խոր. Ա. 29, եջ 82. Բ. 13, եջ
125. Փիլ. Ար. առաք. 630 ևն.

29. բերանանալ Բ. 42, եջ 167. Փիլ. լին. Ա.
12. Եղ. ը. Շիր. Թէոդ. խչ.

30. բնաբար Գ. 20, եջ 279. Դքեր. 79. Փիլ.
լին. Յամբլ. Ստոր. 445 ևն.

31. գծագրութիւն Գ. 52, եջ 326. Էլ. Ստոր.
80. գծագրեմ Պիտ. 438. Փիլ. ալլաբ. Խոր. Աշխ.
589. Սուքր. հրար. 7.

32. գործառնութիւն Ա. 3, եջ 10. Պիտ. 467.
485. Պէք. 507. Դքեր. 79 ևն.

33. գրաւորական Գ. 61, եջ 342. Պիտ. 419.
434. Փիլ. Տիմ. 219. 320.

34. եռայարկ Ա. 16, եջ 53. Փիլ. լին. Բ. 7.

35. սարաս Գ. 67, եջ 357. Պիտ. 348. 435.
458. Տիմ. 320. Արծր. ևն.

36. դուգահաւասար Գ. 64, եջ 348. Պիտ. 319.
364. 428. Դքեր. 84 ևն.

37. ընդդիմարանել Գ. 65, եջ 351. Պիտ. 555.

ԴՊորփ. 277. ընդդիմաբանութիւն ֆիլ. նիւ. Բ.
120. Իր. Հերձ. 149. Տիմ. 195 ևն.

38. ընդդիմամարտ Գ. 39, եջ 307. Խոր. Հռիփս.
Փիլ. Լիւս. 127. Պիտ. 367. 450 ևն.

39. Թշնամակամ Գ. 64, եջ 349. ֆիլ. նիւ. Բ.

40. ինքնահաճ Գ. 68, եջ 363. ֆիլ. բագն.
ինքնահաճոյ Խոր. Ա. 4, եջ 15. Պտմ. Աղքս. 51.
77. Թէոդոր. խչ. Յհ. կաթ. ևն.

41. ինքնասիրութիւն Գ. 64, եջ 349. ֆիլ.
լին. Դ. 66, եջ 298. ֆիլ. Ժ. բան.

42. իրագործել Ա. 5, եջ 21. Պիտ. 431. Շիր.
իրագործութիւն Խոր. Ա. 13, եջ 44. Պիտ. 439.
Իր. Հերձ. 7. Նոննոս 80 ևն.

43. լինելութիւն Բ. 74, եջ 212. Պիտ. 353.
ֆիլ. նիւ. Ժ. Իր. Հերձ. 43. Ար. Ստոր. 449. Յամրլ.
Պէր. 507. ԴՊորփ. 270 ևն ևն.

44. խելագարիլ Գ. 17. եջ 276. ֆիլ. լին. Դ.
16, եջ 257 ևն. խելագարութիւն Պիտ. 388. 425.
Առ որս ևն. խելագարանք Խոր. Բ. 61, եջ 191.

45. ծննդաբանել Ա. 1, եջ 7. ֆիլ. լին. Ա.
82. Նոն. 11. ծննդարան Պտմ. Աղքս. 5. ծննդա-
րանութիւն Խոր. Ա. 20, եջ 58. Ած. յայտ. Շիր. ևն.

46. կատակերգութիւն Գ. 68, եջ 364. Թր.
քեր. 2. Նոն. 58. կատակերգակ Պիտ. 366. Նոն.
37. ևն.

47. կարեկցութիւն Գ. 65, եջ 353. Պիտ. 388.
392. 461. Դքեր. 105 ևն.

48. կենդանագրութիւն Բ. 32, եջ 150. ֆիլ.
նախ. Բ. Պիտ. 438. Առ որս. կենդանագրել Խոր.
Հռիփս. Նոն. 65. Էլ. Ստ. 80 ևն.

49. Կենցաղ Ա. 24, եջ 73. Գ. 68, եջ 365. Պիտ. 341. 345, Նոն. 5. Սահմ. 132. Պամ. Աղքս. 114. Կենցաղական Խոր. Բ. 3, եջ 104. Սահմ. 120. Էլ. Ստ. 11 ևն.

50. Կենցաղօգուտ Գ. 68, եջ 362. Պիտ. 344. 353 ևն. Փիլ. նախ. Բ. Դքեր. 105 ևն.

51. համաբարոյ Գ. 68, եջ 364. Փիլ. Էլ. Բ. 43, եջ 499.

52. համաբնակ Գ. 34, եջ 299. Պիտ. 441. Փիլ. լին. Բ. 38, եջ 116.

53. համանգամայն Գ. 61, եջ 342. Պիտ. 346. 351 ևն. Տիմ. 55. Ար. Ստ. 376. ԴՊորփ. 311. Ար. Աշխ. 607. Նոննոս 18. 24. 26 ևն.

54. համապատիւ Գ. 64, եջ 348. Պիտ. 379. Առ որս ևն. համապատուաբար Էլ. Ստ. 69 ևն.

55. ամբարտակ Ա. 9, եջ 32. Ա. 16, եջ 52. Բ. 56, եջ 186. համբարտակ Պիտ. 350. Փիլ. լին. Բ. 82.

56. համեստ Բ. 82, եջ 224. Գ. 65, եջ 351. Փիլ. տես. և քհ. Պիտ. Եղ. Ը. ևն. համեստանալ Գ. 20, եջ 280. Եղ. Ը.

57. հարցասիրութիւն Ա. 9, եջ 31. Ա. 32, եջ 87. հարցասէր Փիլ. լին. Սահմ. 190. Յհ. իմ. ատ.

58. հաւ առնելով Ա. 6, եջ 23. հաւել Պիտ. 414. հաւանալ Թր. քեր. 10. 12 ևն.

59. հետահոյզ (նաև «հետախոյզ» անս հրտր. 1913) Բ. 37, եջ 163. հետախոյզ Փիլ. իմաստն. հետախուզել Փիլ. տեսակ.

60. հետևակել Բ. 13, եջ 126. Փիլ. տեսակ.

61. ձիավարել Բ. 79, եջ 217. Գ. 13, եջ 271.

Պիտ. ձիավարական Պտմ. Աղքս. 25. ձիավարու-
թիւն Պիտ. 435. Նիւս. երգ. ևն.

62. ձիւնթացք Բ. 79, եջ 218. Բ. 88, եջ 238.
ձիւնթացարան Փիլ. նախ. Բ.

63. ճեմարան Գ. 61, եջ 343. Փիլ. լին. Գ. 16,
եջ 188. Սահմ. 194. ԴՊորփ. 280. Պտմ. Աղքս.
68 ևն.

64. մականական Գ. 55, եջ 331. մական Փիլ.
Սամփս. Նիւս. կազմ. մականաբար Փիլ. իմաստ.
մականել թեող. մայրագոմ.

65. մաշարայական Գ. 46, եջ 316. մաշարական
Փիլ. նախ. Բ, եջ 68.

66. մերձագաւակ Գ. 65, եջ 353. Փիլ. ել. Բ.
6, եջ 472.

67. միապետել Ա. 10, եջ 32. Փիլ. ժ. բան.
միապետական, միապետութիւն Պիտ. Փիլ. ժ.
բան ևն.

68. մօտասեր Գ. 65, եջ 353. Փիլ. Լիւս., եջ
148. ել. Բ. 6, եջ 472.

69. յառաջամասն Գ. 65, եջ 352. Փիլ. ել. Բ.
27. յառաջամասնութիւն Փիլ. ել. Բ. 43, եջ 500.

70. յաւետախաղաց Գ. 62, եջ 344. Պիտ. 359.
Փիլ. լին. Դ. 59, եջ 293. Իր. Հերձ. 178. Պէր-
533. Տիմ. 7 ևն.

71. յոգնական Բ. 79, եջ 225. Թր. քեր. 16.
17 ևն. յոգնակի, յոքնակի Պիտ. 399. Փիլ. լին.
Ա, եջ 12. Վերլ. 581 ևն.

72. նախաշաւիղ Բ. 92, եջ 245. 246. Պիտ.
399. 413. 445.

73. նախասել Ա. 30, եջ 83. Ա. հազելիլ. բ.

Եջ 92. Փիլ. նախ. Բ. և Լիւս. Տիմ. 52. Յամբլ.
Ստ. 450. Սահմ. 148. ԴՊորփ. 332 ևն.

74. նոյնասերմանք Գ. 65, Եջ 353. Փիլ. Ել.
Բ. 6, Եջ 472.

75. շատաջուր Գ. 59, Եջ 338. Փիլ. իմաստն.

76. ողբերգութիւն Գ. 68, Եջ 362. Թր. 2.
Պիա. 369. 411. Նոն. 37. ողբերգակ Փիլ. լին.
Դ. 211, Եջ 413. ողբերգական խոր. Բ. 92, Եջ
245. Իր. Հերձ. 182 ևն.

77. որպիսութիւն Ա. 16, Եջ 54. Բ. 28, Եջ
146. Փիլ. ժ. բան. Նոն. 11. Դքեր. 110 ևն.

78. ոսոխասէր Գ. 64, Եջ 349. ոսոխասիրու-
թիւն Փիլ. նախ. Ա.

79. ուռճանալ Գ. 62, Եջ 344. Փիլ. Ել. Ա. 9.
Պիա. 383. 414. խոր. առ Արծր. ևն.

80. չափաբերապէս Գ. 62, Եջ 343. չափաբեր
Փիլ. նախ. Բ. չափաբերական Նոն. 48. չափա-
բերութիւն Փիլ. լին. Դ. 19 ևն.

81. պատկանաւոր Ա. 1, Եջ 6. Թր. քեր. 3.
Փիլ. լին. Բ. 3. Իր. Հերձ. 139. Յամբլ. Պէր. 499.
Էլ. Ստ. 33. Դքեր 115 ևն.

82. պատուասիրել Գ. 68, Եջ 361. Նոն. 78.
պատուասէր խոր. Գ. 68, Եջ 364. Փիլ. Լիւս. և
ժ. բան. պատուասիրութիւն Փիլ. Լիւս. ԴՊորփ.
252. Նոն. 50. 81.

83. սականջնել Գ. 65, Եջ 351. շականջել Փիլ.
տես., Եջ 28. շականջանել Փիլ. ժ. բան. 234.

84. սկզբնատիպ Ա. 1. Եջ 6. Փիլ. Ածար. ծն.
և առ որս ևն.

85. ստորնակայ Գ. 65, Եջ 352. ստորնակ Փիլ.

ել. Բ. 117. 119. ստորակայ Փիլ. լին. Ա. 37. Փիլ-
Սամիս., եջ 558. Պիտ. 357 ևն.

86. վարար Բ. 37, եջ 162. Նոննոս 13. վա-
րարել Փիլ. Լիւս.

87. տրոհուֆն Գ. 62, եջ 344. տրոհութիւն Թր.
քեր. 2. Փիլ. ալլար. Պէր. 491 ևն. տրոհել խոր.
Բ. 62, եջ 193. Աահմ. 127. Յամրլ. Պէր. 492.
Դքեր. 88 ևն.

88. փարթամացոցիչ Գ. 68, եջ 362. փար-
թամ Թր. քեր. 18. փարթամանալ Պիտ. 347.
փարթամութիւն Պիտ. 345. 432. Առ որս ևն. բազ-
մափարթամ Պտմ. Աղքս. ևն.

89. փառամոլ Գ. 63, եջ 347, Ոսկ. Յհ. ա. 40.
փառամոլիլ Պիտ. 451. փառամոլութիւն խոր. Բ.
92, եջ 248.

90. փորագրել Գ. 68, եջ 363. Փիլ. Ժ. բան.

91. քաջախոհ Ա. 19, եջ 57. Փիլ. նախ. Բ.

92. քաջամատն Գ. 55, եջ 331. Փիլ. ել. Բ. 34.

93. քաջամարտիկ Ա. 11, եջ 37. Ա. 15, եջ
49. Պիտ. 357. 398.

94. քաջօրէն Գ. 26, եջ 287. Փիլ. իմաստն.
Պտմ. Աղքս., եջ 48.

95. քաջափառութիւն Գ. 48, եջ 319. Պիտ.
346. 438. Փիլ. նախ. Բ. և իմաստն.

96. քերթող Գ. 65, եջ 353. Փիլ. լին. Գ. 16,
եջ 187. Փիլ. Լիւս. 148. Պիտ. 359. Թր. քեր. 1.
Սահմ. 151. ԴՊորփ. 324. Նոն. 22. Ար. Աղխ. 619
ևն ևն.

97. արդեան Գ. 48, եջ 319. Փիլ. Ժ. բան. և
ել. Պիտ. Պտմ. Աղք. 94.

98. հրաշափառագոյն Բ. 92, եջ 245. Գ. 67, եջ 355. Պիտ. 421. 482. Ածաբ. մկրտ. և առ որս.

99. հասողութիւն Ա. 7, եջ 28. Ա. 9, եջ 30. Սահմ. 182. հասուժն Սահմ. 126. Պիա. 496. Փիլ. տեսակ. ևն.

100. երկաքանչիւր Գ. 12, եջ 270. Գ. 29, եջ 291. Պիտ. 441. Փիլ. Նիւա. բն. ևն:

բ. Խորենացու պատմության քննությունից յերև-վում է, վոր նա վոչ միայն ծանոթ է յեղել Պիտոյից-Փիլոնյան խմբի թարգմանություններին, այլ և Արիս-տոտելյան յերկերին ու նրանց մեկնություններին, վորոնցից յերկրորդ խմբի թարգմանման ժամանակը յես վորոշել եյի վեցերորդ դարի յոթանասնական թվա-կաններին, իսկ յերրորդ խմբինը, գլխավորապես, յութերորդ դարում (տես Յուլիանարան Գպրոցը և նրա զարգացման շրջանները, եջ 136 — 142 և եջ 202 — 208):

Ուշագրավ է, որինակ, Խորենացու պատմության հետևյալ հատվածը, վոր քաղված է, հավանորեն, Դավ-թի «Սահմանք իմաստասիրութեան» յերկի համապա-տասխան մի վկայությունից, վորը մատնացույց երարված Գալուստ Տեր-Մկրաչյանի «Հայկականք»-ում (Վաղարշապատ 1894, տես նաև նույն հեղինակի «Դի-տողութիւն» վերնագրով հոգվածը «Հանդէս Ամսօ-րեայ»-ում, 1892, դեկտեմբեր, եջ 372):

Խորեն. Ա. 2, եջ 9՝ «և ուրեք ուրեք գտեալ աշ-խատութեամբ, հաւաքեալ փոխեցին ի յոյն լե-զու, որպէս զԱ (= զաստեղաբաշխութիւն) առ Պ (= քաղդէացիս) և զԹ (= զթուականութիւն) առ Փ (= փիւնիկեցիս) և զԿ (= զերկրաչափութիւն)

առ Ե (= եգիպտացիս) և զՇ (= զերաժշտութիւն)
առ Թ (= Թրակացիս): Եւ ժողովեալ զայսոսիկ
արանց, զորոց և մեք զանուանսն հալաստի գի-
տեմք՝ նուիրեցին ի փառս Հելլենացոց աշխար-
հին»¹:

Սահմ. իմաստ., գլ. ԺԷ, եջ 199՝ «Եւ պարտ է
գիտել, եթէ զթուականն փիւնիկեցիք գտին, որ-
պէս վաճառականք գոլով և թուականութեան պէ-
տըս ունելով առ ի համարել. իսկ զերաժշտա-
կանն Թրակացիք. վասն զի անտի էր Որփևս,
զորմէ ասեն նախ գտանել զերաժշտականն. իսկ
զաստեղաբաշխականն քաղդէացիք. վասն զի ան-
ամպ և հանապազ ջինջ գոլով օդոցն՝ գիւրաւ
կարացին ըմբռնել զշարժմունս աստեղաց. իսկ
զերկրաչափականն եգիպտացիք գտին ի հարկէ»:

Պատմության առաջին գլխում «առաքինութիւն բա-
նականին է խոհականութիւն» Խորենացու խոսքերը (Ա.
1, եջ 6) առնված են, հավանորեն, Արիստոտելին վերա-
գրված «Յազագս առաքինութեանց» յերկի հայերեն
Թարգմանությունից (տես եջ 628՝ «Եւ է խոհմութիւն
առաքինութիւն բանականին»): Վոր Խորենացին ոգ-
արվել է նաև Նոննոսի հայերեն Թարգմանությունից՝

¹ Այս հատվածն առաջին անգամ ուղիղ մեկնել էր Մավալա-
նյանցը (տես «Արշալոյս Արարաբեան» 29 ապր. № 1091, 1678 Թ.),
Պրոֆ. Լևոն Մսերյանցի յենթադրությունը՝ վոր այս հատվածը
կարող է քաղված լինել Եւսեբիոս Կեսարացու «Praeparatio evan-
gelica» աշխատությունից (տես Ученые записки II, Рязань,
Москва 1930, էջ 156—168)՝ դժվար է ընդունել, վորովհետև Prae-
paratio-ի մեջ չեն հիշատակված «թուականութիւն»-ը և «երա-
ժշտութիւն»-ը:

այդ մատնանշված է, ինչպես հայտնի յե, Խալաթյան-
ցի «Армянские Аршакиды» աշխատության մեջ:

Հավանական է, ուրեմն, վոր իրրև ականավոր «քեր-
դող» խորենացին ուսումնասիրած է յեղել բացի Պի-
տոյից-Փիլոնյան խմբի Թարգմանություններէց նաև
հունարան Թարգմանությունների մյուս յերկու խմ-
բերը:

Վոր այս յենթադրությունը հիմնավոր է և ուշա-
դրության արժանի, այդ յերևում է դարձյալ խորե-
նացու լեզվի քննությունից: Պատմության մեջ պա-
տահում են, իրող, այն հատուկ և, գլխավորապես,
հունարան բառերը: Վորոնք առաջին անգամ գործ են
ածվել հունարան այս խմբերում և չեն հանդիպում վոչ
դասական անվանված հնագույն յերկերում, վոչ էլ
Պիտոյից-Փիլոնյան խմբի Թարգմանություններում:

Այդպիսի հետին բառեր են թվում ինձ, որինակ՝

1. հետևանամ փխ. հետևեմ — «և միակն ըստ
կարգի հետևանայ ի Թագաւորութիւն» Բ. 1, եջ
101. «Իսկ յետ այսորիկ զայլսն զամենայն՝ որ
հետևանան» Յամբլ. Պէր. 488. տէս նաև Յամբլ.
Ստոր. 411. Տիմ. 9. 40. 78. ևն. Անան. քեր.
146 ևն..

2. հանուր Ա. 4, եջ 13. Գ. 68. եջ 358. Սահմ.
126. ԴՊարփ. 14. Վերլ. 572 ևն.

3. յարահետեիմ — «յարահետեողք իմաստա-
սիրացն» Գ. 62, եջ 343. «առաջին սահմանն յա-
րահետեի ամենեցունց առնչիցն» Ար. Ստոր. 384.
«յարուցողին յարահետեիմք» Համամ. քերակ. 268.

4. անբանութիւն — «այլ ասես՝ մեզ պատ-
ճառն տալ անբանութեան նոցա» Ա. հավելվ. ա,

եջ 90. «իսկ անասուն, որ է տարբերութիւն, պիտակաբար ասաց, որ է անբանութիւն»։ տես նաև էլ. Ստոր., եջ 96.

5. ապագայ Գ. 66, եջ 354. Գ. 68, եջ 363. Պիտ. 516 (նորագույն հատվածներից մեկում)։ Իքեր. 81. Անյ. բարձ. Լն.

6. բարձրաթոնութիւն Բ. 92, եջ 246. բարձրայօն Մովս. քերդ. տես Գիրք Թղթ., եջ 27. նաև Յհ. կաթ. Լն. բարձրայօնակ Սիւն. առ Գերմ.

7. կենցաղավարութիւն Ա. 21, եջ 65. Սահմ. 209. Դքեր. 89. Ոսկ. Յհ. բ. 2. Էն. կենցաղավարել խոր. Գ. 67, եջ 355. Նոննոս 33. 76. Սա. քեր. 193. Ոսկ. Յհ. ա. 27 Լն.

8. կիսակտուր—«արարեալ սուսերաւ կիսակտուր զգլուխ նորա» Գ. 39, եջ 307. «գթն հովթաւոր, ի կիսակտուր շնական» Սահմ. 166. ունեն նաև Յհ. կաթ. Ասող. Լն.

9. մոլեխինդ—«տան նմա արբուսն, որպէս անդ ուրեմն ի հնումն Աթենացիքն Սոկրատայ զմոլեխինդն» Բ. 92, եջ 247. «յազագս մոլեխինդին Սոկրատայ» Նոննոս 30. ունեն նաև Նիւս. կաղմ. Մեսր. եր. Յհ. կաթ. Լն.

10. պարածածկել Ա. 24, եջ 72. Գ. 9, եջ 267. էլ. Ստոր. 32. Ար. Աշխ. 626. Զաքր. կաթ. Լն. պարածածուկ Մամրէ.

11. վերաբանութիւն—«ի ստոյգ յօգանալ ճեմարանին վերաբանութեան» Գ. 61, եջ 343. «խօսակակից անհամեմատելի վերաբանութեան» Պիտ. 572 (նորագույն հատվածներից մեկում). «զանազանի փոխաբերութիւն վերաբանութեան (αναλογίαι) էլ. Ստոր. 49.

12. փոխարկել Ա. 2, եջ 8. Գ. 29, եջ 291 ևն.
Տիմ. 62. Նոննոս 74. 80. էլ. Ստոր. 132. Գիրք
Թզթ. 38. 155. 213 ևն.

13. ընդդիմակայեմ Գ. 68, եջ 360. ընդդիմա-
կայութիւն Սահմ. 124. ընդդիմակայք գոն էլ.
Ստոր. 12.

14. քաղաքական — «և քաղաքականս ուսանել
կարգս» Ա. 3, եջ 10. «ի քաղաքական շարագրու-
թեանց մի դիտաւորութիւն ունին Արիստոտէլ և
Պլատոն. վասն զի իւրաքանչիւրոք ի գոցանէ
ասէ՝ թէ զիմորդ պարտ է կարգաւորիլ քաղաքի»
Սահմ. 216. ԴՊորփ. 254. Նոննոս ևն. (նոր են,
հաւանորեն, ըստ իրանց հատուկ իմաստի):

գ. Խորենացու պատմութիւնը, վոր գրված է ըստ
